ԳԻՐՔ LXV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 7—8 ՕԳՈՍՏ.–ՍԵՊՏ.

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷԿՏՐԱՇԱՐՔ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ ՊՕԼԻՍ. 7
1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կեանքի փոթորկից. բանաստ. Յար. Պետրոսեան . . . 3

Մի օր. վէպ. վերջ. Արսէն 4

Տ. Գրիգոր Թ. Մուսաբէկեան. Մաղաքիա արքեպս. Օրմանեան 14

Աքսորականները. Ս. ԲօՔՔor 21

Պատմութիւն Սասանեանց. պրոֆ. Կրիմկու. Մ. Շովրեան 28

Նորադոյն պատմագիտութիւն, Կարլ Լամպրեխտի. գերմ. թարգմ. Pessimist 36

Խրիմեան Հայրիկի նամակներ 54

Աղբրի մօտ. Վ. Գ. 63

Շիրվանզադէ. կենսագրական ակնարկ. Հայ 64

Երկու սարսափների պատասխան. Գիւտ Աղանեանց ա. ք. 78

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ 90

Ա. Շահնազարեան Խաւար աշխարհում. Ֆ.-Մ.—Ստացուած գրքեր։

ԱՄՍՈՒԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ 93

Լուրեր։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ 95

Թոքախտի նոր դեղ։ Ամերիկական մի նոր գիւտ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՊԻՈՒՄ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿՏԵՍՆԻ

ԳԻՒԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղութեան

ԳԻՐՔ LXV



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 7—8 ՕԳՈՍՏ.-ՍԵՊՏ.

ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՏ. 7.

1910

*
* *

Կեանքի փոթորկից հալածուած, մենակ
Թռչում եմ հեռուն կայծակ թեւերով,
Զափում սար ու ձոր, երկինք կապուտակ.
Ես չեմ ընկճուի շալակած բեռով:

Կը թռչեմ հեռո՛ւն, կը թռչեմ հեռուն,
Դէպի նոր աշխարհ, նորանոր ափեր,
Անվախ է հոգիս, արիւնս եռուն,
Եւ սրկութեան խզուած են կապեր:

Յար. Պետրոսեան

ՄԻ ՕՐ

(Վերջ)

XIII

Աղջկայ դուրս գնալուց յետոյ, Նատեցի գրասեղանիս մօտ. գրիչը ձեռքս առայ և աշխատեցի կեանքի շէմքին ունեցած տպաւորութիւններս արձանագրել բանաստեղծական տողերով։ Բայց նախքան այդ՝ հայեացքս դարձրի սենեակիս պատից կախած նշանաւոր հասարակական գործիչների պատկերների վրայ և բացականչեցի տխրութեամբ. «Ա՜խ, նախանձում եմ ձեզ, կամքի ոյժի տէր, կորովի բնաւորութեամբ օժտուած մարդիկ, դուք, որ ամեն մի վրտանգի առաջ վհատել, վաստակաբեկուել և խուսափել չ՚կարողացաք ձեր կեանքի պատմութեամբ, ձեր գործերի հմայքներով ինձ կրթել, ճանապարհի բերել և կամք ստեղծել, բնաւորութիւն կազմակերպել իմ մէջ։ Նախանձում եմ ձեզ, իդէալի համար մարտնչող, յաղթանակի յոյզով վառուած, ասպարէզ նետուող, քաջամարտիկ հերոսներ։ Նախանձում եմ ձեզ, մաքրասիրտ մարդիկ, որ մինչև վերջը մնացիք անհաղորդակից կեանքի ապականող ցեխին և եղաք հոգով մաքուր։ Նախանձում եմ ձեզ, ներքուստ այրուում, տոչորուում և ապիկարութեանս գիտակցութեամբ աւաղում»։

Մի քանի րոպէից յետոյ ուշքս ժողովելով և հայեացքս գրեթէ ուժով անջատելով գործիչների նկարներից սթափուեցի։

Ես գրական տաղանդի տէր էի համարում ինձ մինչև այս վերջին օրը։ Ուսանողական տարիներում գիտութեան մէջ եռանդագին պարապելով մոռացել էի գրականական գրիչս, որ գործ էի ածում դպրոցական վերջին տարիներում։ Հայրենի քաղաքումս ես հռչակուել էի իբրև տաղանդաւոր և ապագայ ունեցող բանաստեղծ։ Ոտանաւորներս ձեռքից ձեռք էին անցնում, սիրահար օրիորդներն ու տղաները բերան էին սերտում, եղանակ էին յօրինում և երգում։ Իմ վարք ու բարքս շատերին էր առիթ տուել ինձանում մի մեծ բանաստեղծական ձիրք տեսնելու։ Կան մարդիկ, որոնք այն կարծիքի են, որ բարոյական, բառի բուն նշանակութեամբ մաքուր և անարատ մարդիկ չեն կարող բանաստեղծ լինել, գեղա-

ղուեստական ասպարիզում յաջողութիւն գտնել։ Այդպիսիների աչքում՝ ես մի խոշոր տաղանդ էի կամ պէտք է լինէի։

Եւ ահա այդ «խոշոր տաղանդը» կեանքի շէմքին, ուսանողական շրջանի աւարտին, վերջին միակ օրը փորձել տանել էր ուզում, թէ ինչ է ինքը իրրև գրագէտ,—տաղանդ ունի, թէ զուրկ է նրանից։ Կասկած չունէի բանաստեղծ լինելուս մասին։

Մի թերթ թուղթ քաշեցի առաջս և սկսեցի մտածել գրելու նիւթի մասին։ Ինձ համար պարզուեց ոտանաւորի սիւժէն։ Պիտի ներկայացնէի մէկին, որ կանգնած է կեանքի շէմքին տխուր մըտախոհութիւնների մէջ և համակուած մռայլ տրամադրութեամբ։ Նա գիտէ իւր թուլութիւնը և համոզուած է, որ կեանքը իրան պիտի ջախջախէ իւր անողոք օրէնքներով, ճզմելով ամբողջ էութիւնը կենսական սեղմիչ մեքենաների, անագորոյն պայմանների մէջ։

Մի ամբողջ ժամ գլուխս դրած գրասեղանին, մատերս խրած մազերիս մէջ, մտածում էի։ Դարձուածքներ ու բառեր մէկ մէկու ետևից անցնում էին իմ թոյլ յիշողութեան միջով։ Սկսեցի գրել։ Գրում էի, քիչ յետոյ ջնջում, գրում էի, գրածս սրբագրում և ապա կրկին ջնջոտում չ'հաւանելով գրածիս։ Եւ այսպէս շարունակ մի քանի ժամ։ Մի ներքին դող սոսկ համակել էր իմ մարմինը։ Ձերքերս դողում էին։ Գրիչը մի քանի անգամ ձեռքիցս ընկաւ, պատճառելով ինձ անհուն զայրոյթ։ Ի՞նչ եղանակով էի գրում։ Գրիչս ձեռիս ելնում էի, սենեակիս մէջ արագ մի քանի անգամ անցուդարձ էի անում, իսկոյն նոր գիւտ արած մարդու պէս վազելով գալիս էի գրասեղանի առաջ դրած աթոռի վրայ նստում և սկըսում մի քանի տող գրել։ Քիչ յետոյ վեր էի կենում վերստին առաջուայ գործողութիւնը սկսում, կրկին նստում և առաջուայ տողերը ոչնչացնելով նորերն էի գրում։ Եւ այսպէս շարունակելով բազմաթիւ սպիտակ թերթեր սևացրի ու ոչնչացրի։ Բանաստեղծօրէն չ'կարողացայ ոչինչ արտադրել, լոկ մտքեր, դատողութիւններ էի արտայայտում, բայց նրանց մէջ ստեղծած բան չէի գտնում։ Սաստիկ դժգոհ էի։ Հոգիս տակնուվրայ՝ ամբողջ մարմնով սարսռում էի, ասես թէ մի զարհուրելի յանցանք էի գործել։ Վերջապէս այս անելանելի դրութեան վերջ տալու համար մի նոր թերթ առաջս քաշեցի, մտադրուեցի ինչ էլ որ լինի չ'փոխել այդ թերթը և գրածս չ'ջնջել—թող ինչ կուզէ դուրս գայ գրչիս տակից։ Ինչ որ իմացած—չիմացած բան ունէի այդ խեղճ թերթի վրայ կուտակեցի։ Վերջացնելուց յետոյ մի կծու, դառնալիր քրքիջ դուրս թռաւ կոկորդիցս, գրիչս փշրեցի և հեկեկալով երեսնիվայր ամբողջ մարմնովս փռուեցի մերկ յատակին։

Ես մինչև այդ օրը փայփայում էի մի միտք. եթէ գործի մարդ էլ չ'լինէի, գրագէտ կարող էի լինել, գրչի մարդ անպատճառ կը լինեմ և այդպիսով կարող կը լինեմ օգտակար լինել հասարակութեան։ Եւ այս վերջին մի օրում ոսկի յոյսս չքացաւ՝ իմ սրտում բարձրացնելով վշտի, տանջանքի և ոչնչութեան խորտակիչ գիտակցութեան փոթորիկը։

Ես զգայուն հոգի ունէի. ամեն մի չնչին դէպք, ամեն մի քիչ թէ շատ աչքի ընկնող երևոյթ իմ մէջ յոյզեր էր ծնեցնում։ Երաժշտութիւնն ինձ գերազանցօրէն ազդում էր։ Ես շատ անգամ արտասուում էի մի գեղեցիկ երգ լսելիս կամ մի յուզիչ թատրոնական տեսարան դիտելիս։ Բնութիւնը անչափ գրաւում էր ինձ. սքանչանում էի նրա զմայլեցուցիչ երևոյթներով, սիրում էի մենակութեան մէջ բնութեան հմայքները վայելել։ Այս բոլորն իմ գիտակցութեան մէջ հաստատել էին գրագէտ-բանաստեղծ լինելուս յոյսը։ Իսկ այսօր համոզւում էի, որ զգացուելը, շատ զգացումներ և մտքեր ունենալը, գեղեցիկ սիւժէներ յօրինելը դեռ բաւական չէ, պէտք է իմանալ արտայայտել, պէտք է բնութիւնից օժտուած լինել տաղանդով, աստուածային կայծ ունենալ հոգու մէջ, մի խօսքով—ծնուել։

Յատակից բարձրանալով՝ այդ երեկոյի բոլոր խոհերիս և մրտորումներիս էութիւնը ձևակերպեցի այս խօսքերով. միտքը բրոնաբարելով բան չի դուրս գալ։ Ես տաղանդից զուրկ եմ և իբրև գրագէտ—ոչինչ։

XIV

Ուսանողների մի ստուար խումբ դեռ նոր դուրս եկան իմ, նորաւարտիս՝ սենեակից, թողնելով ուսանողական կացարանս անկարգ վիճակի մէջ. այս ու այն կողմ թափթփուած աթոռներ, բազկաթոռներ, լուսամուտների առաջ դրուած գրասեղանիս վրայ բազմաթիւ խառնիխուռն գրքեր, օրաթերթերի համարներ, այլ և այլ հանդէսներ։

Մնացի մենակ։ Գրասեղանիս մի անկիւնում ընկած էր մի քառածալ հաստ թուղթ։ Դա իմ այդ օր ստացած աւարտմանս վկայագիրն էր, որի համար էլ եկել էին ընկերներս և շնորհաւորել՝ իմ «կեանքի մարդ» դառնալս։ Տխուր էի։ Թէև ընկերներս հարկադրել էին ուրախ լինելու, բայց սրտանց թախծոտ էի, մռայլ ու անմխիթար։ Մի զօրեղ վիշտ ճնշել էր հոգիս։ Վաղը պէտք է ճանապարհ ընկնէի հայրենիք։ Այդ մասին նախապէս հեռագրել էի հօրս։ Յապաղել չէի կարող։ Ես գոհ չէի, որ հետզհետէ մօտենում

է հայրենիք ճանապարհուելու ժամը։ Հազիւ մէկ օր էր մնում։ Անվերջ կերպով սիրտս կրծում էր մի ծանր հարց. ի՞նչ եմ տանում հայրենիք։ Եւ պարզ կարողանում էի տալ այս հարցի պատասխանը, սկսելով իմ ուսանողական վերջին երկայնաձիգ խորհրդածութիւններս, թէև այդ խոստովանութիւնը լցնում էր հոգիս դառնութեան լեղիով։

Ի՞նչ եմ տանում հայրենիք,—հարցնում էի կրկին,—արդեօք մեծ գիտութիւն, ուսո՞ւմ, գործելու անսպառ եռանդ։ Ո՛չ։ Ես դատարկ եկել եմ և դատարկ էլ գնում եմ։ Թող այս խօսքերն այրեն իմ հոգին. բայց սրանց մէջ ճշմարտութիւնն է խօսում։ Անժամանակ հոգիս փչացնելով, յիշողութիւնս էլ մի զօրեղ հարուած ստացաւ, որից յետոյ ինձ համար դժբախտութեան նոր դուռ բացուեց։ Տարեկան անթիւ գրքեր և յօդուածներ եմ կարդում, բայց նրանցից յիշողութեանս մէջ գրեթէ ոչինչ չի մնում։ Այսօր կարդացածս վաղը մոռանում եմ։ Սիզիֆեա՛ն աշխատանք։ Ինձ տանջում եմ որևէ բան յիշողութեանս մէջ պահելու համար։ Ես ոչինչ չ՛գիտեմ։ Ամփոփ գիտութիւն չեմ կարողացել ստանալ, այլ միայն հատուկտոր տեղեկութիւններ, վայրի վերոյ ծանօթութիւններ, այն էլ մի քանի ժամանակից յետոյ մոռանալու համար։ Այս բոլորից յետոյ՝ ի՞նչ եմ տանում հայրենիք։ Թերևս գործելու ընդունակութիւն, տոկունութիւն, ոգի։ Ո՛չ և ո՛չ։ Իմ եռուն ցանկութիւնս—մշակել կամքի ոյժ—զո՞ւր անցաւ։ Չի կարելի տգեղին գեղեցկացնել, սատանային հրեշտակ շինել, ոչնչից բան ստեղծել։ Ես ժառանգել էի կամազուրկութիւն։ Եւ մինչև այսօր այդ զարհուրելի աւանդը պահում եմ, տանջուելով այն գիտակցութեան մէջ, որ ես կեանքում չեմ կարող ինքնուրոյն լինել, գործել, իդէալներ պաշտպանել, որևէ սկզբունքի հովանաւորութեան դրօշակ առնել ձեռքս։ Ահա անցան իմ ուսանողական տարիներս, արդեօք կարող եմ իմ այսպիսի հարցի պատասխան տալ՝ ի՞նչ գոյնի է իմ կաշին։ Կեանքն իմ առաջ կանգնած այժմ այս հարցն է ինձ ուղղում։ Ի՞նչ եմ կարող պատասխանել նրան։ Գրեթէ ոչինչ կամ մի անորոշ պատասխան, ինչպէս որ անորոշ է իմ հոգին իւր հակասական վիճակներով։ Ես չունիմ ո՛չ մի պաշտամունք։ Իդէալի, համոզմունքի պաշտամունքը պակասում է իմ մէջ։ Ես անգոյն մի էակ եմ, աշնանային մի տերև, որ ենթարկուած պիտի մնայ հողմի քմահաճոյքներին։ Ես զուրկ եմ բնաւորութիւնից. մինչև այժմ չեմ մշակել ինձ համար որոշ ուղղութիւն, որոշ դաւանանք։ Ես ոչինչ եմ իբրև գործի մարդ։ Ինձ պակասում են գործունէութեան շարժիչ ոյժեր։ Ես նման եմ այն նաւաստիին, որ ծով է դուրս գալիս անթիակ նաւակով։ Ընկերութեան, հասարակութեան մէջ՝ ի՞նչ դեր կարող եմ

կատարել, հասարակական ի՞նչ բեռ կարող եմ իմ թոյլ ուսերին կրել։ Ցիշում եմ, երբեմն ինձ ընդգրկում էր փառքի եռուն տենչը. նրան բաւականութիւն, յագեցում տալու համար միջոցներ էի առնում։ Այդպիսի բոպէներին համոզուեցի, որ ես կուլտուրական կռուի համար անպատրաստ մէկն եմ։ Թերևս ես կարողանամ կռուել ուրիշ մարտնչողների շարքերում, որով իմ անհատական ապիկարութիւնս աննկատելի կ'մնայ, բայց ես մենակ, իմ սեփական ոյժերով մաքառելու համար, կեանքին ընթացք տալու և շրջաններ ու մարդկանց համակրանքներ գրաւելու համար անզօր եմ, տկար և ապիկար։ Ես թշուառ մէկն եմ։ Կարօտ եմ առաջնորդուելու, հովանաւորուելու։ Ես պէտք է առաջնորդեմ և հովանաւորեմ մարդկանց, որքան էլ նրանք տգէտ, խեղճ ու արգահատելի լինեն։ Գործելու համար պէտք է ունենալ եռանդ, ոգևորութիւն, սէր և հաւատ դէպի յաջողութիւնը,—սրանք իմ մէջ մարել են այն օրից, երբ ես գիտակցել սկսեցի իմ ոչնչութիւնը։ Իմ մէջ բացակայում է որոշ հաստատուն և ձևաւորուած աշխարհայեացքի, սկզբունքների գոյութիւնը։ Իսկ այսպիսի մի աննախանձելի վիճակը պէտք է առաջնորդի ինձ դէպի գործի և խօսքի հակասութիւն, դէպի անհասկանալի մի դրութիւն։ Իմ խիստ փոփոխական բնաւորութեամբ պէտք է յարմարուիմ պայմաններին, հանգամանքներին և պէտք է ճամբայ բռնեմ այն հոսանքով, որտեղից հողմն է փչում, իսկ սկզբունքներս, ուղղութիւնս զգեստի նման պիտի փոխեմ։ Ինձ թւում էր, թէ գրականութեան մէջ իմ կարծեցեալ քանքարի շնորհիւ տեղ կ'բռնեմ, կը կարողանամ շահաւէտ լինել ընդհանրութեան. բայց դառն փորձը այդ յոյսն ևս ջուրը նետեց։

Այսպէս խորհրդածելով շրջում էի սենեակում։ Երբեմնապէս կանգ առնելով շփում էի ճակատս, յետ մղելով նրա վրայ թափուած երկայնաձիգ մազերը։ Վարեան մտել էր սենեակս և հաւաքում էր իրեղէններս ճամպրուկի մէջ։ Նրան այս կամ այն պատուէրը տալուց յետոյ՝ թաղւում էի խորհրդածութիւններիս մէջ, համակուելով վշտի ճնշիչ ծանրութեամբ։

Գնում եմ հայրենիք,—տխուր շեշտով ասում էի մտովի,—վճռուած բան է։ Հայրենիք։ Ի՞նչ կայ այնտեղ։ Ամենից առաջ իմ դիմաց կանգնած է մի ընտանիք, որին անկեալ դրութիւնից հանելը սրբազան պարտքս էի համարում։ Նրա դէմ կուելու համար ես փախայ և եկայ այստեղ։ Նոր-նոր դէնքերով և հզօրութեան գիտակցութեամբ օժտուելու էի ձգտում հայրական տան դէմ մղած կռուի մէջ յաղթանակը տանելու համար։ Ես մտադրուել էի այդ տունը հանել կրքոտ բռնակալի իշխանութեան տակից, խեղճ մօրս փրկել նրա ճիրաններից, թողնելով ազատ շնչել, քոյրերիս ազա-

տել նրա ծանր լծից, որի պատճառով միայն նրանք այն սրիկայ ուսուցչից խաբուեցան և իրանց կուսական անմեղութիւնը զոհ բերին։ Եւ մի՞թէ քոյրերս էին մեղաւոր։ Ո՛չ, հաղար անգամ ո՛չ։ Նրանց փակել են տանը։ Ճնշում են։ Թոյլ չեն տալիս դրսի աշխարհի հետ շփուել, մտքեր փոխանակել, բան հասկանալ, զարգանալ։ Աղջիկ է, ուրեմն իրաւունք չունի տղաների պէս ազատ լինելու։ Եւ ահա գալիս է մի գեղեցիկ օր, աշխարհից անտեղեակ այդ խեղճ գառնուկները զոհ են բերում իրանց ամենաթանկագին բանը աշխարհում—պատիւը։ Այն ինչ այդպէս չեն վարուում կրտսեր եղբօրս հետ։ Նա ազատ է, ինքնագլուխ։ Կարող է անել՝ ինչ ուզում է, ինչ թելադրում է երիտասարդական քմահաճոյքը։ Եւ այդ բոլորն անելով՝ նա անհամեմատ լաւ վիճակ ունի այդ բռնութեան մէջ։ Իրաւունք ունի, որովհետև տղամարդ է։ «Տղամարդ»։ Այս միակ բառը մի ամբողջ հսկայական իմաստ ունի իւր մէջ։ Նա մենաշնորհ է տալիս այդ անունը կրող անհատին։ Նրա առաջ բաց է անում ազատութեան և անկախութեան լայն դռները։ «Կին»։ Այդ բառը հոմանիշ է ստրկութեան, անասնական վիճակի և հպատակութեան։ Ես պիտի կռուեմ հայրենիքում, հայրական յարկիս տակ տիրող այս անճոռնութիւնների դէմ։ Ես պէտք է գործ ունենամ մի բռնակալի հետ, որ ունի կամքի զօրեղ ոյժ և արիութիւն։ Նա հէնց առաջին ճակատում ինձ փշուր-փշուր կանէ։ Ինձ նման մի ոչնչութիւն ի՞նչպէս կարող է նրա պէս մի հսկայի դէմ դուրս գալ իրրև մաքառող և թոյլերի իրաւունքներ պաշտպանող։ Կարելի է մի՞թէ պարսատիկով զինուած պայքար մտնել հրացանաւորի հետ։ Կեանքի ասպարէզ պէտք է իջնեն նրանք, որոնք զինուած են և պատրաստ, առողջ են և հաստատակամ, հակառակ դէպքում կեանքի հասարակական և հոգեկան բարեշրջման ժամանակ բոլոր ստրկամիտ, թոյլ և հոգեպէս անկարողները նոյնքան անխուսափելի կերպով կ'ընկնեն, որքան անխուսափելի կերպով թափում են ծառից բոլորովին դեղնած և թառամած տերևները։ Ես չեմ կարող դուրս գալ կեանքի մեծ կռուի դաշտը, ճակատամարտի բեմը։ Երբէք չեմ սիրել խոր ձորերը, մթին անդունդները, սոսկալի բարձունքները, ահեղագոչ փոթորիկները և որոտնդոստ քամու սարսափելի գալարումները, այլ առաւելապէս համակուել եմ բնութեան մեղմ, քնքոյշ, հանդարտ ու շոյիչ տեսարաններով։ Եւ այժմ կարօտ է սիրտս արդարութեան և յաղթանակի, բայց ափսո՜ս, որ պակասում են նրանում ոյժի, կամքի և անսայթաք հետևողականութեան գործօնները։ Միտքս, գիտակցութիւնս ասում է, որ անպայման կոչնչանամ այդ յամառ կռուի մէջ, կը պարտուեմ։ Ուրեմն էլ ինչու գնամ, գնամ ջարդուելու, խայտառակուելու, խաղք ու

խայտառակ, նշաւակութեան առարկայ լինելու։ Ո՛չ։ Այդքան զօրութիւն չունիմ։ Ես մեծ մարդ կը լինէի, եթէ թոյլ ոյժերովս կարողանայի կռուել և զէնքը ձեռքիս, առանց անձատուր լինելու մեռնել։ Բոլոր մեծ մարդիկ մեծ ոյժեր չեն ունեցել։ Մեծ զօրութիւն ունենալը դեռ մեծութեան նշան չէ։ Ունիս պատրաստակամութիւն, պատրաստ. ես փառքի փոխարէն մահուան դիմաւորելու։ Այն ժամանակ, ի հարկէ, մեծ մարդ ես։ Ես փոքր մարդ եմ, մի տափակութիւն։ Եւ ոյժ չունեմ զոհուելու այն նպատակի համար, որ սկզբից և եթ ճանաչել եմ իբրև իմ ամենագլխաւոր իդէալական խնդիրը և երբէք չ՚կարողացայ այդ իդէալի պէտքական գործիքը դառնալ։ Ես այն օրը մեռայ, երբ հաւատս դէպի իմ ոյժերը կորաւ. զգացի, որ ոտքերիս տակ գտնուած կռուանը տատանուեց և շուրջս տեսայ լոկ անկեանք ու անհրապոյր անապատ։ Անյայտացաւ ամեն ինչ ինձ համար եւ իդեալ։ Մընաց միայն մի հրէշաւոր բան—ապիկարութիւնս, որ ցցուելով իմ կեանքի սպանդանոցի դիմաց աղաղակում է. «դու ինձ սպանեցիր, հայրական տուն»։

Ես շատ ուրախ կ՚լինէի, եթէ հայրենիքում դիմացս կանգնած լինէր միայն օգնութիւն աղերսող իմ հայրական տունը. բայց ես ուրիշ արգելքներ, տարօրինակ խոչնդոտներ եմ յարուցել ճանբիս վրայ, իմ անխոհեմութեան և անհեռատեսութեան պատճառով։ Պարտականութեան և սիրոյ կապերով շղթայել եմ ինձ երկու անձերի հետ—գիւղատնտեսի և դայեակի, Արմայիսի և Լուսիկի հետ։ Դրանցից առաջինը մեծ սպասելիքներ ունի ինձանից։ Նամակներիս մէջ գեղեցիկ ծրագիրներ էի տալիս, գործունէութեան հեռապատկերներ ընդգծում. Ռուբէնեանը շատ ուրախ էր, որ մեր ուսանողութեան մէջ տեսնում է ինձ նման բարձր գաղափարներով ոգեսրուած, գործունէութեան և յառաջադիմութեան նախանձախնդիր մէկը, որ խոստանում էր իւր ամբողջ ոյժերը նուիրել ժողովրդի, հասարակութեան շահերին և նրա լուսաւորութեան վսեմ, պայծառ գործին։ Իսկ այժմ, ես, նամակների հերոսս, կեանքի մէջ իմ ընկերոջ առաջ մի չնչին գաճաճ պիտիներկայանամ։ Տէր Աստուած, ինչպէս չէի ամաչում նամակներիս մէջ այնպիսի խոստումներ անելուց։ Վաղը ինչ երեսով պիտի կանգնեմ նրա առաջ։ Կեանք եմ դուրս գալիս յուսահատուած, հաւատս կորցրած դէպի ոյժերս, կասկածաւոր դէպի նպատակներս։ Ի՞նչ կարելի է սպասել այսպիսի մի անհատից, որ միայն վարժ է խօսելու և ճամարտակելու մէջ, իսկ գործունէութեան, կեանքի և աշխարհի առաջ անպէտք ու անյամար։ Գործ,—ընաւ և երբէք։

Իսկ ինչպէս պիտի վարուեմ այն խեղճ աղջկայ հետ, որին

նոյնպէս անպատկառօրէն խաբել եմ սիրոյ, հաւատարմութեան և անձնուրացութեան երդումներով։ Ի՞նչ պիտի ասեմ նրան։ Արդեօք պիտի շարունակեմ կեղծել, թէ ի՞նչպէս։ Նա ինձանից իրաւունք ունի պահանջել թարմութիւն, երիտասարդական աշխոյժ, գործելու եռանդ, սիրող սիրտ։ Իսկ ես ի՞նչ պիտի տամ նրան, եթէ մինչև անգամ կարողանամ սիրել,—վաղաժամ ծերացած հոգի, թուլութիւն, սիրոյ համար փակ մի սիրտ։ Վէ՞րջը։ Վերջն այն կը լինի, որ կ'սկսուի մի կատակերգութիւն, որի մէջ ստիպուած պիտի լինեմ գլխաւոր և պատասխանատու դերը խաղալ։ Գոնէ այն միջավայրը, ուր քարշ պիտի տամ իմ աւելորդ գոյութիւնը, լինէր աւելի մաքուր, բարձր և վսեմ սցնող, գոնէ թոյլ անպատրաստ և կեղտոտ բնաւորութիւնները իւր բովի մէջ դարձնէր ուժեղ ու մաքուր։ Ես այնտեղ աւելի կըսուզուեմ ճահճի մէջ մինչև կոկորդս-այո, ես հաւատացած եմ, չէ՞ որ իմ բնաւորութեան վատ սաղմերը ստացել եմ հէնց այդ նոյն միջավայրից։ Եթէ մեր հասարակութեան կեանքը լինէր մի այնպիսի զտիչ, մաքրող քուրա, որ կազմակերպէր իւր մէջ պակասաւոր անհատներին։ Է՜հ, մտածել անգամ չարժէ։

Գնում եմ հայրենիք։ Ինչո՞ւ։ Գուցէ հայրենիք եմ գնում Լուսիկի հետ ամուսնանալու և զաւակներ առաջ բերելու համար։ Ծիծաղելի է, ծիծաղելի։ Ես պարզ գիտեմ, որ ինձանից անսպասելի է այդպիսի մի բան։ Սերունդ թողնել։ Լաւ դիցուք թէ թողեցի։ Ի՞նչ կ'լինի վիճակը։ Առողջ։ Բնաւ և երբէք։ Առողջ ծառը միայն կարող է տալ առողջ պտուղներ։ Փչացած, վատ ու անպէտք ծառը չի կարելի պատուաստելով լաւացնել։ Արի ու գնա հայրենիք։ Թէկուզ հէնց դիպլոմը գրպանումդ։ Ինչացո՞ւ ես։ Ի՞նչ նշաւակելի վիճակ, ի՞նչ ողորմելի դրութիւն։ Եթէ ատամս ցաւէր, ես առանց այլևայլութեան, առանց երկար ու բարակ մտածելու կ'հանէի և դէն կ'ձգէի։ Այո՛, համոզուած եմ, որ այդպէս կ'վարուեմ, որովհետև դա ինքնին մի դժուարին գործ չէ։ Բայց ի՞նչպէս անեմ, երբ ամբողջ հոգիս է փչացած, երբ ոտքից—գլուխ կեղտի, ապականութեան և զարշութեան մէջ եմ թաղուած։ Մի հեշտ ու կտրուկ պատասխան կարելի է տալ—պէտք է մեռնել։ Մեռնե՞լ։ Այո՛, շատ ցանկալի միջոց, մի միջոց, որ հնարաւորութիւն կ'տայ ազատուելու անթիւ վշտերից, սրտամաշ մտքերից։ Բայց... Հեշտ չէ։ Դրա համար ոյժ, խիզախութիւն է հարկաւոր։ Ես զուրկ եմ դրանցից։ Հոգեկան զօրութիւն, վճռականութիւն չունիմ, պատրաստ չեմ այդպիսի մի քայլ քայլ անելու. կամազուրկ եմ, թուլամորթ։ Ուրեմն ի՞նչ ճանապարհ գտնեմ։ Եւ մի՞թէ կարող եմ ճանապարհ գտնել։ Ես, որ մի ամենաչնչին գործ անգամ կատարելու համար արհեստականօրէն

լարում, գրգռում եմ ջղերս, կարող եմ այսպիսի մի կտրուկ քայլ անել դէպի վճռականը, հանգստացնելով ինձ ընդմիշտ։ Փառք այն միջավայրին և ընտանիքին, որ ինձպէս հերոսներ ծնել գիտէ։

Վերջին խօսքերը կծու և հեգնախառն եղանակով արտասանելուց յետոյ երեսն ի վայր ընկայ անկողնից թափուր մահճակալիս վրայ։ Սկսեցի հեղձամղձուկ ձայնով հեկեկալ։ Մաղերս պոկում և փռում էի յատակին։ Վարեան ներս մտնելով և այս ողորմելի տեսարանին ականատես լինելով՝ առժամապէս յանկարծակիի եկածի պէս մնաց ապշած։ Ապա մօտ եկաւ. բռնեց ձեռքիցս և խանգարեց իմ կանացիական գործը—մազերիս փետումը։ Դիպլոմաւորս ուշքի եկայ, վեր թռայ և նստեցի։

«Վարեա՛,—կարող ես ինձ սպանել։ Ա՜յ, ատրճանակս գզրոցի մէջ է, կամ դուցէ վերցրել և դրել ես ճամպրուկիս մէջ, շուտ բեր և սպանիր ինձ։ Ես այլևս զուր եմ ապրում։ Կենսասիրութիւնը, որ բաւական զօրեղ էր իմ մէջ և չէր ենթարկւում իմ խոհականութեան, ես ուզում եմ այժմ բռնի կերպով խեղդել։ Կեանքն այլևս չեմ սիրում, ատում եմ նրան։ Աւելորդ է իմ կեանքն աշխարհում։ Ես զուր եմ ուրիշների շնչելի օդն ապականում։ Բեր և սպանիր, սպասում եմ։

Երիտասարդ աղախինս զգալով թէ բանը ինչումն է, նստեց ինձ մօտ, սկսեց շփել ճակատս, ապա ջուր տուեց խմելու։ Մխիթարիչ խօսքեր էր ասում։

—Այս երկրորդ անգամն է ձեզանից ինքնասպանութեան մասին խօսք եմ լսում։ Մի՞թէ այդ միտքը դեռ ձեր գլխից չէք հանել։ Ասացէք, խնդրեմ, կեանքի շէմքին կարելի՞ է այդպիսի բանի մասին մտածել։ Այն ինչ այս վերջին մի օրը դուք գրեթէ ամբողջովին կերպարանափոխուել էք ֆիզիքապէս և հոգեպէս. ձեր դէմքը մեռելատիպ է, միշտ յուզուած էք։ Արիացէք, հայրենիքը ձեզ կը փրկի։ Դուցէ այստեղի օդը ձեզ վրայ վատ է ազդել։ Հայրենիքում կըկազդուրուէք։ Հայրենի օդը միշտ առողջարար է իւր զաւակների համար։ Հայրենիքիդ կլիման, նրա բնակիչները, նոր կեանքի հայրենաշունչ պայմանները ձեզ նոր ոգի կը տան։ Կըտեսնէք, որ ձեր ոյժերը վերադառնում են, դուք զուարթանում էք։ Եւ, վերջապէս, ի՞նչ յուսահատուելու բան կայ։ Ասում էք, քիչ ոյժեր ունէք։ Շատ լաւ, ընդունենք, որ այդպէս է, բայց դուք մի՞թէ հայրենիքում մենակ պիտի լինիք։ Մի՞թէ դուք չունիք սրբտակից բարեկամներ։ Մի՞թէ ձեզ համար այնտեղ չեն բաբախում սիրող սրտեր։ Ասացէք, մի՞թէ զուրկ էք այս բոլորից։ Կեանքի շէմքին ինչո՞ւ այդպէս ողբերգական վիճակ էք ստեղծել ձեզ համար։

«Վարեա՛, ես անչափ ուրախ կըլինէի, եթէ մինչև այժմ ապ-

բած կեանքս մի երազ լինէր։ Ես կարթնանայի և նոր կեանքով կապրէի։ Զէ՞ որ արթնանալով՝ երազում մեր զգացածը, մտածածը և գործածը ժխտում ենք իբրև մեզ չը պատկանող. կարծես այդ բոլորը զգացողը կամ գործողը մենք չենք եղել, այլ մի ուրիշը, կամ աւելի լաւ է ասել՝ այդ բոլորը մենք ստիպուած ենք եղել զգալ, մտածել և գործել. մենք կարողութիւն չենք ունեցել խուսափել մեր սեփական հոգու այդ գործողութիւններից։ Սակայն ես քիչ առաջ ասածներդ մոռացայ. ի՞նչ էր ասում, հա, յիշեցի. ոչ, ոչ Վարեան, դու երբէք՝ չես կարողացել ինձ հասկանալ, լիովին ըմբռնել։

—Այդտեղ ես ոչ մի տարօրինակութիւն չեմ տեսնում։ Ի հարկէ, ես, օտարուհիս, ձեզ դժուարութեամբ կը հասկանամ. գնացէք հայրենիք և ձեզ հասկացող աղջիկներ շատ կը գտնուին։ Նրանց հետ ձեռք ձեռքի տուած, միմեանց հասկանալով դուք կարող էք օգուտ բերել ձեր ժողովրդին, որի ցաւերի մասին ինձ հետ դուք շատ անգամ առիթ էք ունեցել խօսելու։

«Վարեա՛, ուրեմն գնամ հայրենիք և վիճակս ու բախտս յանձնեմ ճակատագրին, իմ թոյլ ոյժերով ասպարէզ ելնեմ, սկսեմ գործել,—ասացի խղճալի ձայնով և գրեթէ լալկան եղանակով, ինքս էլ ամաչելով իմ տուած հարցերից։

—Այո՛, գնա՛,—շեշտեց Վարեան դրականօրէն,—և երջանկութեանդ բանալին դիր ճակատագրի ձեռքին. նա մարդկանց չափ անգութ չի լինիլ։ Մի՞թէ չը գիտէք, որ դաշտերը միագոյն և միատեսակ ծաղիկներով չեն պճնուում, զարդարուում. մի՞թէ չը գիտէք, որ աշխարհում միայն առիւծի որոտացող ձայնը չի հնչուում, կայ նաև ճնճղուկի մեղմ, քնքոյշ և փոքրիկ ծըլվլոց... Զարժէ յուսահատուել, ամենքին տեղ կայ կեանքում։

«Լինում են րոպէներ, մանաւանդ այս վերջին օրուայ ընթացքում, ես հեռու եմ վանում յուսահատութիւնը և աշխատում եմ կեանքին պայծառ և անպղտոր հայեացքով նայել։ Ես աշխատում եմ ինձ ոգի ներշնչել, ոգևորել։ Եւ յանկարծ վայրկենապէս իմ մէջ բորբոքուում է ինչ որ մեծ ու անսահման հզօրութեան մի երջանիկ գիտակցութիւն։ Բայց միայն մի րոպէ, այնուհետև վրաս մի այնպիսի սառնութիւն է գալիս, մի այնպիսի սոսկալի սառնութիւն, սկսում եմ ատել թէ իմ կեղծ ոգևորութիւնը, թէ դիւրազգայնութիւնս և թէ ամբողջ էութիւնս։

***

Միւս օրը կանուխ առաւօտեան ճանապարհուեցի հայրենիք...

Արսէն

Տ. ԳՐԻԳՈՐ Թ. ՄՈՒՍԱԲԷԳԵԱՆ[1]

227. Մուսաբէգեան Գրիգորը կաթողիկոսներու շարքին մէջ կը դնեմք վստահօրէն, թէպէտ կան որ անոր անունը զանց կ'ընեն (Զամբռ 17), և մեզի համամիտ կը գտնուի ժամանակակից Մեծոփեցին (Կոստ. 63), իսկ ընտրութեան թուական պէտք է ընդունել նոյն իսկ Կոստանդին Վահկացիի մահուան տարին (1439)։ Իւր անցեալը մեզ անծանօթ է, միայն սովորական դարձած մականունը գուշակել կուտայ թէ ազդեցիկ և ազնուական տունէ էր, հաւանաբար Մովսէս Իշխանի մը զաւակ, որ օտար բառով Մուսա Բէգ կամ Մուսա Պէյ կոչուած կ'երևի։ Կանոնական պայմանները զանց եղած կ'երևին իւր ընտրութեան մասին, զի նոյն իսկ ծիսական օրէնքով պահանջուած եպիսկոպոսներու թիւը չէր գտնուէր, և ինքն անմիջապէս ընտրութեան ատեն եօթը նոր եպիսկոպոսներ կը ձեռնադրէ (Կոստ. 63) իրեն ոյժ ճարելու համար։ Որչափ որ յիշատակներ կան մեզի հասած, ամենն ալ Գրիգորը կաթողիկոսութեան անարժան կը նկատեն, և բազմադիմի մեղադրանքներու ներքև ինկած ըլլալը կը հաւաստեն. զայս Մեծոփեցին ընդհանուր կերպով կը յիշէ. թէ Բաղայս անուղղայս եղեալ ունէր ի վերայ ինքեան (Կոստ. 63)։ Ուստի աներկբայապէս կրնանք հետևցնել թէ երբ Կոստանդին վախճանեցաւ կամ սպանուեցաւ, և աթոռը անկարգութեան մատնուեցաւ, և ամէն մէկը սկսաւ անոր հետամուտ

---

[1] Անցեալ 1903 տարւոյ Մուրճ ամսաթերթի յուլիսի և օգոստոսի պրակներուն մէջ Պատմասէր ստորագրութեամբ հրատարակած եմք Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռոյն Էջմիածին վերադառնալը, Էջմիածնի հազար վեց հարիւր ամեակի առթիւ, քաղելով մեր սոյն այս աշխատութենէն։ Լումայի ընթերցողները պատմութեան ամբողջութենէն չզրկելու համար, հարկ կը սեպենք այստեղ ալ նոյն նիւթը տալ, և շարունակել մեր պատմական յօդուածներուն ընթացքը, պահանջուած բարեփոխութիւններով և յաւելուածներով։

Մ. Ա. Օ.

ըլլալ, և Ցովսէփ երէցն ալ յայտնապէս թեկնածութեան սկսաւ, Գրիգոր եպիսկոպոս իւր տոհմին ու միջոցներուն ազդեցութեամբ զօրացաւ, և քաղաքական օտարազգի իշխանութեան օգնութեամբ յաջողեցաւ աթոռին տիրանալ։

228. Գրիգորի կաթողիկոսական գործունէութենէն բնաւ յիշատակութիւն չունենք մեր գիրքերուն մէջ, որոնց մէջ և ոչ իսկ անուղղակի ակնարկ մը կայ Փլորենտիոյ ժողովին հետևութեանցը վրայ։ Կաֆացի պատգամաւորներուն երթալը ու դառնալը, և Եւգինէոս Դ պապին հրահանգը անծանօթ են ազգային յիշատակներուն մէջ։ Լատիններ միայն կը յիշեն, թէ Փլորենտիոյ հրահանգին յաջորդ տարին (1440), Եղբայր Ալբերտոս անուն լատին կրօնաւորի մը ձեռքով և Գրիգոր կաթողիկոսի անունով թուղթ մը եկած է Եւգինէոսի։ Այս գիրին մէջ Գրիգոր կը յայտնէ թէ իրեն հասած է Եւգինէոսի արեգակնափայլ եւ երկնահանդէտ կոնդակը, որ է բարեկարգիչ կաթողիկեայց ըստ ծիսի նախնի հարց (Ազարեան 104)։ Այդ միակ յիշատակն է զոր օտարներ յառաջ կը բերեն, բայց քանի որ մերայինք բոլորովին կ'անգիտանան Եւգինէոսի հրահանգն ալ և Գրիգորի պատասխանն ալ, իրաւունք կ'ունենանք ըսելու, թէ այդ պատասխանն ալ միևնոյն Կաֆացիներու գործն է, որոնք իրենց Դենուացի տէրերուն ազդեցութեան ներքև պատգամաւորութիւնն ալ կազմեցին և միութեան ճիգեր թափեցին։ Նկատողութեան արժանի է, որ ժամանակին Գրիգորի անձը ամէն տեսակ քննադատութեանց ենթարկուեցաւ Արևելեայներու կողմէն, և իւր ամէն գործերը իբր ամբաստանութիւն յիշուեցան, և հարկաւ լատինաց հետ կնքած միաբանութեան գիրն ալ յիշուած կ'ըլլար Մեծոփեցիէն, եթէ իրօք Սիսէն գիր մը գացած ըլլար Հռոմի պապին։

229. Նշանաւորագոյն պարագայ պէտք է յառաջ բերենք Լուսաւորչի Աջին կորսուիլը, զոր կը յիշեն ժամանակակից յիշատակարաններ թէ Ցայսմ ամի (պղ—1441) դարձեալ յայլ իմն պատահումն հանդիպեցաւ Հայոց ազգիս, քանզի Աջ սուրբ Լուսաւորչին մերոյ որ կայր հիմի քանի ժամանակ, անյայտ եղաւ, ոչ գիտեմք թէ գողացան, եւ ոչ գիտեմք թէ ինքն զինքն ծածկեց, եւ ի մեծ նեղութիւն կան եւ ի տրտմութիւն Հայոց ազգս, վասն այս պատճառի. եւ զկաթողիկոսն Գրիգոր բազում չարչարեցին, եւ այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Աջին Լուսաւորչին, եւ ոչ գտին զնա (Փիրղալէմեան 125)։ Այս յիշատակարանը նոյն տարւոյ առաջին ամիսներուն գրուած լինելով (1441 մարտ 15), Աջին անյայտ լինելն ալ նոյն տարւայ սկզբները կամ նախորդ տարւայ վերջերը պէտք է դնել։ Ազգին մէջ այն հաստատուն համոզումը գոյացած է, թէ Աջին անյայտանալը Արևելեայ վարդապետներուն մէկ հընարքն եղած է, որոնք երբ բանակցութիւններէ և խորհրդակ-

ցութիւններէ ետքը աթոռը Սիսէ Էջմիածին փոխադրելու որոշումը տուին, նախևառաջ Աջը Սիսէ հանեցին իրենց համամիտ և բարեկամ Սսեցի եպիսկոպոսներու օգնութեամբ, գիտնալով թէ ազգն անխախտ հաւատք մը ունէր, թէ հայրապետական աթոռին վաւերականութեան զօրութիւնը Լուսաւորչի Աջէն է, և թէ անդ է ճշմարիտ աթոռը, ուր է Լուսաւորչի Աջը։ Թէպէտ և տարբեր պատմութիւններ կան Աջին վրայ, և այսօր ալ Կիլիկիոյ աթոռը ճշմարիտ Աջը ունենալ կը կարծէ, սակայն ընդհանուր ազգին համոզումը խախտուած չէ Էջմիածին գտնուող Աջին վրայ։

230. Կաթողիկոսական աթոռին փոխադրութեան առաջին գաղափարը, կը հասնի մինչև Գրիգոր Տաթեւացիի ժամանակը, և ասոր մէկ նշանն էր, Աղթամարի վիճակին գործերուն մէջ կատարուած մասնակցութիւնը. ենոյն կաթողիկոսութեան իրաւասութենէն մաս մը Կիլիկիոյ աթոռին ենթարկելը։ Կիլիկիոյ աթոռին գործերը ձեռուընին անցնելու միտքը յայտնուեցաւ Արեւելեայց կողմէն, երբ Պօղոս Գառնեցի իբրև քննիչ Սիս զրկեցին և անոր կաթողիկոսութիւնը յաջողցուցին, և ընդհանրապէս Սսոյ աթոռը բարեկարգելու և նոր ձևի մը թափելու ջանքերը շարունակեցին։ Եթէ աթոռը իւր նախնական կեդրոնէն հեռացած էր քաղաքական պարագաներու հետևանքով, հեռացումը պէտք էր դադրէր պարագաներուն դադրելովը։ Ընդհանրապէս, եթէ մեծ փոփոխութիւններ յանկարծական որոշմամբ մը կը գործադրուին, սակայն միտքեր կանուխէն պատրաստուած կ'ըլլան։ Կաթողիկոսական աթոռին փոխադրութիւնն ալ այդ տեսակ գործերէն էր և այդ կերպով նախապատրաստուեցաւ։ Մուսաբէգեանի պաշտօնավարութիւնը իւր նախորդներէն ալ վատթարագոյն եղած պիտի ըլլար, որ կանուխէն մտաբերուած խորհուրդ մը այլևս յապաղել անհնար նկատուեցաւ, և ընդհանուր հաւանութեամբ յանկարծօրէն կրցաւ իրականանալ։ Մեծոփեցին Սիսի աթոռին տևողութիւնը 147 տարի կը դնէ, որ Մուսաբէգեանի թուականէն (1441) դէպ ետև հաշուելով կը հասնի ճշտիւ Անաւարզեցիին թուականին (1293)։ Սսոյ աթոռին, և գլխաւորապէս անոր վերջին շրջանին դէմ յարուցուած մեղադրանքները, հետևեալ կերպով կը թուէ Մեծոփեցին։ 1 Քաղկեդոնականութեան հետևելը։ 2. Վեց կաթողիկոսներու հետզհետէ դեղակուր սպանուիլը։ 3. Կաթողիկոսներու բռնութեանց երեսէն շատերուն ուրացութեան դիմելը, ուր յանուանէ կը յիշէ Յակոբ Նիկիտացի մը Կոստանդինի ժամանակ։ 4. Կաթողիկոսներուն պիղծ կեանք անցնելը։ 5. Լոկ ձէթով մեռոն պատրաստելնին։ 6. Սիմոնականութեամբ ձեռնադրութիւններ ընելնին։ 7. Նոյն վիճակի վրայ միաժամանակ երեք և չորս եպիսկոպոսներ ձեռնադրելնին։

8. Անարժանները պաշտօնի կոչելնին։ 9. Բանադրանքներով և նզովքներով զեղծանելնին։ Ասոնք թուելէն ետքը, Մեծոփեցին կը յարէ Իսրայէլի օրինակը, Ներսէս Մեծի գուշակութիւնը և Սահակ Պարթևի տեսիլքը։

231. Դժուարին է ճշտել թէ ով եղաւ այսպիսի նշանաւոր եղելութեան մը գլխաւոր գործիչը։ Ժամանակը չներկայեր մեզի այնպիսի մի բարձր անձնաւորութիւն, որ իւր անունով դար մը կը կազմէ։ Սակայն այսպիսի անձնաւորութեան մը պակասը, կը յայտնէ թէ ազգային ընդհանուր և համամիտ և անհակառակ զգացումն էր, որ այդ փոխադրութիւնը իրագործեց։ Գաղափարը ամէն միտքերու մէջ սկսած էր աճել, երբ չորս Կիլիկեցի եպիսկոպոսներ, որոնց անունները դժբախտաբար մեզի չեն հասած, մեղադրանքի գիրեր սկսան հասցնել Արևելեայ վարդապետներուն, թէ մինչև ե՞րբ անհոգ պիտի մնան, և կաթողիկոսական աթոռը անոք անօգնական կործանման պիտի հասցնեն։ Թովմաս վարդապետ Մեծոփեցի, խնդիրը լրջօրէն ձեռք առնողներէն մէկը եղաւ, և ընդհանուր ժողով մը գումարելու և գործը կարգադրելու առաջարկը մէջ տեղ դրաւ (Կոստանեան 64)։ Այդ եղաւ նոյն իսկ Մուսաբէգեանի ընտրութեան յաջորդ տարին (1440), և անմիջապէս ձեռք առնուեցան գործնական խորհրդակցութիւններ, և Արևելեայց իրենց մէջ, և Կիլիկեցւոց հետ բանակցութիւններ։ Նոյն իսկ Մուսաբէգեանի ալ կը հաղորդուեցաւ փոխադրութեան առաջարկը, և գործը դիւրացնելու և դժուարութիւններ արգելելու համար, հրաւիրուեցաւ Էջմիածին փոխադրուել. և Արևելեայց գործակցութեամբ հայրապետական աթոռը զօրացնել, քանի որ Կիլիկիոյ մէջ որևէ յոյս կամ ոյժ չէր մնացած (Զամչեան Գ. 486)։ Տարի մը անցաւ նախապատրաստական գործողութիւններով (Կոստանեան 65), մինչև որ Յովհաննէս վարդապետ Կոլոտիկ, առաջնորդ Հերմոնի վանուց, որ ժամանակին վարդապետներուն գլխաւորն էր, հրաւիրագիրեր ցրուեց ընդհանուր ժողով մը գումարելու Վաղարշապատ քաղաքը, առաջուընէ ապահովելով Երեւանի պարսիկ կուսակալ Եաղուբ բէգի հաւանութիւնը։

232. Ժողովական եկեղեցականներուն թիւը, աւելի քան զերեք հարիւր անձինս կը դնէ Մեծոփեցին, իսկ աշխարհականներուն թիւը անթիւ եւ անհամար բազմութիւն կը նշանակէ (Կոստանեան 53), իսկ ուրիշ յիշատակարան մը եօթն հարիւր կը դնէ գումարեալ եկեղեցականներուն թիւը (Զամչեան. Գ. 487. Փիրզալէմեան 133)։ Յականէ յանուանէ յիշատակուած են 18 մեծ վարդապետներ և 12 եպիսկոպոսներ, և դարձեալ 20 ևս նշանաւոր վարդապետներ և եպիսկոպոսներ, որոնք գրաւոր հաւանութիւն զրկած են։ Յիշուածներ-

ռուն մէջն են, Արտազու եպիսկոպոս Գրիգոր, Տաթևու եպիսկոպոս Շմաւոն, Հաղբատու եպիսկոպոս Գրիգոր, և Բջնոյ եպիսկոպոս Յովհաննէս, որոց հաւանութիւնը իբր անհրաժեշտ կանոնադրուած էր, ամէն կաթողիկոսական ընտրութեանց համար։ Յովհաննէս Հերմոնեցին ժողովին գլուխը կը նկատուէր, Թովմաս Մեծոփեցին գլխաւոր գործիչն էր, և Զաքարիա Հաւուցթառեցին եպիսկոպոսներուն երիցագոյնն էր։ Ուրիշ անուններն ալ ծանօթ անձնաւորութիւններ էին։ Ժողովականներ նախապէս Երևանի մէջ հաւաքուեցան, Եաղուբ բէգէ պատուասիրուեցան և քաջալերուեցան, և զինուորներու պաշտպանութեամբ փողերով և թմբուկներով Վաղարշապատ եկան (Կոստանեան 68)։ Թէպէտև շատ որոշակի գրուած չէ, բայց դիւրաւ հնար է ճշտել, թէ ժողովը հրաւիրուած էր, զատիկէ անմիջապէս ետքը հաւաքուելու։ Մեծպահոց մէջ (1441 մարտ 15) տակաւին Մուսաբէգեան կաթողիկոս ճանչցուած է, իսկ հոգեգալուստի օրը (1441 յունիս 4) ամէն բան արդէն վերջացած է, և նորընտիր կաթողիկոսը մեռոնի օրհնութիւն կը կատարէ (Կոստանեան 74)։

233. Եթէ Մեծոփեցիին հաւանիմք, Վաղարշապատի ժողովականները այնպիսի առաքինական հոգւով և խոնարհութեամբ զգածուած էին, որ բաղումք ի յեղբարցն յառաջ կոչեցան կալ ի յառաջնորդութիւն Թորգոմեան գրոհիս, եւ ոչ կամեցան բառնալ զծանրութիւն դառնութեան բարձրագոյն աստիճանին (Կոստանեան 63). հետևապէս հարկ եղաւ աղօթքի դիմել և ս. Մեսրոպի գերեզմանին ուխտի երթալ Օշական, և ասոր անոր, մինչև իսկ այլազգի կնկան մը տեսած երազներուն իմաստը գտնել, և ի վերջոյ արկանել վիճակ ի սուրբ աւետարանն (Կոստանեան 72), և այնպէս որոշել կաթողիկոսութեան ընտրելին։ Սակայն եթէ միտ դնենք ժողովականաց գլխաւորներուն, և ի մասնաւորի Գրիգոր Արտազեցիի և Զաքարիա Հաւուցթառեցիի և Աղթամարի Զաքարիա կաթողիկոսին յետագայ գործերուն և յուզած գրգռութիւններուն, անհնար կ'ըլլայ մեզի հաստատել անոնց նախընթաց առաքինութեան և խոնարհութեան։ Աւելի ճշմարիտ պիտի ըլլայ համոզուել, թէ հետամուտներ շատ էին, և աթոռին բարեկարգութեան առթիւ կաթողիկոսանալու թեկնածուներ մէկէ աւելի էին, բայց երբ գլխաւոր հետամուտներ փոփոխ հակառակութեամբ անյաջող լինելնին գուշակեցին, լաւագոյն սեպեցին ամենքն ալ համաձայնութեամբ քաշուել, և փոխանակ վարչական կարողութեամբ օժտուած անձ մը ընտրելու, նախաղտեցին սրբակրօն և ճգնաղգեաց վարքով նշանաւոր անձ մը աթոռ բարձրացնել, որով ամէն փառասէր կիրքեր կը լռէին, և ամէնքն ալ հաւասարապէս կրնային տանել առաքինազարդ անձի

մը իշխանութիւնը։ Այսպիսի մէկն էր իրապէս նորընտիր կաթողիկոսը, Կիրակոս Վիրապեցին։

234. Ուրիշ դիտողութիւն մըն ալ, զոր պէտք է ընել այսնըշանաւոր գործողութեան մասին, Աղթամարեան ուղղութեան մը ազդեցութիւնն է։ Նշանաւոր ժողովականներուն ցանկին մէջ կը գտնեմք, Մեծոփեցի, Խառաբաստեցի, Վարագցի, Արծկեցի, Ռըշտունի և այլ վարդապետներու անուններ, որք նոյն ատեն կամ քիչ առաջ Աղթամարի իրաւասութեան կը պատկանէին։ Թովմաս Մեծոփեցին այդ խմբակին պետը, միանգամայն փոխադրութեան գլխաւոր դրդիչն ու գործիչն էր։ Իսկ Տաթեւացի կամ Սիւնեցի վարդապետներուն խումբն ալ, տակաւին թարմ կը պահէր Տաթեւացի Գրիգորի յիշատակը, որ Աղթամարի սահմանները գացած էր, և Աղթամարի նպաստաւոր երևցած էր։ Աղթամարի աթոռին վրայ կը գտնուէր Զաքարիա, ժամանակին կարողագոյն անձերէն մին, որ տեսնելով Կիլիկիոյ աթոռին անկումը, կը ճգնէր զայն խափանել. և իւր աթոռը ամենայն Հայոց հայրապետութեան բարձրացնել, և Էջմիածինն ալ գրաւել։ Վասպուրականցի և Սիւնեցի վարդապետներու խումբերը կը մտածէին, Աղթամարի և Տաթևի աթոռներուն փոխադարձ համաձայնութեամբ, ազգի եկեղեցական խաղաղութիւն պատրաստել, Կիլիկիոյ աթոռը վերջացնել, Աղթամարի աթոռը Էջմիածին փոխադրել, և կաթողիկոսական աթոռին պառակտումներուն վերջ տալ։ Դիտեմք որ Զաքարիա Աղթամարցին համամիտ էր Վաղարշապատի ժողովին, և իւր աթոռն ալ Էջմիածնի հետ միացնելու հաւանութիւն յայտնած էր, հարկաւ իւր փառասիրական ձգտումներէն բան մը չզոհելով։ Մեր այդ դիտողութիւնները աւելի հաստատութիւն կ'ընդունեն, Էջմիածնի աթոռին յետագայ դէպքերէն։ Ըստ դիպաց չէ հարկաւ, որ երբ Կիլիկեան կուսակցութիւնը իբր Աղթարմայական կը մեղադրուէր, Էջմիածնի նոր կուսակցութիւնը իբր Աղթամարական սկսաւ կոչուել։

235. Մուսաբէգեանի նկատմամբ ուրիշ ըսելիք չի մնար։ Զեմք գիտեր թէ ինչու Գրիգոր չուզեց համակերպիլ իրեն եղած հրաւէրին և չգնաց Էջմիածին։ Մեծոփեցին, եռանդուն Աղթամարականը, չյիշեր այդ պարագայն, թերևս Աղթարմայականներուն զիջողութիւն մը ըրած չերևնալու համար, Գրիգոր եօթը եպիսկոպոսներ ձեռնադրած էր, և ասոնցմէ չորսն էին հաւանօրէն, որք իրեն դէմ գանգատելով Արևելեայները գրգռեցին։ Այդ չորսերը ուրիշ հետևողներ ալ ունեցան, և Մուսաբէգեան իրեններէն ալ լքուած, մնաց անօգնական, և իրապէս և իրաւապէս կաթողիկոսութենէ զրկուեցաւ։ Վաղարշապատու ժողովական որոշումէն յետոյ (1441 յունիս) հնար չէ այլևս Մուսաբէգեանը իբր օրինաւոր կա-

թողիկոս ճանչնալ։ Միւս կողմանէ կ՚երևի թէ ինքն ալ երկարակեաց չեղաւ, և բնական կամ բռնական մահուամբ իւր կեանքը վերջացաւ Կիրակոսի կաթողիկոսութեան առաջին տարին։ Կիլիկիոյ աթոռը խափանեալ մնաց հինգ տարի ամբողջ. թէպէտ և նոր խլրտումներ շարժեց նոյն Յովսէփ երէցը, որ այս կերպով Մուսաբէգեանի մահը կը հաւաստէ, քանի որ Վահկացիին մահուանէ ետքն ալ ջանացեր էր կաթողիկոսական աթոռը գրաւել։ Իւր ջանքերը ապարդիւն մնացին. և Կիլիկիոյ աթոռը խափանուեցաւ և առանց գահակալի մնալով դադրած նկատուեցաւ, մինչև որ Կարապետ Եւդոկիացին յաջողեցաւ Էջմիածնի կաթողիկոսին հակառակ ինք զինքը կաթողիկոս հռչակել Սսոյ մէջ։

Մաղ. ա. Օրմանեան

ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԸ [1]

III

Կէս ժամից յետոյ եկաւ բժիշկը. կարճ, հաստ, կլոր, լիք-լիքը երեսով, պէնսնէն քթին մի գիրուկ մարդ, նա ներս մտնելուն պէս մօտեցաւ հիւանդի անկողնին և վերմակը ետ տանելով բացեց նրա երեսը, ձեռքը դրեց նրա քրտնքոտ ճակատին և բաս ձայնով հարցրեց.

—Ո՞ր տեղդ է ցաւում։

Հիւանդը ակնապիշ նայեց բժշկի երեսին, ապա գունատ շրթունքներով հազիւ խուլ շշնջաց.

—Գլուխս. . ջանս...

—Ա՜... բացականչեց բժիշկը։—Գլուխդ պտտւում էլ է։

—Այո...

—Լաւ, այդպէս, իմացայ, շատ լաւ... գլուխը շարժեց բժիշկը և դարձաւ ուսուցչին։—Պարոն, խնդրեմ ինձ մի թղթի կտոր տաք, դեղատոմս գրեմ...

Ուսուցիչը ծոցի գրպանից հանեց իր յուշատետրը և մի թերթ պոկելով տուեց բժշկին։ Նաշտապով գրեց դեղատոմսը և պատուիրեց՝ որ նշանակած դեղը՝ օրը երեք անգամ ընդունի։

Ու հիւանդին մի քանի յուսատու խօսք ասելով դուրս գնաց ուսուցչի հետ միասին։

Սիմոնը դարձեալ մնաց մենամենակ. մարմինը ծանրացել է, գլուխը նոյնպէս. շնչառութիւնը շուտ-շուտ կտրւում է, նեղւում։ Մի բան կարծես նստել է կրծքին և սղմում է, շարունակ սղմում... Սիրտը վանդակում բռնուած թռչնի սրտի նման շարունակ թպրտում էր կրծքի տակ։ Առատ քրտինքը ստէպ-ստէպ ծածկում է գունատ ճակատը ու էլի կրկին չքանում... Նա անհանգիստ շուռ ու մուռ է անում անկողնում, մերթ երեսը դարձնում է դէպի պատը, լուսամուտը, որտեղից դեռ խուլ, անորոշ կերպով ականջին է հասնում դուրսը խաղացող երեխաների անհոգ կանչուտոցը.

[1] Լումայ 5—6

մերթ աչքերը յառում է առաստաղին ու մնում... Եւ այդպէս շաբունակ։

Նրա բիբերը սկսեցին կամաց-կամաց ծանրանալ, աչքերը շաղուել... Նիրհ էր գալի վրան. քունը մօտենում էր։

Քիչ յետոյ նա քնեց, նորից զարթնեց, վերստին շուռ ու մուռ արաւ ու դարձեալ քնեց։

Մի առ ժամանակ հանգիստ քնած էր. բայց յանկարծ քնի մէջ անորոշ կերպով խօսքեր արտասանեց. ճչաց՝ ուրախ ճչով և շուռ եկաւ տեղի մէջ։

—Հա, Նունօ... հրեխէքը ո՞ւր են...

Երազ էր տեսնում նա. գտնուում էր իր տանը, հարցնում էր հրեխանց մասին, որոնց այնքա՜ն կարօտել էր։

—Է՛հ, կնիկ... արտերը... արտերը ո՞նց են... հա, հա... Դիմացի ա՞ռտն էլ... հա... լաւ ես արել...

Այդ րոպէին, երբ նա զառանցում էր, սենեակի դուռը կամացուկ բացուեց, ուսուցիչը դեղը ձեռքին, յուշիկ քայլերով ներս մտաւ. ոտքի ծայրերի վրայ առաջ գնաց և կանգնեց լսելու համար թէ ի՞նչ է խօսում հիւանդը։

Երբ Սիմոնի անորոշ խօսքերի կապը կտրուեց՝ նա պահ մի մտախոհ նայեց նրան և ինքն իրան շշնջաց.

—Խեղճ մարդ. էլի արտերից է խօսում...

Ու դեղը դնելով սեղանի վրայ, վերցրեց կիսատ թողած գիրքը, սկսեց կարդալ մինչև որ հիւանդը զարթնի։

Կարդում էր կամաց և ինչպէս միշտ արագ, գեղեցիկ առոգանութեամբ, բայց ոչինչ չէր հասկանում... Թերթի երեսը հատնում էր և նա չէր ըմբռնում կարդացածի միտքը։ Ի՞նչ կարդաց ի՞նչ էր գրած—չէր իմանում։ Ուղեղը բթացե՞լ էր։—Ո՛չ։ Թէև կարդում, աչքերը մա՛ն էր ածում գրքի վրայ, բայց մտքերը մի ուրիշ բանի շուրջն էին խմբուում ու նրանով զբաղուում... ստեղծում մտապատկերներ, զանազան տեսարաններ... Ու նա կարդացածը նորից սկսում էր կարդալ մի բան հասկանալու համար։ Ի զո՞ւր։ Մտքերը թռչում էին. չէին հպատակուում իր կամքին։ Ճիգ էր գործ գնում կարդացածը հասկանալու, սակայն աւելորդ ջանք։ Տեսաւ որ ոչինչ չի լինում՝ գիրքը փակեց, դրեց տեղը, մօտեցաւ լուսամուտին, որ նոր փակել էր, որպէսզի քամին չմտնի ներս. ճակատը կպցրեց ապակուն և խորասուզուեց մտքերի ծովը։

Նա մտածում էր Սիմոնի մասին.—Ի՞նչպէս կլինի նրա դրութիւնը արդեօք։ Կլաւա՞նայ, թէ՞ աւելի վատթար կլինի...

«—Եթէ մեռնի, անցնում էր նրա գլխով.—Ո՛հ, Աստուած ոչ-

անի, պատասխանում էր ինքն իրան։ Սակայն եթէ մահանայ, օրինակի համար, ի՞նչ անեմ...

Նա երկար կանգ է առնում այդ հարցի առաջ, ապա գիւտարածի նման շարունակում մտածել.

«—Եթէ մեռնի, նախ կիմացնեմ ոստիկանութեան և յետոյ... Յետոյ մի հասարակ դագաղ շինել կտամ... անշուշտ խաչը վրան։ Ի՞նչ պէտք է արժենայ... շատ, շատ հինգ բուբլուց աւել՝ չի արժենայ... Մօտիս տասնև հինգ բուբլուց՝ հինգը կտամ դրան... իսկ մնացածը կըգործադրեմ միւս հարկաւոր բաներին.—օրինակ թաղման վարձ... օ՜օ, մոռացայ. մի կին կամ մի մարդ պէտք է հրաւիրել, որ լողացնեն մեռելին... դրանց նոյնպէս հարկաւոր է վարձատրել։ Մէկ բուբլի էլ դրանց... Բայց պատան, երեսքաշ... առանց դրանց հօ չի կարելի... Մի երեք բուբլի էլ այդտեղ... Ուրեմն ինչ է ծախսւում... հինգ. մէկ էլ—վեց. երեք էլ—իննը. կնշանակի իննը բուբլի ծախս։ Մնացած վեցն էլ...

Այստեղ նրա միտքը նորից բան ընկաւ և նա ցնցուեց, ճակատը հեռացրեց ապակուց, մի քայլ ետ կանգնեց, անգիտակցօրէն նայեց դուրս, ապա ձեռքերը դարսելով կրծքին՝ քայլեց յետ ու առաջ, գլուխը կախած։

—Օ՜, մեծ բանը մոռացել եմ, մտածում էր նա. գերեզմանափորը արդեօք քանիսով կը համաձայնի գերեզմանի վիհը փորել... պէտք է իմանալ այստեղի սովորութիւնը...

Նա նորից կանգնեց, ձեռքը դրեց ճակատին ու մնաց այդպէս։ Մտքերը եռում էին գլխում և նա չէր հասկանում ի՞նչ անի, ի՞նչի մասին մտածի... Ուրիշ ի՞նչ կայ մտածողութեան արժանի, բացի խեղճ Սիմոնից...

—Խեղճ, խեղճ մարդ, արտասանեց նա կամաց ու շարժուեց տեղից։ Կրկին մօտեցաւ լուսամուտին և կանգնեց։

Դարձեալ նրա ուղեղում տնկուեց այն չարագուշակ միտքը՝ «եթէ մեռնի ի՞նչ պէտք է անել...»

Նա վերստին անձնատուր եղաւ այդ մռայլ, այլանդակ մըտքերին։ Ծանր, շատ ծանր էր այդ մասին մտածելը, բայց նա ակամայ մտածում էր. շարունակ մտածում...

«... Օրինակ գերեզմանափորին կարելի է մի բուբլի տալ. ոչ աւել... այնքան էլ մեծ աշխատանք չէ անում... Բայց այստեղ հող կտա՞ն գերեզմանատեղի համար...

Այդ հարցը նրան ծանր թուաց։ Չգիտէր իսկապէս կտան, թէ չեն տայ։ Ծանօթ չէր տեղի սովորութիւններին, դրա համար դժուարանում էր մտածել։

«—Եթէ տան և փողով լինի... ի՞նչպէս անել, տարակուսում

էր նա։—Փող չկայ... ծախսից յետոյ ոչինչ չի մնայ... Բայց ինքը Սիմոն բիձան թաքցրած փող չի ունենայ... Թէև ինձ ասում է, և ես էլ գիտեմ, որ չունի... սակայն մարդ է, գուցէ ունենայ... քիչ չէ պատահում...

Նա նայեց հիւանդի գունատ երեսին։

Սիմոնը քնած էր, էլ չէր զառանցում. շնչում է խզզոցով և երբեմն տնքալով։ Աջ ձեռքը կախ էր ընկել մահճակալից, գլուխը թեքուել մի կողմ և կուրծքը բացուել կիսովին։

Ուսուցիչը պահ մի նայելուց յետոյ՝ մօտեցաւ հիւանդին. ձեռքը դրեց վերմակի տակ, կուրծքը ծածկեց, գլուխը ուղղեց, որպէսզի շնչառութիւնը կանոնաւոր լինի, ոտքերը ծածկեց և մայրական խնամատարութեամբ յարդարեց նրա անկողինը։

—Խեղճ, խեղճ մարդ, շարունակ կրկնում էր նա ինքն իրան։—Ի՞նչ պատահեց մի օրուայ մէջ...

Նա քիչ էր մնում լաց լինի, բայց զսպում էր իրան։ Կոկորդը չորանում էր, սղմուում և այդ նրան առիթ էր տալիս շուտ-շուտ հազալու... Այս անգամ, երբ նա բարձր ու չոր հազաց, յանկարծ հիւանդը արթնացաւ. աչքերը ճպճպացրեց և մշուշոտ հայեացքը նետելով ուսուցչի վրայ՝ ասաց.

—Վարժապետ... մի...

—Ի՞նչ է... ցնցուեց ուսուցիչը և շտապով մօտ գնաց։—Ի՞նչ ես ասում, Սիմոն բիձա, ո՞նց ես հիմա... գլուխդ էլի ցաւո՞ւմ է, թէ՞ թեթևացել է. մարմինդ ո՞նց է...

Էլ պատասխանի չսպասելով՝ անհանգստօրէն հարցերը իրար հետևից կարկտի նման վրայ էր տալիս նա։

—Վարժապետ, դեղը բերի՞ր... հազիւ շնչելով խօսեց հիւանդը։

—Այո՛, այո՛, բերել եմ, բերել... այս բոպէիս...

Ուրախացած հիւանդի խօսելու վրայ, նա վերցրեց դեղը, բժշկի պատուէրի համաձայն պատրաստեց և տուեց Սիմոնին։

—Ասում ես՝ սա կթեթևացնի գլխիս ցաւը, հա՛... հետաքրքրուեց հիւանդը և ճիգ գործ դնելով՝ բարձրացաւ, նստեց անկողնում, որ դեղը ընդունի։

—Այո՛, բժիշկն ասաց որ լաւ դեղ է. ամեն ինչ կանցնի շուտով։

—Օ՛հ. տնքաց հիւանդը և գլուխը թեքեց մի կողմի վրայ։

—Ի՞նչ պատահեց։

—Ո՛ւհ...

—Ի՞նչ եղաւ, Սիմոն բիձա... անհանգիստ, համարեա ջղայնօրէն հարցրեց ուսուցիչը։ Վայրկենապէս նրա երեսի գոյնը թը-

ռաւ. ծնկները դողացին և գլուրքն սկսեց բարձր ու ցած անել։ Նա կարծեց թէ հենց հիմա խեղճը փչելու է հոգին։

—Ը՜հ... աչքերս էլի սևանում են... մրմնջաց հիւանդը և թուլացած ընկաւ բարձի վրայ ու սկսեց հևալ...

Ուսուցիչը յուսահատաբար, իրան մոռացած, ինչ անելը չիմանալով՝ գլխաբաց վազեց դէպի դուռը, ապա ետ եկաւ, գլխարկը վերցրեց, որ կրկին գնայ բժշկի ետևից, բայց մի բան մտաբերելով՝ կանգնեց, գլխարկը նորից վայր դրեց և մօտեցաւ հիւանդին։

—Սիմոն բիձա, սրտատրոփ, հևացող ձայնով ասաց նա։

—Սիմոն բիձա, ո՞ր տեղդ է ցաւում։

—Ո՜ւ...

—Սիմոն բիձա...

—Է՜... մ...

Հիւանդը սաստիկ տնքում էր, հառաչում և երբեմն խոպոտ, խեղդուած հնչիւններ հանում։

Ուսուցիչը էլ ոչինչ չհարցրեց. արցունքները այրեցին աչքերը... և նա գլուխը ափերի մէջ առած սկսեց խուլ հեկեկալ...

IV

Զատկի շաբաթ օրն է. եղանակը ամպամած ու մառախլապատ. թանձր, սևաթոյր ամպերը կախ են ընկել ցած, ցած...նրանք բռնել են ամբողջ հորիզոնի երեսը. ծածկել են լոյս ու արև և ասես խօսք մէկ արած կամաց կամաց իջնում են աւելի ցած... Այդ օրը ամեն ինչ գունատ է, տխուր ու անհամբոյր։ Հեռուն կանաչոտ բլուրները էլ չեն ժպտում. ծաղկած ծառերը կորցրել են իրանց շքեղութիւնը. նրանց ծաղկափթիթ ճիւղերը թախծոտ ու լալագին խոնարհել են գլուխները և ասես լալիս են սպիտակ ծաղկաթերթեր, որոնք թափւում են՝ առանց պտոյտներ գործելու, ուղղակի գետին...

Այսօր հիւանդը մի փոքր լաւ է. տաքութիւնը քաշուել է, գլուխը թեթևացել և աչքերը պարզուել։ Ուսուցչի հետ խօսում է, նրա հարցերին բաւարար պատասխաններ տալիս և մինչև անգամ ժպտում։

Այս երեկոյ թաթախում է, Սիմոն բիձա, յայտնեց ուսուցիչը.—պէտք է գնամ շուկայ մի քանի բան առնեմ իրիկուայ համար... Փառք Աստծու, որ լաւացաք... քիչ էր մնում գժուէի յուսահատութիւնից։

—Փառք Աստծու, մրմնջաց հիւանդը։—Այսօր թաթախում է, հմ։

—Այո, կարմիր Զատկի շաբաթ օրն է։

—Այնտեղ էլ թաթախում կանեն, չէ՞։

—Որտե՞ղ։

—Գեղում... մեր տանը։

—Այո՛, ի հարկէ... Այնտեղ էլ, ամեն տեղ էլ։

—Վարժապետ, հիմի մեր գեղում, ի՞նչ օր է...

—Ի հարկէ, այնտեղ լաւ օրեր են լինում... Այստեղի նման հօ չէ։ Էս ի՞նչ է, մռութը կիտել է ու մինչև գետին հասել։ Կարծես աշխարհի դարդը դրան են տուել, որ այդպէս նօթերը կիտել է ու կռացել։

—Ի՞նչ ես ասում, վարժապետ, ժպտաց հիւանդը։—Այդպէս մի ասիլ... Փառք իրան, հազար փառք...

—Ծիծաղում եմ... ի՞նչ արած, տխուր մարդիկ ենք։

—Հիմի այնտեղ զանգերը տալիս են այ, վարժապետ... տրխրութեամբ ասաց հիւանդը և հառաչեց։—Ինչքան քաղցր է այնտեղի զանգերի ձայնը գիտե՞ս ..

—Լսել եմ, շատ եմ լսել. իսկապէս քաղցր է. հաւանութիւն տուեց ուսուցիչը։

Սիմոնը լռեց. վերմակը կամաց քաշեց գլխին և երեսը ծածկեց։

Թմրած, յոգնած մտքերը նորից արթնանում էին ու շարժւում։ Գլուխը կամաց-կամաց ծանրանում էր վերստին... ինքնամոռացութիւն է գալի վրա. մոռանում է անկողինը, մոռանում է թէ որտեղ է, ի՞նչ է ինքը։

Նրա առաջ հանդէս է գալիս Զատկի օրը գիւղում։

... Մարդիկ, կանայք, երեխաներ՝ խումբ-խումբ շտապում են եկեղեցի, ամենքի դէմքին փայլում է ժպիտ, ուրախութիւն... եկեղեցու զանգերը հնչւում են. նրանց զողանջիւնի ձայնը հասնում է իր ականջին էլ։ Ինքը վերցնում է երկու երեխային և գնում եկեղեցի... Հասնում է բակը, որտեղ երեխաներ, պատանիներ, նոյն իսկ երիտասարդներ ու հասակաւորներ կարմիր ձու են խաղում... իր տղաներն էլ խառնւում են նրանց. իսկ ինքը մտնում է եկեղեցի. բայց նախ քան մտնելը՝ մի լաւ, ջերմեռանդօրէն համբուրում է եկեղեցու տախտակեայ հաստ դուռը, ապա գնում, կանգնում աջ պատի տակ և երեսը խաչակնքում...

—Ինչի՞ ես, Սիմոն բիձա. հարցրեց ուսուցիչը և երկար ժամանակ պատասխան չստանալով՝ ենթադրեց թէ քնած է, որ չի պատասխանում, ու գլխարկը վերցնելով՝ դուրս գնաց։ Ինչպէս միշտ այս անգամ էլ դուռը կողպեց ու հեռացաւ։ Երևի շուկայ գնաց։

Սիմոնը ոչինչ չլսեց. ոչ ուսուցչի խօսելը, ոչ դրան փակուե-

լու ձայնը նրան չսթափեցրին իր նիրհից։ Նա շարունակում էր քաղցր պատրանքի մէջ ապրել։

... Եկեղեցին լի է բազմութեամբ. բոլորը խաչ են քաշում երեսներին ու մերթ գետնատարած, մերթ կանգնած—աղօթք են մրմնջում... Ինքը նոյնպէս աղօթք է անում. խնդրում է խաչուած Յիսուսից, որ աչքը քաղցր պահի իր տուն ու տեղի վրայ... վերջապէս ժամը դուրս է գալիս. մի փոքր նշխարքի կտոր ձեռին դիմում է տուն։ Ճանապարհին պատահած մարդկանց մրմնջում է.

«—Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»

Ցնորքի մէջ այդ խօսքերը նա արտասանեց բարձր, որ լուռ սենեակի մէջ կրկնուեց մեղմիւ ու մարեց անկիւններում։

«—Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»

Նորից արտասանեց նա։ Այս անգամ նրա խօսքերը լսուեցին աւելի ուժեղ, և նա իր խօսքերի ձայնից սթափուեց վեր թռաւ. նստեց անկողնի մէջ, ապշած ու աչքերը չռած մի քանի վայրկեան նայեց իր շուրջը։ Այդ րոպէին նրա բարի դէմքը՝ այլանդակուէն ծռմռուեց ու կծկուեց։ Նա մի խեղդուած ճիչ արձակելով՝ ետ դցեց վերմակը, թռաւ մահճակալից, անցաւ սենեակով և մօտեցաւ դռանը ու սկսեց քաշել...

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց...» կրկնում էր նա ինքն իրան ու շարունակ դուռը քաշում։

Տեսաւ, որ չի բացւում՝ ետ դարձաւ. սեղանի վրայից վերցրեց գրքերը ու շպրտեց ամեն-մէկը մի կողմ... . . . . .

Վերջապէս եկաւ ուսուցիչը մի քանի թղթէ կապոց ձեռքին։ Ներս մտնելուն պէս նա զարմանքից աչքերը չռեց և գունատուեց։ Սենեակը տակն ու վրայ էր արած։ Ի՞նչ էր այս։

—Սիմոն բիձա, ի՞նչու ես վեր կացել... կմրսես... շփոթուած ասաց ուսուցիչը։

—Քրիստոս յարեաւ ի մեռելոց, վարժապետ... բացականչեց հիւանդը և մերկ վազեց դէպի դուռը...

Ս. ՌօՃՃօr

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ [1]

Պրոֆ. Կրիմսկու

Պերոզի թագաւորութեան վերջին տարիներում, ինչպէս տեսանք Կրիմսկուց, Հայաստանը ապստամբուել էր։ Այս երկրորդ կրօնական պատերազմն էր Պարսից դէմ և ապստամբութեան դրօշակը պարզել էր դարձեալ Մամիկոնեան իշխաններից մէկն՝ քաջն Վահան Մամիկոնեանը։ Սորա քաջագործութիւնների նկարագիրը և պատերազմների մանրամասնութիւնները անմահացրել է Ղազ. Փարպեցին իւր Հայոց պատմութեան էջերում, ուր հեղինակը թէև շատ զարմանալի, մինչև անգամ անհնարին դէպքեր է պատմում իւր սիրեցեալ դիւցազնի կեանքից, (չմոռանանք, որ Ղազարը Վահանի մանկութեան խաղերի ընկերն է եղել և նորա ու նորա եղբայրների հետ միասին սնուել է Վրաց իշխան Աշուշայի տանը, Վահանի մօր խնամակալութեան տակ) բայց այնուամենայնիւ նորա շռայլած գովասանքներից շատը արժանահաւատ պիտի լինի, քանի որ գարձրած են Մամիկոնեան իշխանի հացէին. վասն զի Մամիկոնեան տոհմը մի բացառիկ դեր է խաղում Հայոց պատմութեան մէջ։ Ցայտնի է, որ մեր հին իշխանական բազմաթիւ ցեղերի մէջ նշանաւոր և առաջնակարգ տեղ էին գրաւում չորս հետևեալ տոհմերը՝ Սիւնեաց, Արծրունեաց, Բագրատունեաց և Մամիկոնեանց։ Վերջինը չորրորդ դարուց սկսեալ մինչև իններորդը, երբ Գրիգոր Մամիկոնեանի մահուամբ վերջացաւ այս հռչակաւոր տոհմը, նոքա անդրդուելի հաւատարմութեամբ ծառայեցին նախ՝ Արշակունի թագաւորներին և ապա Հայաստանի ժողովրդին, նուիրելով սորան իւրեանց բնատուր զինուորական քանքարը, ոյժը, կարողութիւնը, կալուածքը և մինչև անգամ կեանքը. մինչդեռ միւս չիշեալ ցեղերը անձնական փառամոլու-

[1] Լումայ № 5—6

թիւնից կուրացած՝ ծգտում էին թագաւորական պատուին և, վերջապէս, Մամիկոնեանների անհետանալուց յետոյ, յաջողեցան ուրոյն թագաւորութիւններ հիմնել իրանց նահանգներում, որոնց տխուր վերջը յայտնի է։

Վահան Մամիկոնեանը ջարդելով Պարսից փոքր զնդերը, հասկանալի է, որ չէր կարող դիմադրել մեծ ոյժերին և եթէ, ըստ Փարպեցու, Վաղարշ թագաւորը ընդունեց Վահանի երեք պայմանները, Հայաստանը ապստամբութեան վերջ դնելու դիտաւորութեամբ, այժմ, ինչպէս պարզւում է Պարսից պատմութիւնից, նա այդպէս վարուեց 'ի հեռուկս իւր դրան մեծամեծների և մոգերի, որոնց իշխանութիւնը չէր կարողանում այլևս համբերել։

Նոր թագաւոր, երիտասարդ Կաւատ I այնքան էլ յօժար չէր ենթարկուելու դրան աւագանուն, որ դահ բարձրացրեց նորան և վճռեց թուլացնել հոգևորականութեան և տոհմային ազնուականութեան ոյժը մի նոր և շատ վտանգաւոր միջոցով։ Բանն այն է, որ նորա ժամանակ Իրանում ծագեց մազդակականների կրօնական-համայնական աղանդը։ Նորա հիմնադիր Մազդակը (ըստ Պարսից սխալ արտասանութեան «Մօժդէկ») եռանդոտ քարոզիչը ուսուցանում էր, թէ Աստուած բոլոր մարդոց հաւասար է ստեղծել և եթէ ոմանք ունին աւելի դոյք, և կանայք, քան թէ ուրիշները կամ աւելի իշխանութիւն, դա հակառակ է արդարադատ Աստուծոյ կամքին, որ Մազդակի կարծիքով չէ թոյլ տալիս մինչև անդամ կենդանիներ մորթել կերակուրի համար. այս պատճառով Մազդակ պահանջում էր յանուն Տիրոջ արդարութեան, որ մարդիկ, որոնք ունին հարստութիւն և շատ կանայք, բաժանեն իւրեանց հարստութիւնը և կանանց չքաւորների հետ, որ չունին ոչ այս, ոչ այն. բարիքների հաւասար բաշխման համար, հարկաւոր է ոչնչացնել անձնական սեպականութիւնը, սահմանել կոմունիստական—համայնական տիրում և ընտանիքին վերջ դնել։ Մազդակ շատ հետևողներ ունեցաւ հասարակ ժողովրդի միջից։ Կաւատ I խրախուսեց աղանդը և աղանդաւորները սկսան դործով կոմունիստական բաժանումը իրագործել հարստութեան և կանանց վե-

բաբերութեամբ։ Նոյն համբերողութեամբ Կաւատ I վերաբերւում էր քրիստոնեաներին և Սելևկիա կաթողիկոս Ակակիոս (484—496) թարգմանեց նորա համար ասորերէնից պեհլևի լեզու «Իատողութիւններ հաւատի մասին»։

Վերջապէս հոգևորականութիւնը և աւագանին միացան, տապալեցին Կաւատ I-ին և բանտարկեցին. իսկ թագաւոր կարգեցին նորա եղբօր Ջամասպին (496)։ Բայց Կաւատին, շնորհիւ նորա հաւատարիմ կնոջ, որ մօտ յարաբերութիւնների մէջ մտաւ պահապանների հետ, յաջողեցաւ փախչել բանտից Հեփթաղների մօտ, որոնց թագաւորը ուրախութեամբ ընդունեց նորան, տուեց իւր դուստրը կնութեան և Կաւատ բարբարոսների զօրքի օգնութեամբ (498—499) խլեց Ջամասպից իւր գահը։ Դրան աւագանին ենթարկուեց խիստ պատժի. Բայց մազդակականների հետ փորձերը չշարունակեց Կաւատ I, ընդհակառակն, երեսուն տարիներից յետոյ, արդէն իւր կեանքի վերջերում, Կաւատ I-ը համոզուեց, որ Մազդակի վարդապետութիւնը, չնայած նորա բարձր տեսական դաղափարականութեան, սպառնում է խախտել հասարակութեան հիմքերը և ձեռնամուխ եղաւ (528—529) արիւնալից կոտորածներով առաջն առնել աղանդի տարածմանը և ընդ սմին կոտորածները ղեկավարում էր Թագաժառանգ Խոսրովը։

Կաւատին ցանկալի էր վարձատրել Հեփթաղների օգնութեան համար, բայց դանձարանում դրամ չկար. նա իւր հայեացքը դարձրեց դէպի Բիւզանդիոն, ուր թագաւորում էր Անաստաս I-ը (491—518)։ Կաւատի բարեկամութիւնը Հեփթաղների հետ և երաշխաւորեալ ապահովութիւնը Իրանի սահմանների արևելքից, ակներև է, որ Կաւատ I-ից կարող էր ըսկսուել պատերազմների մի նոր դարաշրջան Հռովմայեցւոց արևելեան կայսրութեան դէմ, որի յարաբերութիւնները Պարսկաստանի հետ հինգերորդ դարում խաղաղ էին. այս պատերազմները, ինչպէս կտեսնենք յետոյ շարունակում են ընդհատումներով մի ամբողջ ու քառորդ դար, երկու պետութիւններն էլ ուժասպառ անելով, թեթևացնում մահմեդական-Արաբացիներին Իրանի և Բիւզանդիոնի արևելեան երկիրների նուաճումը։

Կաւատ I-ին պատերազմ Բիւզանդիոնի հետ սկսուեց 502 թ. յաջող արշաւանքով Հայաստան. յետոյ էլ Պարսից պատերազմական գործողութիւնները լաւ էին ընթանում, բայց հիւսիսային բարբարոս Հոների արշաւանքը Իրանի վրայ հարկադրեցին Կաւատին 506 թ. հաշտութիւն խօսել Անաստաս կայսեր հետ։ Մինչև Անաստասի մահը (518 թ.) խաղաղութիւնը չխանգարուեց, թէև կայսեր շինած Դարա ամրոցը բուն սահմանների վրայ, Մծբինի հանդէպ, ախորժելի չէր Պարսից. սակայն նոցա զօրողութիւնը ընկճուում էր այն դիտակցութեամբ, որ բիւզանդացիք պարտաւորուեցան իւրաքանչիւր տարի հատուցանել, ինչպէս առաջ, մի որոշ գումար ամրոցների պահպանութեան համար Կովկասում։ Յուստինոս I (518—527) վերջ դրեց այդ հարկի վճարմանը և պատերազմը նորից ծագեց և Կաւատը I-ը պատուիրեց իւր հեթանոս Արաբացիներին աւարառութիւններ կատարել բուզանդացւոց ասորական սահմաններում, քրիստոնեայ Արաբացւոց երկրում։ Բիւզանդացիք իրանց կողմից յաղթանակով մտան պարսկական Հայաստան։ Կաւատ I բանակցութիւններ սկսեց Յուստինոսի հետ, աչքի առաջ ունենալով դահի ժառանգութեան խնդիրը. նա ցանկանում էր, որ Յուստինոսը որդեգրէ նորա սիրեցեալ որդի Խոսրովին (դա կարտայայտուէր Խոսրովի տիտղոսում՝ «կայսեր որդի») և այդ կերպով, Խոսրով տիտղոսասէր պարսիկների աչքում արժանաւորագոյն ժառանգը կհանդիսանար։ Բանակցութիւնները անհետևանք անցան և պատերազմը նորոգուեց նախ քան Յուստինոսի մահը (527 թ)։ Բայց ամենածանր արիւնհեղութիւնը վերաբերում է զառամեալ Կաւատի և նոր կայսեր—հռչակաւոր Յուստինիանոսի (527—565) պատերազմի շրջանին. բիւզանդացւոց կողմից քաջ հանդիսացաւ երևելի սպարապետ Բելիզարիոս. իսկ Պարսից—Հիրայի արաբական թագաւոր Մունզիռ III (505—554)։ Պարսկաստանից աւատական կախումն ունեցած Հերայի (հեթանոս) թագաւորութեան Արաբացիների և Բիւզանդիոնի Հասսանեան (քրիստոնեայ) աւատական թագաւորութեան Արաբացիների մէջ անհաշտ ատելութիւն էր տիրում, որ յատուկ է Արաբացիներին միմեանց վերաբերութեամբ։ Նախ-

ընթաց V դարու կիսում այս երկու արաբական թագաւորութիւնների միջի տարաձութեան վրայ Նաջդայում և Բակրոնտաղլիբեան երկրում (այն է՝ Արաբիայի կենդրոնում և հիւսիսարևելքում) գոյացաւ մի երրորդ արաբական թագաւորութիւն, ոչ պակաս զօրաւոր վանք հիրեան և հասսանեանը (Гассâнское и Аûрское). դա Կինդիական պետութիւնն էր, հիմնուած իշխան Խօժռի ձեռքով, որ շատ նեղացնում էր հիրայի Լախմէրդներին. հինգերորդ դարու վերջից Կինդիական թագաւորութիւնը թուլացաւ ծագած երկպառակութիւնների շնորհիւ և մեծ երկիւղով էր վերաբերւում դէպի հիրա։

Անաստաս կայսրը (491—518), որի դէմ Կաւատ I պատերազմ հրատարակեց, փրկանք էր վճարում (503) Կինդիական թագաւոր Խառիսին (Խօժռի թոռան) այն պայմանով, որ նա չբյուրձակուի Ասորիքի վրայ, այլ պատերազմի Պարսից աւատական հիրացիների դէմ։ 259-դ տարին բախտաւոր եղաւ հիրացիների համար այդ տարին երկար խուսափումներից յետոյ կինդիական Խառիս թագաւորը ընկաւ հիրայի արքայ Մունզրա III-դի ձեռքը և սպանուեց։ Նոյն տարին Կաւատը I-ը հրամայեց Մունզրա III-ին արշաւել Ասորիք, ասելի հասսանեան թագաւորութեան երկիրը։ Մունզրա III յօժարութեամբ հնազանդուելով (529), յաղթանակով դնաց նուաճեց բոլոր Ասորիքը մինչև Անտիոք և գերի տարաւ շատ մարդիկ՝ փրկանք ստանալու նպատակով. նորա խորհրդով ինքն Կաւատն էլ դիմեց դէպի Ասորոց երկիրը (531), ուր Պարսիկները համարեա թէ երեք դար չէին մտած. մոլեռանդ հալածանքը Ասորիքում շատ տարածուած և սիրապետողմոնոֆիզիտ հաւատի դէմ, որ յարուցել էր Յուստինոս I կայսրը (նա 519 թ. տապալեց ու տարադրեց 55 ասորի մոնոֆիզիտ եպիսկոպոսներ) և շարունակեց Յուստինիանոս I, ջլատում էր Բիւզանդացւոց կորութիւնը Ասորիքում և դիւրացնում Պարսից յաջողութիւնը։ Սակայն Բելիզարիոսը քաջութեամբ յետ մղեց պարսկական զօրքը։ Ինչ որ վերաբերում է Մունզրա III-ին, պէտք է ասել, որ նորան աւելի դժուար էր ընկճել, քան Պարսիկներին։ Այս պատերազմասէր հեթանոսը կէս դար ասորաբիւզանդական քրիստոնէից սարսափն էր և այնպիսի վայրենի

կատաղութիւն ցոյց տուեց, որ գրաւելով մի կուսանաց վանք, 400 միանձնուհիք մի օրում զոհ բերեց Օզզա դիցուհուն։ Առանց ուշադրութիւն դարձնելու այն հանգամանքի վրայ, թէ Պարսկաստանը պատերազմի մէջ է արդեօք Բիւզանդիոնի հետ, թէ՞ խաղաղութեան, Միւնզրը անընդհատ շարունակում էր իւր արիւնահեղ յարձակումները Բիւզանդիոնի ասորի հպատակների վրայ մինչև, վերջապէս, շատ պատերազմներից յետոյ 554 թ. ընկաւ ճակատամարտում բիւզանդական Արաբացիների թագաւոր Խառիս V Իբնջաբալի դէմ կռուելիս, որին Միւնզրը III առաջ քանիցս ջարդել էր և նորա որդուն դարձեալ զոհել Օզզա դիցուհուն։ Բայց այդ միջոցին Կաւատ I-ը վաղուց արդէն մեռած էր և Պասկաստանում թագաւորում էր նորա երևելի որդի Խոսրով Անուշ-ըռուան»։

Վերը մենք տեսանք, որ Պարսից Վաղարշ թագաւորը կատարեց Վահան Մամիկոնեանի պահանջները, կրօնական ազատութիւն տուեց Հայերին. Վահանին նշանակեց նախ՝ սպարապետ Հայոց, ապա պարսիկ Անդեկան մարզպանի բարեխօսութեամբ, ինչպէս վկայում է Ղ. Փարպեցին, Հայաստանի մարզպան։ Կորովի Մամիկոնեանի խելացի վարչութեան օրերում ալէկոծուած երկիրը խաղաղացաւ. նախարարները և իշխանները պատկառում էին Վահանի առաջ, ակնատես լինելով այն բարձր պատիւներին, որոնց նա արժանացել էլ Պարսից թագաւորի կողմից։ Հայաստանի հարկերը մարզպանը ինքն էր հաւաքում և ուղարկում Պարսկաստան 'ի նշան հպատակութեան։ Բայց ահա 489 թ. Պարսից դրան մեծամեծները և մոլեռանդ մոգերը դժգոհ լինելով Վաղարշից, կուրացրին և տապալեցին նորան և գահ նստացրին Կաւատ I-ին։ Սա պատերազմ սկսելով Բիւզանդացւոց դէմ, յանկարծ մտաւ Հայաստան (502) և ոտնակոխ արեց իւր նախորդի և Հայերի մէջ կնքած խաղաղութեան դաշն։ Վահան, բնական է, որ անմիջապէս վէնքի դիմեց և մի քանի ընդհարումներից յետոյ Պարսից զօրքերի հետ, Կաւատ խաղաղութիւն խօսեց և օգնական գնդեր ստանալով Վահանից նորա եղբօր Վարդ Մամիկոնեանի սպարապետութեամբ, խաղաց դէպի Միջագետք և նուաճեց Շմիդ և այլ քաղաքները. (Զամչեան.

Խորենաց. պատ. էջ. 169)։ Վահան այնուհետև մեռաւ ծերութեան հասակում 510 թ. և նորա տեղ Հայաստանի մարզպան հաստատուեց Կաւատից Վարդ Մամիկոնեանը։ Սա հազիւ չորս տարի միայն վարեց իւր իշխանութիւնը *։ Անհեռատես և նախանձոտ հայ իշխանները, երևի, երկիւղ կրելով, թէ մի գուցէ մարզպանութիւնն էլ սպարապետութեան նման ժառանգական դառնայ Մամիկոնեան տոհմի մէջ և այսպէս տակաւ առ տակաւ Մամիկոնեան նոր հարստութիւն դոյանայ, որ առհասարակ վայելում էր հայ ժողովրդի առանձին սէր ու յարգանքը, դիմեցին իւրեանց սովորական մատնութեան և ամբաստանեցին Վարդին Պարսից դրան առաջ և Կաւատ նորա փոխարէն Բուրդան պարսկին մարզպան ուղարկեց Հայաստան (515—518)։ Նորանից յետոյ նոյն Կաւատը նշանակեց Մժէժ Գնունուն (518—548), որի երեսուն տարուայ մարզպանութեան միջոցին Հայաստանի խաղաղութիւնը, համարեա, չխանգարուեց։ Ապա միմեանց ետևից եկան իբր մարզպաններ՝ Դենշապուհ (548—552), Վշնասպ-Վահրամ (552—558), Վարազդատ (558—564), յետոյ Սուրէն-Հիր (564—572)։ Սեբէոսի վկայութեամբ, Խոսրով Անուշ-ըռուանի թագաւորութեան 41-դ տարին, այն է 572 թ. Վարդան Մամիկոնեան **, հայոց նախարարների միաբանութեամբ ապստամբուեց Պարսից դէմ, սպանեց Սուրէն մարզպանին և բանակցութիւններ սկսեց Յունաց կայսեր Յուստինոս II (565—278) հետ, կայսերական զօրքերի օգնութեամբ Հայերը դիմեցին դէպի Դուին, քաղաքը առին, և Պարսից զօրքերին այնտեղից հալածեցին։ Սեբէոսը նոյն դէպքում Յուստինոս II-րդ անունը չէ տալիս, այլ ասում է միայն «թագաւորն Յունաց». բայց նայելով նորա ժամանակագրութեանը, դժուար չէ գուշակել, որ «թագաւորն Յունաց» Յուստինոս II-դն էր։ Զամչեանը յիշում է այս անունը, միայն Վարդան II-րդ Մամիկոնեանի ապստամբութիւնը դնում է 570 թ. տարբերութիւնը երկու տարի է միայն։ Վարդան II Մամիկոնեան (572—578) Յունաց օգնութեամբ կառավարեց Հայաստանը, որ նախարար-

* 510—515 ըստ Զամչեանի։
** Որդի Վասակի և թոռն Վարդ Մամիկոնեանի. Մ. Շ.

ների անմիաբանութեան պատճառով, դարձեալ ընկաւ Պարսից իշխանութեան տակ. եկաւ նոր պարսիկ մարզպան Ճիհրվզոն (578—583), Որմիզդ IV-ի կողմից։ Հետևեալ տասն տարի (583-ից մինչև 593) յայտնի չէ թէ որ մարզպանի ձեռքով էին կառավարում Հայաստանը Որմիզդ IV-ը (579—590) և Խոսրով II-ը Աւարուէզ (590—628), միայն 593 երկրի մարզպան կարգուեց Խոսրովից բազմայաղթն Սմբատ Բագրատունի (593—601), մի նոր պայծառ աստղ ապագայ թագաւորական հարստութեան, որից յետոյ հայ նախարարների խնդիրքով հաստատուեց Դաւիթ Սահառունին (601—625). որ, սակայն, վերջը, զզուած հայ իշխանների մատնութիւնից՝ հեռացաւ Կ. Պոլիս և նորա տեղ նշանակուեց Վարազտիրոց Բագրատունի, որդի բազմայաղթ Սմբատի. սա երկար չմնաց իւր պաշտօնում և երկիւղ կրելով հայ իշխանների և Պարսից ոանծգութիւններից, հեռացաւ իւր ընտանիքով դէպի բիւզանդացւոց սահմանները։ Այդ ժամանակների Հերակլ կայսեր փառաւոր յաղթութիւնների համբաւը տարածուել էր Ասիայի ամեն կողմերը. իսկ Սասանեանց հարստութիւնը արդէն խոնարհում էր դէպի անկումն. հայ նախարարները խնդրեցին կայսրից կրկին Դաւիթ Սահառունուն կառավարիչ նշանակել Հայաստանի վրայ. Դաւիթ կիւրապաղատ հաստատուեց Հերակլից. բայց երեք տարուց յետոյ նոյն նախարարները մերժեցին նորան և երկիրը կորուսին։ Միայն Թէոդորոս Ռշտունի քաջ զօրավարն էր, որ, ըստ Սեբէոսի «կազմէր զզաւրս իւրոյ կողմանն հանապազ և զգուշանայր զտիւ և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւճիրս զործէր 'ի թշնամեացն։ Եւ շինեալ զԱղթամար կղզի՝ անդ ապրեցուցանէր զբազում գաւառս» (էջ. 103)։

Սակայն հեռու Արաբիայի տօթ անապատներից թուխպ ու չարագուշակ ամպեր էին կուտակւում Հայաստանի գլխին և Թէոդորոս Ռշտունին ի՞նչ կարող էր անել դոցա դէմ իւր սակաւածեռն զնդով, երբ միւս իշխանները իրանց անձնական հաշիւներով էին ժամանակը վատնում. նոցա ի՞նչ փոյթ, որ երկիրը շուտով դժոխք է դառնալու և իրանց կուլ տալու։

Մ. Ցովհան

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1]

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

IV

Թոյլ տուէք նախ քան սրան մօտենամ, անցողակի կերպով մի ուրիշ հարց էլ առաջարկել։ Երբ հոգին, իբրև մի երևոյթ, որը գործնականապէս կարող ենք որոշել, դիտելով նրա կեանքի երևոյթները, իրօք փոխւում է, արդեօք կաղմութեան տեսակէտից է փոխւում, հոգու կենսաբանական բնոյթի հետ, թէ միայն երևոյթների ձևի փոփոխութիւն է այս, իսկ կենսաբանական նոյն տիպն է մնում։ Ինչպէս յետոյ կտեսնենք, հոգեբանական գլխաւոր երևոյթների պատմական նկարագրութիւնը թոյլ է տալի միայն յիշած երկու դէպքից վերջինը հաստատել։ Սակայն հակառակ տիրող կարծիքի, պէտք է կարուկ կերպով իրօք առաջինը պնդել։ Բոլոր հնարաւոր համեմատութիւններից պէտք է եզրակացնել, որ մարդկային հոգու տարուբերուող գիտակցութեան խորութիւնը, նոյնպէս պէտք է որոշ ֆիզիքական, ուրեմն և ֆիզիօլոգիական փոփոխութիւնների համապատասխանէ հոգու զգայարանների արտայայտութիւնների միջոցով։ Իրօք այս բանը անհատի կեանքում յատկապէս նրա մանկական ուղեղի աճեցման ժամանակ երևում է։ Այն հանգամանքը, որ զանազան կուլտուրական աստիճանների վրայ գտնուող զանազան ռասաների մէջ այդպիսի բան չի գտնուել, այս տեսակէտից խնդիրը ուսումնասիրողներին, որոնք դեռ սկզբնական աստիճանի վրայ են գտնուում, իրաւունք չի տալի ասելու, որ մարդը և յատկապէս նրա հոգեկան օրգանները ֆիզիօլոգապէս բացարձակօրէն քարա-

---

[1] Լումայ № 5—6

ցած են. մի բան, որ պատմական զարգացման տեսակէտից բացառութիւն կկազմէր։

Սակայն դառնանք գլխաւոր հարցին։ Ի՞նչ սկզբունքներով են կատարւում գիտակցութեան ընդլայնման փոփոխութիւնները։

Պարզ է, որ այս դէպքում հոգեկան աշխարհում բացարձակապէս քանակական փոփոխութիւնների հետ գործ չունինք, որովհետև ամեն հոգեկան բան, վերջի վերջոյ կենդանի երևոյթների արտայայտութեան համաձայն հէնց որակական է։ Սրա համաձայն ընդարձակուող գիտակցութեան խորութեան հետ առաջ եկած երևոյթն էլ չպէտք է քանակական հաշուի տակ դնենք։ Արդեօք հաւատո՞ւմ է իրօք որևէ մէկը, որ անհատական հոգեկան կեանքում առաջ եկող ընդարձակուող և տարածուող գիտակցութեան փոփոխութիւններից տրամաբանօրէն կարելի է եզրակացնել, որ անհատական հոգեկան կեանք ունեցող ամեն ոք սկզբում մանուկ, յետոյ երիտասարդ կամ օրիորդ, յետոյ այր կամ կին, յետոյ ծերունի կամ պառաւ պիտի դառնայ։ Ցայտնի փաստ է, որ հետևանքները և ազդեցութիւնները որակականի շրջանում չի կարելի բացասել, այլ աւելի շատ պէտք են այդ բոլորը։

Եթէ այս փորձառութիւնը մեր հարցի սոցիալ-հոգեբանական լուծման համար դործադրենք, կտեսնենք ինչպէս այս պատմական պրոբլէմը կփոխուի. այն է, մինչև այժմ եղած ամենակարևոր մարդկային համայնքների պատմութիւնից պարզել գիտակցութեան ընդլայնման զարգացման ընթացքը *։

Ամեն մի գիտական պատմութեան խնդիրը մարդկութիւնն

---

* Հէնց այն փաստը, որ ինչպէս շուտով կտեսնենք, այս ապացոյցը յաջողւում է, հնարաւոր է դարձնում միաժամանակ այս ժամանակաշրջանի բնոյթի քանակական շերտաւորումն էլ պարզաբանել։ Ցայտնի է որ ամեն մի վերացում դժուարին է և եթէ ինկատի ունենանք այն դժուարին պահանջը, որ մեր առաջ կայ, կտեսնենք, որ աւելի քան անհնարին է, երբ այն, ինչ որ վերացւում է և այն, որից վերացւում է, միևնոյն քանակական յաջորդականութեանն են պատկանում։ Համեմատել իմիջի այլոց վերջին պարբերութեան պարզաբանութեան համար—Lipps—Leitfaden der Psyphologie s. 338.

է։ Երբ այս քննութեան առնուի, պէտք է բնականաբար եզակի դէպքերի բաժանուի, որովհետև միայն այս ձևով հնարաւոր է որոշ մեթոդով տիրապետել այդ ահագին նիւթը, որը քննութեան նիւթն է և այդպիսով ձեռք բերել մի հաստատ գիտական յառաջադիմութիւն։ Եզակի մարդկային հասարակութիւնները, որոնք առանձնայատուկ նշանակութիւն ունին, համեմատաբար բնական զարգացման տէր են և սրանց վերաբերող նիւթը մատչելի է, պէտք է միայն իրենց հոգեկան կեանքի ընթացքում ուսումնասիրուեն։ Երբ այս պահանջն է դրուում, ստեղծուում է մի դրութիւն, երբ այս հարցը ազգային կուլտուրայի զարգացման ուսումնասիրութեամբ պէտք է սահմանափակելանկասկած ազգը մարդկային մեծ համայնքներից ամենականոնաւորն է, որն այս կապակցութեամբ հանդէս է գալիս։ Ազգային զարգացման խնդիրներում նրանք ամենից առաջ պէտք է ուշադրութեան առնուին, որոնց համար պատմական տեսակէտից գտնուում է մի ամբողջ յաջորդական շարք կուլտուրական ժամանակների և որոնց պարզ քննութեան համար կան բաղմաթիւ և մանրամասն ժամանակակից աղբիւրներ։

Եթէ այս մեթոդի պահանջներին մարդ հետևէ, կստացուի այն, որ առնուազն, ինկատի ունենալով ժամանակակից հետազօտութեան դրութիւնը, հիմնական հետազօտութեան համար ամենից առաջ միջին և արևմտեան Եւրոպայի ներկայ ազգերի պատմութիւնը պէտք է ի նկատի առնուի, եթէ սրանց մէջ ամենից լաւը փնտրելու լինենք, պէտք է կանգ առնենք գերմանական պատմութեան վրայ։ Սա յիշած կուլտուրական շրջանից, առանց նախնական միջերկրական կուլտուրական շրջանի ամեն ինչ փոփոխող ազդեցութեանը, կարողացել է զարգանալ։ Որը այս ազգերից իւր նախնական ժամանակի վերաբերմամբ կարող է այնպիսի մի ընդարձակ տեղեկութիւն ցոյց տալ, որպիսին Գերմանիայի համար տալիս է Տակիտոսի «Germania»-ն. մի վերջին մեծ վկայութիւն է սա, որը իւր մէջ ունի հռոմէական երկդարեան փորձառութեան յիշողութիւն գերմանների մասին. դասական աշխարհի գերիշխող ժողովրդի հայեացքների մի արտայայտութիւն է, ժողովուրդ, որը հին ժամանակում նշանաւոր

մարդկանց և ժողովրդների մասին տեղեկութիւն տալ կարող էր։ Միաժամանակ սա մի ժողովածու և շտեմարան է գերմանական աւելի քան հինգ սերնդի մասին եղած մանրամասն գրականութեան. բացի այդ կազմել է մի հեղինակ, որը ինքը դիտել է այնպէս, ինչպէս ոչ ոք նրանից առաջ և յետոյ, «Cermania»-ն միջազգային իրաւունքների մի յուշարձան է, որով հազար տարի առաջ և հազար տարի յետոյ եղած գերմանական անցեալը զարմանալի կերպով պարզաբանւում է։

Այս կապակցութիւններից առաջ եկան այն մի քանի հիմքերը, որոնք առիթ դարձան ինձ համար պատմագիտական ուսումնասիրութիւններ կատարելու նախ գերմանական պատմութեան մէջ. իհարկէ ոչ այն մտքով, որ սրանից 20 տարի առաջ արդէն գերմանական պատմութեան համար մի լուրջ ծրագիր ունէի. որ այն հիմքերը, որոնց մասին խօսում եմ, շատ պարզ իմ հոգու առաջ պատկերանում էին։ Երբ սկսեցի գերմանական պատմութիւնը գրել, այս դէպքում ոչ պակաս չափով դեր էր խաղում ազգային զգացումը, թէև յետոյ միայն այս նիւթի ընտրութեան ընդհանուր և յատկապէս միթոդի տեսակէտից ունեցած առաւելութիւնները, որ ես շեշտում եմ սոցիալ-հոգեկան կողմը, այս առաջ եկաւ այն ընդդիմից, որ ես շատ վաղ, սրանից քառորդ դար առաջ, ազգերի պատմական լինելութեանը կուլտուրական մեծ ժամանակների էի բաժանում։

Սակայն ինչպէս ուզում է թող լինի. զուտ փորձնական ճանապարհով և չաղդուած որևէ պատմափիլիսոփայական ուսմունքից գրուած գերմանական պատմութեան մէջ կուլտուրական ժամանակաշրջանների այն բաժանումը տեղ գտաւ, որը այս գրքի երեք քառորդ մասի հիմքն է կազմում[1]. ամենաշատը,

*) Այս բաժանումը և իմ պատմահայեցողութեան առանձնայատկութիւնը փորձում էին արդէն առաջ եղած ամեն տեսակ սիստեմներից և պատմահայեցողութիւններից, յատկապէս Կօնտի տուածից, հանել։ Ով որ ստեղծող է, այսպիսի բանասիրական աշխատանքի համար կարող է միայն ծիծաղ ունենալ։ Մարդկային ստեղծագործութիւնը միայն եղածը ընդունելով, փոփոխելով և մասերը միմեանց հետ միացնելով չի առաջ գնում և ոչ էլ միայն

որ սրա համար եղած գրականութիւնից անհատականութեան գաղափարը, ինչպէս որ Բուրկհարդն է պարզել, 15 և 16-րդ դարերի կուլտուրայի համար գտնուած էր։

Թէև գերմանական պատմութեան ընթացքում եղած կուլտուրական ժամանակները այնպէս, ինչպէս երկրորդ դասախօսութեան մէջ պարզել եմ, ամեն մի խորազննին հետազօտողի համար անվիճելի է, բայց քաղաքական պատմիչների համար այդ անընդունելի է, որովհետև այս դէպքում իրենց մինչև այդ ունեցած գոյութեան հիմքերը կխախտուին։ Այժմ հետևեալ հարցն է ծագում. արդեօք այս նոյն ընթացքը ուրիշ մեծ մարդկային համայնքների, յատկապէս այլ ազգերի, զարգացման մէջ կարելի՞ է տեսնել։ Առանց այլևայլութեան պարզ է, որ այս դէպքում պատասխանը գործնական ուղիով պէտք է տրուի, այսինքն ամենարնդարձակ տիեզերապատմական հետազօտութեան միջոցով։ Այսպիսի հետազօտութիւններ դեռ չեն եղել. այնուամենայնիւ այժմ էլ կարելի է ասել, որ հին աշխարհի ժողովուրդների պատմութիւնն էլ, յատկապէս յոյներինը սպասուող ձևով է տեղի ունեցել. ոչ պակաս նա և եւրոպական պետութիւնների ազգերի պատմութիւնը, որոնց հետ միասին և ճապոնացիների պատմութիւնը։ Այս դէպքում հնարաւոր է այսպէս ժամա-

---

այսպիսով պատմութիւնը։ Անմեթոդ և ոչ գիտական և ամեն տեսակի համեմատութիւն, որը չի սկսում նախ սոցիալ-հոգեկան տարրերի համեմատութիւնից, այլ սկսում է անհատական հոգեկանից, որովհետև անհատական հոգեկանը, նայած իւր հիմքին, ամեն դէպքում էլ անհատի ապրած ժամանակաշրջանի սոցիալ-հոգեկանի մէջ է ներփակուած։ Ով ուզում է իմ ըմբռնողութեան և երբէք չժխտած սրա ու կօնտի ըմբռնութեան մէջ եղած մասնաւոր նմանութիւնը հասկանալ, նրան նախ հարցնում եմ, ինչ նման տարրեր կային Ֆրանսիայի 19-րդ դարի առաջին կիսի սոցիալ-հոգեկան կազմութեան և Գերմանիայի 19-րդ դարի երկրորդ կիսի հոգեկան կազմութեան մէջ, որ սրանցից նման հայեացքներ ծնէին։ Որևէ ուղղակի կամ անուղղակի պարզ կախումն Կօնտից ես չեմ ունեցել և եթէ դեռ էլի պնդեն, պէտք է իբրև ապացոյց բերեմ իմ ըմբռնութեան համար այն ձեռագիրը, որը բարեբախտաբար մնում է իմ ուսանողական ժամանակից (19-րդ դարու 70-ական թուականների վերջից)։

նակով և տարածութեամբ հեռու գտնուող ազգերի պատմութեան ընթացքում նոյնութիւն գտնել, որ ուրեմն գերմանական պատմութեան օրինակով գտնուած զարգացման աստիճանները բաւարար և ընդհանրապէս գործադրելի տարրեր են միւսների պատմութեան զարգացման համար ևս։

Ի՞նչպէս կարող էր այս ուղիղ չլինել. այլաբանական, տիպիկ, սովորական, անհատական և անձնական հոգեկան կեանքի ընթացքը մեծ, հոգեկան պատկեր և աւելի ու աւելի ուժեղացող հոգեկան կեանքի, հոգեկան դիմի կրկնատատկման, գիտակցութեան աճող ընդլայնման։ Պատմութեան ընթացքը տանում է դէպի այն կողմը, որ նախկին ժամանակներին յաջորդում է սկզբում քիչ շերտաւորուած անձնականութեան ժամանակը՝ երբ շերտաւորումը աւելի է մեծանում. այս եզրակացութիւնը շատ ընդհանուր է և վաղուց արդէն ճշտուած, մինչև իսկ ըստ ինքեան հասկանալի պատմական փորձառութեան արդիւնք է նկատւում։

Անշուշտ այն մասին, թէ մի ժողովրդի նոյն իսկ սովորական զարգացումը պէտք է ունենայ զարգացման այս աստիճանաւորութիւնը, ամեն տեղ հիշտ այնպէս, ինչպէս ես գտել եմ գերմանական ժողովրդի համար, խօսք էլ չի լինի։ Ես մի կողմն եմ թողնում այն հնարաւոր սխալները, որ կուլտուրական աստիճանները իրարից բաժանելու դէպքում առաջ կգային. մի բան, որ առաջին այսպիսի փորձում ոչ միայն ներելի է, այլ և շատ հաւանօրէն առաջ կգայ և առաջ է եկել. երկրորդ դասախօսութեան մէջ իմ գրուածքի մէջ եղած այդպիսի սխալները լուսաբանելն ուղղել եմ։ Աւելի կարևոր է, որ այն, ինչ ամեն մի ժամանակաշրջանում իրօք տիպիկ է միայն մի ազգի զարգացման խնդրի պարզաբանութեան դէպքում կարելի է զգոյշ, բայց ոչ թէ կատարեալ վստահութեամբ մաքրել, դուրս բերել։ Որովհետև այս դէպքում տիպի պարզաբանութեան համար պէտք է միշտ համեմատութեան դիմել, ուստի պարզ է, որ աւելի վստահ առաջ գնալու համար հարկաւոր է ունենալ առնուազն համեմատութեան երկու առարկայ։ Ի հարկէ իմ գերմանական պատմութեան մէջ կուլտուրական ժամանակները բաժանուել են

ոչ առանց ուշադրութիւն դարձնելու ժամանակակից Եւրոպա-
կան և հին դասական Միջերկրեայ ծովի մօտ ապրող ազգերի
և վերջում ճափոնական ազգի զարգացման աստիճաններին. այ-
նուամենայնիւ մեծ տարբերութիւն կայ մի քանի ուղեցոյցների
միջոցով միայն մի ուղիով առաջ գնալու և մի նպատակ որո-
նելու մէջ շնորհիւ բազմաթիւ նման և կեդրոնական ճանապարհ-
ների միաժամանակեայ օգնութեան։ Այսպիսով կասկած չկայ,
որ իմ գրքում իսկական և լրիւ կուլտուրական ժամանակաշրջա-
ններում տիպերը դեռ ևս չկան, այս հնարաւոր է ծեռք բե-
րել միայն տիեզերապատմական համեմատութեան ժամանակ
բազմաթիւ ազգերի զարգացումը. սկզբունքով լրջ բոլոր մարդ-
կային համախմբումների զարգացումը, զատելով անհատականը
և եզակին և շեշտելով ընդհանուրը։

Զատել եզակի և անհատական տարրերը։ Արդեօք մարդ
ղդում է, թէ այս խօսքերը ի՞նչ են նշանակում։ Ի՞նչ սարսա-
փելի աշխատանք է պահանջում այս զատումը. ի՞նչքան հազա-
րաւոր հարցեր կան սրա մէջ ոչ միայն պատմական, այլ և աշ-
խարհագրական, ընդարձակ մտքով առած։ Ի՞նչ դեր են խաղում
ռասսայնական տարրերը և սկզբնական ընդունակութեան մնա-
ցորդները։ Այնուամենայնիւ սրանք դեռ միակ դժուարութիւն-
ները չեն։ Ցիշենք, որ ամեն մի հոգեկան գործողութիւն հա-
մարեա զանազան տեսակ լուծումն է ստանում, որ օրինակ այն-
պիսի մի պարզ բան, ինչպիսին զուգորդութիւնները նմանու-
թեան սկզբունքով վերարտադրելն է, հազարաւոր հնարաւորու-
թիւններ ու պայմաններ ունի, որ համաձայն երևակայութեան,
եռանդի պայմանների ու ներքին միութեան ձգտման խորու-
թեանը, կամքի բազմաթիւ տեսակներն են զարգանում, որ հո-
գեկան ոյժի աստիճանը գրգիռների ու սրա հետևանքների շեր-
տաւորման ընդունակութիւնը, այլ և վերջապէս եզրակացու-
թեան ընդունակութիւնը բազմաթիւ. զուգորդութիւններով են
երևան գալի և այսպիսով առաջ են բերում հոգեկան կեանքի
միմեանցից բոլորովին տարբեր ձևերը։ Պէտք է հարցնել, արդեօք
հնարաւոր է, որ հոգեկան ոյժերի այդպիսի ազդեցութիւնների
ու միատեղ եզակի բազմատեսակ տարբերութեան դէպքում ընդ-

հանրապէս մարդ մտածի, թէ մարդկային մեծ խմբակցութիւնների զարգացման հիմնական գծերը ընդհանուր են։

Տուած հարցերը լուծելու համար պէտք է նախ յիշել, որ այս դէպքում երբէք խնդիրը այն մասին չէ, թէ զարգացման նոյնութեան օրէնքը պնդւում է կամ ուզում են ցոյց տալ· հարց կարող է ծագել միայն նմանութեան, նման և ոչ նման կողմերի յարաբերութեան մասին։ Ի՞նչպէս կարելի է մի կամ մի քանի օբիեկտների մէջ եղած նմանութեան և տարբերութեան գիտակցութիւնը ձեռք բերել։ Այն ձևով, որ այս նիւթերից ամէն մէկին վերացնելով տեղից և ժամանակից ուշադրութեամբ քննում եմ և ամէն մի իրի քննութեան արդիւնքը իրար մօտ դնում։ Այո՛, պարոններ, վերացնելով ժամանակը և տեղը։ Մեր խնդրի համար այս նշանակում է, որ ես եզակի, մեծ, տարբեր մարդկային համայնքներին առաջին հայեացքից իսկ իրար հետ հաղորդակցութիւն ունեցող, ամբողջական, մեթոդոլոգիական վստահութեամբ համեմատութեան համար իրար մօտ եմ դնում, առանց ուշադրութիւն դարձնելու այս համեմատութեան համար ժամանակի և տարածութեան սահմանաւորման վրայ։

Երբ այս անում եմ և ապա աւելի մօտից եմ դիտում ժամանակաշրջանները, բնականաբար նախ հարց է ծագում, թէ արդեօք այս միլիօնաւոր և միլիարդաւոր հոգեկան անցքերի համար, որոնք հէնց միայն մի ժամանակաշրջանում են տեղի ունենում, նոյն այս ժամանակաշրջանի համար մի ընդհանուր մօտեցում կարելի՞ է ճարել։ Ինչպէս գիտէք, այս հարցին քաղաքական պատմութեան կողմնակիցները բացասական պատասխան են տալի, անշուշտ առանց ուշադրութիւն դարձնելու, որ այս քննութեան ժամանակ լուծեն հոգեբանական և իմացաբանական հարցերը· նոյն իսկ կուլտուրական պատմութեան նիւթը, որը այս հարցի լուծման համար պէտք է առաջ քաշուի իւր ամբողջութեամբ, լուրջ հոդատարութեան առարկայ չի դառնում։ Երբ այս բանը կատարւում է, այն ժամանակ երևում է նիւթի ոչ միայն պատմական-գործնական միութիւն, այլ և առաջ է գալի մի ընդհանուր հոգեբանական դիտողութիւն, որը ոչ միայն

բացատրում է, այլ և կարիք է զգում այդ միութեանը. բոլոր միաժամանակ տեղի ունեցած հոգեկան անցքերը մի տենդենց ունին-այն է իրանց մէջ եղած տարբերութիւնները վերացնել։

Եթէ դիտողութեան նիւթում եղող ամեն մի ժամանակաշրջանի հոգեկան անցքերում կայ մի միութիւն, այն ժամանակ հարց է ծագում, ի՞նչ սկզբունքով այս տարբեր ժամանակները մի փոքր առաջ նկարագրուած եղանակով պէտք է իրար հետ համեմատել։ Ես կարող եմ կամ նիւթի համեմատութեան առարկաները իբրև ամբողջութիւն ի նկատի ունենալ, կամ թէ կարող եմ նիւթը մասերի բաժանել, որ սրանց հիմք եղող տարրերը զատեմ և սրանց միմեանց հետ համեմատեմ։ Համեմատութեան առաջին եղանակը եղել է նախկին կուլտուրական պատմութիւնը. ծանօթ հոգեբանական և իմացաբանական օրէնքների հիման վրայ պէտք է երկչոտ համեմատութեան ճանապարհ ցոյց տային։ Ուստի այս տեսակ համեմատութեան ապացոյցների հիման վրայ եզակի ժամանակաշրջանների կապակցութեան վերաբերմամբ հնարաւոր էր խելօք նկատողութիւններ անել. սակայն աչքի ընկնող ընդհանուր կողմեր ունենալու վերաբերմամբ ապացոյցներ չէր տրւում։ Այս բանին հասնելու համար պէտք է երկրորդ տեղը յիշուած ճանապարհը ուշադրութեան առնուի. այս դէպքում այդ նշանակում է թափանցել մինչև ամենախորքը և հիմքը կազմող հոգեկան տարրերը։ Այս բանն է, որ իմ գերմանական պատմութեան կուլտուրական ժամանակաշրջանների բնորոշման դէպքում տեղի է ունեցել. այստեղ է ահա իմ աշխատանքի մեթոդոլոգիական նորութիւնը։

Ենթադրենք թէ գտնուած կուլտուրական ժամանակաշրջանները այս տեսակէտից քննութեան դիմանային ոչ միայն գերմանական պատմութեան, ինչպէս և իրօք եղել է, այլ և տիեզերական պատմութեան մէջ եղող միւս ազգերի պատմութիւնների վերաբերմամբ. արդեօք սրանով ի՞նչ բանի հասած կլինենք։

Պարզապէս եզակի կուլտուրական ժամանակների բնութագրութեան համար և նրանց միևնոյն եղանակով ընթանալու հեռանքների համար գործնական վճիռների մի ահագին

քանակութիւն ձեռք կբերուէր, որը ամեն տեսակ փորձառութիւնների համադրութեան արդիւնքը կլինէր, որոնք կարող էին նրանց համար քննութեան առնուել և այն բոլոր հակառակ հիմքերի համար, որոնք սրանց դէմ իբրև արժէք ունեցող մէջ կբերուէին։ Օգտուելու միջոց ծառայողների խմբում եղող փորձառութիւնը անպայման ուղիղ կլինէր։ Այս դատողութիւնը մի օբիեկտի համար չէին անի, որը միայն մի որոշ ժամանակում ու տեղում պէտք էր քննութեան առնուէր այլաբանական տեսակէտից որոշուած հաւատալի նիւթի ամբողջ իրականութեան վերաբերմամբ։ Փորձառութեան համապատասխան ճշմարիտ դատողութիւնները, որոնք որակի տեսակէտից որոշուած նիւթի իրականութեան վերաբերմամբ են արւում, կոչւում են օրէնքներ։

Ինչ որ կարելի էր անել այն է, որ կարելի է ցոյց տալ, թէ մարդկային մեծ համայնքների սոցիալ-հոգեկան զարգացման մէջ մի միատեսակ ընթացք է իշխում։

Այս կապակցութեամբ յաջորդող կուլտուրական ժամանակների յաջորդականութեան համար անհրաժեշտ, գործնական արժէք ունեցող ապացոյցներ դեռ չկան. թէև ես իմ տարիներից ի վեր արած փորձերի հիման վրայ կասկած չունեմ, որ այդ բանը հնարաւոր կլինի տիեզերապատմական համեմատական ուսումնասիրութիւնների միջոցով։ Այս դէպքում անհրաժեշտ էաւելի արդիւնաւէտ եղակի աշխատանքը, այսինքն երկար ժամանակ և անխոնջ տոկունութիւն։ Նախ քան այս ուղղակի ապացոյցը ձեռք կբերուի—իսկ ես յոյս ունիմ, որ իմ կենդանութեան ժամանակ ձեռք կբերեմ—մի ուրիշ ճանապարհ էլ կայ այս սպասուելիք հետևանքները ապահովելու. այս ճանապարհն է՝ եղակի ազգային պատմութեան կուլտուրական ժամանակների ընթացքը մանրամասն հոգեբանական հետազօտութեան ենթարկել։

Այս մտադրութեան համար էական մօմենտը եղակի կուլտուրական ժամանակի ընթացքի հոգեկան մեխանիկան է։ Յիշենք, որ այս դէպքում շատ, իրար մօտ գործող, ոյժեր են եռևան գալիս. երևոյթների աշխարհի ոյժը, որը շարունակ գրբ-

գիտների ու զուգորդութիւնների հնարաւորութիւններ է բերում և սոցիալական հոգու ոյժը, որը այս երևոյթներին երկար փորձութիւններից յետոյ իւր ոյժին է ենթարկում և աշխատում է տիրապետել կրկին ու կրկին բաժանման (վերլուծման) և կապակցութեան (համադրութեան) միջոցով։

Ի՞նչ յարաբերութեան մէջ են այս երկու ոյժերը։

Այստեղ պէտք է շեշտել նախ այս կարծիքը։ Հոգու երբեմն տիրապետող ոյժը, որին ես գերիշխող ոյժ էի ասում, իրօք մի պատրանք է. նա գոյութիւն չունի ամենևին. կապը բոլորովին այլ է։ Հոգու մէջ եղած պատմական հնարաւորութիւնները, որոնք արտաքին հոգեկան ազդեցութեան եղանակներ են, նկարագրում են մի մեծ սահման. որոնց ասում ենք մի շրջանի տարածութիւն։ Այս շրջանի ներսում երևոյթների աշխարհի դրդման շնորհիւ երբեմն այս երբեմն այն սեղմենդը առաջ է մղում գործողութիւն և այսպիսով որոշ ժամանակի պատմութեանը գերիշխում։ Այն, ինչ որ երբեմն սկսում է գործել իւր գործունէութեան մէջ, կախուած չէ ամենևին սոցիալական հոգուց, այլ պատահական արտաքին դրդիռներից։ Պատմութիւնը մի գեղագիտակ է (կալէյդոսկոպ), որը հոգեկան տարրական երևոյթներից որոշ խմբակցութիւններ կազմելու հրնարաւորութեան մի դումար ունի. այս հնարաւորութեան մէջ ամփոփուած պատկերները արտաքին «մեքենական» դրդման միջոցով առաջ են գալի երբեմն այսպէս, երբեմն այնպէս։ Ընդ սմին այնուամենայնիւ ամեն մի պատկերում դիտողի համար շնորհիւ նրա բնածին կամ դաստիարակութեամբ ձեռք բերած յատկապէս գեղագիտական դիտողութեան կարիքի մի կեդրոն է լինում. այստեղից արդէն պարզ է այնքան հեշտութեամբ և միշտ նորից կրկնուող պատմութիւնը գեղագիտական դիտողութեան ենթարկելու պահանջը. այլ և այն ոգիացման կարիքը, որը պահանջում է այդ կեդրոնը անծնաւորել. այստեղից պարզ է, թէ ինչպէս շատ բնական է եղել այն խաբուսիկ մտապատկերը, որ իբր թէ երբեմն գերիշխող ոյժ կար։

Մի կուլտուրական ժամանակաշրջանի հոգեկան մեխանիկայի դիտողութեան ժամանակ առաջ եկաւ ըմբռնողութեան

այն ձևը, որը քննութեան այնպիսի սահմանափակ շրջանում այնքան դժուարութեամբ ետ մղուեց. իսկոյն անբաւարար կը-դառնայ, հէնց որ որևէ մարդկային խմբակցութեան բաղմաթիւ կուլտուրական ժամանակների ընթացքները իրար մօտ քննութեան առնուին: Ամեն տեսակ պատմական փորձառութեան միածայն վճռի համածայն երևում է, որ այդ ժամանակաշրջանները երբէք պատահական չեն և առանց ներքին կապակցութեան չեն հետևում իրար: Աւելի շուտ նրանք գնում են մի դժի աւելացումը կամ թուլացումը, կամ շարունակաբար դէպի հոգեկան ոյժի աւելացումը կամ թուլացումը, ուրեմն հասնում են զարգացմանն նախ գերիշխող ոյժի աճեցման, ապա թուլացման:

Հեռևապէս այս գերիշխող ոյժը արտաքին որևէ կերպով շարժող սոցիալ-հոգեկան ոյժի պարզ արտայայտութիւնը չէ, և ոչ էլ մանօմետ կամ կարդաւորիչ որևէ հոգեկաթսայի կամ շոգեմեքենայի, այլ նա անկախ մի բան է, մի բան, որը իւր մէջ ունի զարգացման որոշ ոյժ, որը յատկապէս արտաքին ազդեցութիւնների շնորհիւ կամ առաջ է քաշւում կամ ետ մղւում, երբէք սակայն իւր ներքին ընոյթի ազդեցութեան տակ փոփոխութիւնների չի ենթարկւում:

Եթէ կանգ առնենք և նայենք հոգեկան և ֆիզիքական աշխարհների այս իւրատեսակ պայմաններին նմանութեան տեսակէտից կտեսնենք, որ այս ամենևին առանձնացած չէ. խնդիրը աւելի շուտ վերաբերում է մի ընդհանուր կենսաբանական սկզբունքի:

Անհատական հոգին էլ մի բեմ չէ, որի վրայից արաղ թռչում են զուգորդութիւնները և պատկերացումները, զգացումները և ձգտումները. նա նախ մի ես է: Ոչ ոք մեզանից մեզ վրայ ազդող իրերի արդիւնքը չէ. ամեն մէկը իրաւունք է յայտնում անձնաւորութիւն և բնաւորութիւն դառնալու: Ոչ մի բոյս ոչ մի կենդանի, ոչ մի կենդանի էակ ընդհանրապէս չի կարող իւր միլիոնաւոր տարիների ընթացքում ունեցած զարգացումը միայն արտաքին պայմանների ազդեցութեան միջոցով բացատրել. նա իւր զարդացման համար ունենում է մի բնածին ուղղութիւն, իւր սեփական ձևը և իւր յատուկ գեղեցկութիւնը:

Երևում է, ինչպես շոշափած հարցերը մեզ տանում են Դարվինին նման զարգացման տեսությունը բացատրողների քննությունների։ Այստեղ իշխողը միակողմանի մեխանիկական բացատրությունն է, որը հետևանք է բնագիտության արդեն դարուկէսուայ ունեցած մեխանիկական զարգացման, մի գեղեցիկ բացատրություն հոգեկան ժուլությեան օրէնքի. միւս կողմից հոգեկան երևոյթներին նմանօրինակ մեխանիկական բացատրություն տալը ժամանակաւոր նշանակություն ունեցաւ միայն։ Նա էր և պէտք է լինէր նորագոյն բնականության տարիներում գեղարուեստի ու գիտության առանձնայատկությունը, որը և նորագոյն կուլտուրական պատմության շրջանի համար անցման շրջան էր կազմում։ Նրանց մէջ նոր գրգիռների խիստ ու փոթորկալի հոսանքը սոցիալ-հոգեկան նաև անհատական հոգեկան կեանքի գերիշխող ոյժերին, այսպէս ասած, ինքնիշխան գրգիռների լուծումով ու ծգտման պայմաններով ուղղեց համարեա թէ։ Այս պատճառով նոյն իսկ փորձառու հոգեբանները, եթէ նրանք նոյն իսկ փորձնական հոգեբանության հետևողներ էլ լինէին, դժուարությամբ էին կարողանում պարզել խնդիրը։ Այժմ այս բացառությունը կազմող ժամանակից անցել ենք և այժմ անհատական հոգեկան, այլ, սոցիալական հոգեկան գերիշխող ոյժը նորից ընդունվում է։

Եթէ անհատական և սոցիալական հոգեկան կեանքը մեխանիկօրէն չի շարժվում, այլ հոգեկան միությունը իրարից տարբերվում է ու շեշտվում իւր օրէնքների համաձայն, շնորհիւ հոգեկան ոյժի մշտական աճեցման (ի հարկէ վերջում էլ թուլացման), ապա այսպիսի զարգացման եզակի օրինակներում պէտք է իրենք ներքին ու տարրական պրոցէսներով իրար նմանեն. ինչպէս որ անհատական հոգին զարգանում է անցնելով երեխայի, երիտասարդի, այրության ու ծերի ժամանակները, այսպէս և սոցիալական հոգու համար պէտք է զարգացման մի օրէնք գոյություն ունենայ, որը որոշ թուով կուլտուրական ժամանակների անխախտ յաջորդականության մէջ է գործում։

Այս է էական և զուտ հոգեբանական այն տարրական բանը, որ այժմ շնորհիւ պատմական-հոգեբանական հետազոտությունն-

ների կուլտուրական ժամանակի մասին կարելի է ասել։ Թէև այս գաղափարը ամբողջական պատմական փորձառութեամբ բազմակողմանի պարզուած չէ, այնուամենայնիւ շնորհիւ մարդկային հոգու մասին արած լաւ հետազօտութիւնների երևում է արդէն բաւական օրինական ձևով ապահովուած։

Այս բանը ամուր է. մի կողմ թողնելով նրա օրէնքի համապատասխան լինելը հիմնաւորապէս ոչ ոք չի ժխտում, թէև շատերը շատ էլ օգտակար ձևով չեն գործադրում. այս դէպքում մի հարց էլ է առաջ գալի, որը բազմապիսի և դուցէ չափազանցութեան հասած հետաքրքրութիւն առաջ բերի. այն է եզակի անհատի յարաբերութիւնը դէպի այն կուլտուրական ժամանակը, երբ նա ապրում է։

Թէև դերմանացի պատմաբաններից շատերը այս նախադասութիւնը զօրեղ պայքարից յետոյ միայն ստիպուած ընդունեցին, բայց հասկանալի է, որ ամեն ոք, ինչ կուլտուրայի ժամանակ էլ որ ապրում է, սրանից կախում ունի, այս մտքով իւր ժամանակի որդի է։ Այս նոյնը պէտք է ասել նաև խոշորագոյն անհատների վերաբերմամբ և հէնց սրանք են այս բանը միշտ էլ ընդունել. իսկ այս օրէնքի ժխտումը անցեալը իդէալիստական գեղեցկութեամբ զարդարող, այլ և նոր ժամանակի համար անցեալի ամենաբարձր ու զարմանալի աստիճանին հասցնող հերոսների կուլտը, այս պատմագիտութեան համար ամենից աւելի վտանգաւոր թշնամի առաջ բերող յիշողութիւնից վաղուց է դուրս ծգել։ Խնդիրն այն չէ կախում կայ թէ ոչ, այլ այն՝ թէ մեծ է, ինչ աստիճանի և ի՞նչ ձևով է լինում։

Երբ մարդ ի նկատի է ունենում բարձր և ցածր աստիճանների կուլտուրաների անձնաւորութիւններին, ամենից առաջ այն հոգեբանական օրէնքն է արժէք ստանում, թէ որքան հոգեկան կեանքի մէջ կատարուող անցքերի և սրանց մասերի միութեան յարաբերութիւնները խորն են, այնքան աւելի սրանց հոգեկան միակերպութիւնը շատ է լինում։ Ցայտնի է, որ միութեան յարաբերութիւնները կուլտուրական ցածր աստիճաններում աւելի խորն են, քան բարձր աստիճաններում, որովհետև եզակի անձնաւորութիւնների անհատականացումը շնորհիւ ընդ-

հանուր կուլտուրայի չնչին շերտաւորման, քիչ է առաջ գնացած լինում. ուրեմն այս յարաբերութիւնների ըմբռնումը եզակի անձնաւորութիւնների համար աւելի պարզ է, կամ, այլ կերպ ասած, եզակի անհատի կախումը իւր ժամանակի կուլտուրայի աստիճանից աւելի մեծ է, քան բարձր զարգացման ժամանակաշրջանում։

Եթէ յատկապէս ի նկատի ունենանք բարձր աստիճանի զարգացման հասած կուլտուրան, նախ կտեսնենք, որ ինչ ձևով էլ լինի, ամենքն էլ յանախ սոցիալական շերտաւորման հարուստ աստիճանաւորութեամբ ունենում են երկար անցեալի յիշողութիւն։ Յաճախ այս յիշողութիւնը բթացած է լինում, մինչև իսկ անգիտակցութեան է հասնում, առնուազն խոր զգացումների ու ձգտումների տարրին նայած նոր ներկային խիստ համապատասխան է. այնուամենայնիւ պարզ է, որ այս տարրերը, ինկատի չառած ժամանակների խիստ շերտաւորման դէպքերը, միութեան ձգտման գործողութեան մէջ ընդհարում են առաջ բերում, որից եզակի անհատը հոգեկան գործողութեան համար շատ մեծ անձնական ընդարձակութիւն է ձեռք բերում։

Այս դէպքում հարց է առաջ գալի թէ նախ՝ անհատական հոգեկան ազատութեան տարբերութիւնը ի՞նչպիսի է զանազան կուլտուրական ժամանակներում։ Կարծես թէ այսպիսի պատասխանի ենք սպասում, որ բոլոր անհատները միատեսակ ազատ կամ կաշկանդուած են կամ ամենից առաջ հերոսները, աչքի ընկնող անհատները ոչ կատարեալ ազատութիւն ունին։

Այսպիսի պարզ պատասխան տալ չի կարելի։ Աւելի շուտ պէտք է սովորական ու աչքի ընկնող անհատների մէջ եղած տարբերութիւնը պարզուի և ապա այս տարբերութիւնը գտնելուց յետոյ ընդհանուր պատասխան տրուի։

Անհատների տարբերութիւն։ Արդեօք սա մի անսպառնիւթ չէ՞։ Արդեօք տեղին չէ այն խօսքը թէ individuum est ineffabile։ Անշուշտ անհամար ստորաբաժանումներ կան այս խնդրում սկսած լուսոյ, բարձրի, ծնողի բևեռից մինչև անպէտքի, ըստ երևոյթին միայն նմանողի և նմանութեան մէջ էլ կրաւորականի մութ աշխարհը։ Այնուամենայնիւ այստեղ էլ, ինչպէս

և ամեն տեղ պէտք է ճանաչել և շեշտել սահմանները. մեր մտածողութիւնը պարզելու տնտեսութեան օրէնքին է ենթարկւում: Արդէն վաղուց դժուած են այդ սահմանները: Մենք յատկապէս խօսում ենք նրանց մասին, որոնք այդ երկու ծայրերից որևէ մէկին են պատկանում, որոնք միջին տեղն են բռնում և վերջապէս անհատների մասին: Երբ այս ու նման տարբերութիւնների մասին ենք խօսում, այս ոչ այն տարբերութեան ստիճանների պատճառով, որից եզակի անհատներին իրենց ժամանակի հոգեկան տարրից կախումն կամ ոչ կախումն են ընդունում:

Այսքանը առնուազն պարզ է. մի խումբ զատում ենք և պնդում, որ այդ խումբը իւր ժամանակի սոցիալ-հոգեկան տարրերից ըստ կարելոյն քիչ կախումն ունի: Այս խումբը հանճարների խումբն է: Ի՞նչ դրութիւն ունին սրանք: Այս հարցի պատասխանին մօտենալու դէպքում պէտք է ընդհանրապէս անհատի և կուլտուրայի պրոբլէմի լուծման համար մի հայեցակէտ ձեռք բերենք:

Հանճարը յատուկ ստեղծագործողն է. այս ընդունելի է ամենքի համար: Բայց հոգեկան ո՞րպիսի կազմուածքից է առաջ գալի այս ստեղծագործութիւնը. այս որոշ է: Խնդիրն այն չէ, ինչպէս գերզգայականները միշտ էլ ուզում են հաստատել, որ մի յատուկ ոյժ կայ վերևից տուած, որը էլՕհիմը ընդհանուր մարդկային ոգիները ստեղծելուց յետոյ կիրակի օրուայ որդոցը յատկապէս ու առանձնապէս ներշնչել է: Ընդհանրապէս միւս հոգիներից հիմնական որակով տարբերութիւն չունին սրանք, այլ չափից դուրս հոգեկան ոյժ: Այս ոյժը կարող է զանազան եղանակով բաժանուած լինել կամ ներդաշնակ այնպէս, որ հոգեկան բոլոր յատկութիւնները միատեսակ կբարձրանան կամ անները դաշնակ այնպէս, որ հոգեկան մի կամ մի քանի յատկութիւններ ի հաշիւ միւսների մի այնպիսի չափի կհասնեն, որ նոյն իսկ հեշտութեամբ հիւանդագին դրութեան կհասնեն: Ըստ այսմ կարող ենք հանճարներին բաժանել աններդաշնակների և ներդաշնակների:

Այս դէպքում սակայն խնդիրը այնքան յատկութիւններին չի վերաբերում, որքան նրանց պատմական գործունէութեանը:

Այս դէպքում պարզ երևում է, որ տնտեսական հանճարները անցման ժամանակներում մեծ ազդեցութեան են հասնում, որովհետև այդ ժամանակուայ հոգեկան մեխանիկան դրանց համար յարմար է։ Իսկ ներդաշնակները ընդհակառակը, լրացած կուլտուրայի ժամանակ են աւելի երևում։ Արդէն այստեղից հետևում է, թէ հանճարների գործունէութիւնը ո՞ր աստիճան սոցիալ-հոգեկան կազմակերպութիւնից է կախուած։ Ի՞նչ դրութեան մէջ են այսպէս ասած սխալուած հանճարները. պէտք է ասել, որ ոչ միայն անտեսական հանճարները ամբողջացած կուլտուրայի ժամանակ, ներդաշնակները նոր սկսող անցման կուլտուրայի ժամանակ իրենց գործունէութեան համար ոչ մի յարմար դաշտ չեն կարող գտնել, այլ և անտեսական հանճարները անցման ժամանակի կուլտուրայի համար յատուկ նշանակութիւն կունենան այն ժամանակ, երբ այս անցման ժամանակի համապատասխան անտեսական են, իսկ ներդաշնակները միայն այն ժամանակ, երբ նրանց համար նոյնպէս համապատասխան հանրական դրութիւններ կան։

Կարճ, ուր էլ նայում ենք, նոյն հեւանքն ենք տեսնում. հանճարն էլ կուլտուրական ժամանակաշրջանում է ներփակուած և այն ժամանակ է լրիւ ծաղկում, երբ այդ ժամանակաշրջանի զարգացման ուղղութեամբ է գործում։ Զարգացման այս ուղղութիւնը կախուած է առաջները զարգացած սոցիալ-հոգեկան գերիշխող ոյժից։ Մի խօսքով ասենք, նոր ժամանակի մեծ հանճարներից մէկը, այն էլ ստեղծագործող մի այնպիսի շրջանում, որը ըստ երևոյթին ընդարձակ քմահաճոյքով գործունէութեան սահմաններից դուրս է, այսինքն քաղաքագիտութեան մէջ, իշխան Բիսմարկը իւր կեանքում իրր փորձառութեան արդիւնք ասում է unda fert nec regitur։

Ուրեմն բոլորս, մեծ ու փոքր սոցիալ-հոգեկան ոյժից միատեսակ կախումն ունինք և ուրեմն կուլտուրացումն կամքի սարկացո՞ւմ է իշխում։ Ի՞նչպէս սխալ հասկացած կլինի նա մինչև այժմ եղած բացատրութիւնները, ով որ այս տխուր եզրակացութիւնը կ'հանի։ Ի հարկէ մենք որոշ կուլտուրայում ենք ապրում, մենք մեր ժամանակի սոցիալական հոգու մասերն ենք.

այս նշանակում է անհատական ու սոցիալական հոգեբանութեան տեսակէտից նայած ինքն իւր մէջ կենդանի և իւր գործունէութեան մէջ երբէք հակասութիւններից ոչ ազատ մի օրգանիզմ։ Ինչպէս եղակի մարդկանց համար, այնպէս էլ մարդկային հասայնքների համար կայ մի մեծ հոգեկան ընդարձակութիւն, ուր որ հակառակ մտապատկերները, ձգտումները, զգացումները կարող են դեր խաղալ։ Երբէք անհատները կամ հասարակութիւնները «հնարուած գրքեր» չեն, այլ օրգանիզմներ «իրենց հակասութիւններով»։ Սակայն ինչպէս եղակի անհատների հոգու ընդարձակութիւնը այնքան հեռուն չէ գնում, որ մի ժերունու հետաքրքրական կրածները երիտասարդի հասակում, կամ երիտասարդինը ծերի հասակում հնարաւոր լինէր կրել, նոյնիսկ ծանր հիւանդագին դրութիւններում, այնպէս էլ մի մեծ հասարակական զարգացման հոգեկան ընդարձակութիւնը այնպէս չէ, որ իրեն պատկանողներից ամեն մեկին կուլտուրական ժամանակի հակառակ կեանք կամ եղակիներին հոգեկան ժամանակից ու տեղից կատարեալ ազատութիւն տայ համապատասխան իրենց դոյութեանը։

Այս շրջանում եղող աւելի ընդարձակ մանրամասնութիւնների մէջ չպէտք է ընկնել։ Կարող է պատահել, որ վերջում մատնանիշ արած ուղղութեամբ գնացող պատմական ընթացքի տարրերը մի անգամ էլ լաւ պարզուեն այն ժամանակ, երբ տիեզերապատմութիւնը հոգեբանօրէն քննուի։ Առայժմ հոգեկան մեխանիկայի ընթացքում եղող եղակի անցքերի և եղակի կուլտուրական ժամանակների զարգացման պատմական ընոյթի նկարագրութիւնը մեծ մասամբ գեղարուեստի գործն է և ոչ թէ գիտական ուղեցոյցով ծանրաբեռնուած հասկացողութեան։ Այն, ինչ որ այժմ պարզաբանուած կուլտուրական ժամանակի հասկացողութիւնից է առաջ գալի, այն մօտենար, որը և այժմ պատմական յառաջադիմութեան համար հորիզոններ է բաց անում, այն է, որ ոչ թէ անհատական, այլ տիեզերապատմութեան հարցերով պէտք է զբաղուենք։

Pessimist

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Թերթիս խմբագիրը իւր Տաճկաստան ճանապարհորդելու ժամանակ Տրապիզոնից ձեռք էր բերել հանգ. կաթողիկոս տ. Խրիմեան Հայրիկի մի քանի հարիւր նամակներ մեծ մասամբ ուղղուած Գարեգին եպ. Սրուանձտեանին և մասամբ ուրիշներին։ Այդ նամակներն սկսւում են վաթսունական թուականներից մինչև գրեթէ նորա աքսորը։

Խմբագրութիւնս այդ նամակներից ամենից հետաքրքիրները կարգի դնելով հետզհետէ կհրատարակէ թերթիս էջերում, որոնցից առ այժմ իբրև նմուշ տպագրում է հետևեալ երեք նամակները։

Ա. ՍԻՐԵԼԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Ձեր քանի նամակները հետզհետէ առած եմ, որոց պատասխաններ մնացած են. պատճառը յայտնի է. լրագիրներէն կիմանաք. երկու դժուարին խնդիրը առաջս եկած են. քաղաքական ժողովի կազմութիւն և երեսփոխանական ժողովին վերակազմութիւնը։ Առաջինին դժուարութիւնը այն է, որ Պոլսոյ մէջ գտնուած կարգ մի առաջակայ մարդիկ էֆէնտիներ և այլն վերջին աստիճան վիրաւորելով վշտացած են ազգային գործոց այլևս չխառնուիլ, վարձատրութեան և պատուոյ փոխարէն միշտ յարձակում և անարգանք կրելով։ Այս պարագայիս մէջ բնաւ չեմ վհատիր, այլ ամէն հնարաւոր միջոցը ի գործ դնելով պիտի կազմեմ քաղաքական ժողովը. թող այս մասնաժողով մի ևս բուն դաւառացի հայերէն պիտի կազմուի. Պոլսոյ

գործերուն մէջն ալ կարգադրութիւն պիտի ըլլայ. այսինքն երբեք պատրիարքական փոխանորդ պիտի նստին. փոխանորդ մի յիւսքիւտար. փոխանորդ մի Բերա. փոխանորդ մի ևս Պոլիս մայր եկեղեցին. Պոլսոյ ընդհանուր թաղական գործերը այս երբեք ատեանը պիտի լուծեն: Իսկ պատրիարք և իւր վարչական ժողովը միայն դաւառի և ազգային ընդհանուր խնդիրները պիտի լուծեն: Այս կարգադրութիւնը եթէ յաջողցնենք, յայնժամ ըստամենայնի ազատ պիտի ըլլայ ազգին կենսական խնդիրները յառաջ վարելու:

Վալի փաշայի ազիլ ըլլալուն համար զրեթէ սրամս տրխրութիւնը դեռ կը շարունակի, ամէն միջոցը ի գործ դրի այս բանին առաջը առնելու. բայց գործը անհնարութեան պարագայից մէջ մտած էր. որ մեր ծեռնարկութեան ուժէն վեր էր: Վասնզի այս գործին դարձուածքը տեղւոյս Սէրասքէրի կողմէն եղած է և Երզնկայի օրդուլի Միւշիր Մուստաֆայ փաշան այս մասին համար վաղուց հետէ բանակցութիւն ըրած է տեղւոյս մեծ սպարապետին հետ: Թող այս բ. դուռը քաղաքական անտեսութեան նկատմամբ ալ կարգադրած է այս գործը: Այս պատճառներէն 'ի զատ ստոյգ տեղերէ իմացանք, որ մեր Վալի փաշային վրայ տեղւոյդ ներքին թշնամիները դանգատները գրած են:

Նոր վալին երբոր կուգայ, հարկաւ նորա ընթացից վրայ մտնրամասն տեղեկութիւն պիտի տաք. յոյս ունիմք որ աւելի օգուտ լինի դաւառականաց այս փոփոխութեան ծեռնարկութիւնը: Իմ կողմէս բոլոր բարեկամաց, նա մանաւանդ մեր մտերիմ բարերարաց սէր նուիրէք: Վալի փաշային յառաջուց ըրած ինհանները գրէթէ ոչընչացան. հիմա հարկ կըլլայ, որ նոր վալին նոր ինհա ընէ բ. դրան թէ Դանիէլ էֆէնտիին համար և թէ ուրիշներուն: Այս կէտն ևս ձեզ կիմացնեմ և դուք ևս անոնց իմացուցէք. որ բ. դռնէն մեր նախորդներուն քանի անգամ ազդարար նամակները եկած են. կրծանուցէք որ դաւառական ազգայնոց աստիճան ընդունելու համար պէտք է միայն կուսակալութեանց կողմէն ինհա ըլլայ դուռը նիզամին դէմ եթէ պատրիարքը միջամտութիւն ընէ կամ ինքն ուղ-

զակի թահրիր ընէ։ Այս կէտը խորհրդաբար ծանուցէք մեր մրտերիմ բարեկամաց ՀԲԼԱՅ որ իրենք վշտանան. մենք մեր ծեռնհասութեան չափով դարձեալ կաշխատիմք անուղղակի կերպով։ Վալի փաշային ըրած ինհաներուն ետ մնալուն մեծ պատճառը ոչինչ ալ այն էր, որ շատ մարդոց ոչկոնեղ ինհա ըրած էր. որով արժանաւորն ալ անարժանին հետ ետ մնաց։ Աստիճանի արժանաւոր աղաներ բնաւ թող չի յուսահատին. միայն թէ թող չաճապարեն. պէաք է սպասեն մինչև պատեհութիւնն օգնէ։

Դուք կրհարցանէք Ձեր մասին թէ ի՞նչ պիտի ընէք. առայժմ չեմ կրնար այդ որոշել մինչև սկիզբն. գարնան Կարնոյ թաղական խորհուրդին իմաց տուք. մեք իրենց համար մէկ ընտիր տնօրէն մի պատրաստած եմք Համբարձում Իփէկճեան. այս անձն իւր ամէն յատկութեամբ Մուրատեան Գարեգին վարդապետին կը հաւասարի. խիստ քաջահմուտ է դաստիարակութեան եղանակին մէջ գիտէ դաղղ. գերմաներէն և ռուսերէն. ասոնց հետ ոչկոնեղ գիտէ քանի մի ուսմունքները. իւր վարքով և ծանրութեամբ դաստիարակ ըլլալու ևս արժանաւոր է. մեծ բախտ է բարձր հայոց եթէ յաջողի այս ծեռնարկութիւնը։ Իփէկչեանը Սամաթիոյ Ագապեան վարժարանին տնօրէն էր. բայց թողուց զայն. իր մեծ փափաղն է շաբաթական թերթ մի հրատարակել մեծ մասամբ դաստիարակութեան և դպրոցաց բարեկարգութեան վրայ գրելով։ Ցիրաւի գրելու համար այնքան ողորկ և գեղեցիկ լեզու չունի բայց իւր խորհրդածութիւնները ամէն ուսումնականներէ կը տարբերի և վեհ է։ Ամեն կերպով ջանք կրնեմ այս հաղուագիւտ դաստիարակը բարձր հայոց սահմանը յղել. որ մեծ բարեբախտութիւն է գաւառացի ազգայնոց։ Իսկ դուք պատրաստուեցէք ցուպ ի ծեռին. Քեզ համար երաշ տեսած եմ. այս է երազը, որ յանկարծ բարձր հայոց սահմանէն թռչելով եկար հայրիկը գտար։ Եղբորդ Խաչատուր Օտեան Նրշան աղային պիտի ղրկեմ, որ պալատին շինութեանց մէջ գործի մի վրայ դնէ. եթէ յաջողեց տեր հոս եկաք գարնան վերադարձունելու է ղինքն։ Կուզեմ լիովին տեղեկութիւն մի տաք թէ այժմեան Կարնոյ դպրոցը ինչ վիճակի մէջ է և թէ աղջկանց

դպրոցը սկսաւ։ Եթէ Պօլիս գալու լինիք թաղականներ պիտի թող տա՞ն, թէ պարոն Աւետիսին սուրբ Կարապետէն վերադառնալով իրեն ի՞նչ յոյս տուիք. այժմ ի՞նչ լուր կառնէք Մուշէն և վանքէն. Թաշխանի քիւրթերը դեռ շղթայսկա՞պ են. տեղւոյդ կառավարութիւն ի՞նչ կրխորհի նոցա համար. նոր կուսակալն եկաւ, լաւութեան և դէշութեան ի՞նչ կարծիք ունին գիւղացիք և այլն. շուտ մանրամասն տեղեկութիւններ կուղեմ պէտք է անյապաղ գրէք։

1870 յուն. 19 պանդուխտ **Հայրիկ**
ի պ. հայոց

Բ. ԾԱՂԻԿ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ո՞ւր ես այժմ, գնացիր մտար այն բուրաստան, յորում ծրնար ու ծաղկեցար 'ի մանուկ տիոց անտի մինչև ցվարդապետութիւնդ։ Ցանկուսներու փոքրիկ տաճարին ուխտ և աւաղան մի մոռնար. երկուքս ալ այն տաճարին նուիրական զաւակն ենք. յիշէ հայրիկը երբ պանդխտութենէն դառնար նախ կերթար իւր ուխտը այն տաճարին կընծայէր։ Հայրենիքը Ձեր վրայ երախտիք ունի, դուն հայրենեացդ պարտական ես, ժամ պատեհ է քեզ վճարէ պարտքերդ։ Ահա այս են քո անծնանուէր պարտիքը։

1 Բոլոր եկեղեցեաց և դպրոցաց այցելութիւն ըրա, քարոզէ Աւետարանին լոյս կեանք և երկինք, քարոզէ ժամանակին պահանջած յառաջդիմութիւն, քարոզելով համոզելով յաղթարէ հնութեան նախապաշարմունքը.

2 Յատկապէս պատուաւոր իշխանաւոր և աղդասէր անծանց այցելութիւն ըրա. խօսիր հայրենեաց աղէտներու դարմանին համար, խօսիր, ազգդուտ ծեռնարկութեանց համար, խօսիր, որ միանան և զօրանան, խօսիր որ ազգը և ժողովուրդ սիրեն. խօսիր թէ անհնար է հաց և ազատութիւն ճարել մինչև գիտութեան լոյս չընդունին և այլն։

3 Երիտասարդաց խումբը դէպ յուսումնասիրութիւն հայրենասիրութիւն վառէ, բորբոքէ այն կրակով, զոր սրտիդ մէջը

ունիս «հուր եկի արկանել» ասա, և կրակ տուր. թերևս կարենաս հալել այդ երկրի յաւիտենական սառերը։

4 Արդէն հեռագրով իմացուցի, որ Վարագայ վանից առ ժամանակեայ տեսչութեան պաշտօնը ձեզ յանձնուած է, իբրև առ Տիմոթէոս գրեմ քեզ աղաչելով զպաշտոն Քո կատարեալ կալ։ Կուզեմ որ փոքր ի շատէ տեղեկութիւն հաղորդէք վանից դրութեան ներկայ վիճակին վրայ։ Լսեցի, որ փոքր մի գրժտութիւն ինկած է Մէջերնին Մեսրոպ վարդապետի բաժանմանէն յետոյ, սաստէ որ խաղաղին. զդացուր թէ իրենք աւետարանի հեղութեան և խաղաղասիրութեան պաշտոնեա են։

5 Պաշտոնական գիրերը ասկէ յառաջ ղրկուած են և կը յուսամ որ անմիջապէս կը ձեռնարկէք. հինարմատ կաղնի ծառ քանդելու համար այժմէն սկսիր տակի արմատները մի մի հատանել, ձեռք առ ու համոզէ որոց ընարութիւն կոյր է, եկեղեցւոյ և երկրին բարիքը չգիտեն խորհիլ, այլ միայն զանձանց շահ և եթ մտածեն։

6 Աւաղ աչօք դիտէ թէ այդ անառիկ Վանայ բերդ ո՞ր կողմէն կառնուի. իբրև պատերազմի ճարտարապետ յատակագիծ մի պատրաստէ. յղէ այսր, որպէս զի ըստ այնմ հրահանգ ստանաս և յարձակիս։

7 Տարօնէն գնացիր և ետևէդ խածել սկսեցին. զի այս անգամ դեկ. 18 թուով Հայրենիքը լրագիրը նամակ մի կրհրատարակէ, իբրև Տարօնէն գրուած. կարդա եթէ կուզես պատասխանը գրէ առանց կրից լուրջ, կամ կարծիքդ յայտնէ թէ ոյն նամակը բուն վանքին ծոցէն ելած է. Աղուէսի՞ն* է թէ Սալնածորոյ օձին։ Ես ալ մտադիր եմ Հայրենիքը կանչել և պէտք եղած քննութիւն ընել։ Սակայն երբէք չի վշտանաս. զի եթէ զտանուտէրն բէեզզեբուղ կոչեցին, ո՞րչափ գնտանիս նորա։ Այս օրերս լրագրաց կատաղութեան օրերն են. հայրիկն ալ ձեռք առած են կդզզեն ու կրդզզեն. ի՞նչ պէտք է ընել ուրիշ ոչինչ, համբերել ու գործել։ Այսուհետև ժողովրդական ասպարիսին մէջ գործող մարդկանց վիճակն այս է։ Լրագրաց բերան չինա-

* Աղուէս մականունը տալիս էին վանեցիք Աղուանեանց Գրիգորիս եպիսկոպոսին։ Խ։

լու համար լռին անապատ քաշվելու է եթէ հոն ալ զազաններ չի յարձակին։

Ահա այս անգամ տեղւոյդ փաշային որ մեր բարեկամն է յանձնարարական դրեցի, տար և ձեռքովդ տուր. Մ. Մկրտիչ աղան էրէրին գիւղացիի մի համար խիստ կը թախանձէ սորա համար ալ միջնորդեցէք բանտէն հանել տուէք և ատոր գործը իրաւախոհութեամբ մի լրացուցէք։

Ներփակեալ նամակ մի կայ, բաց գրկեցի. կարդա գոյէ տեղ տուր և այս մասին պէտք եղած տեղեկութիւնը ստուգապէս քննելով դրէ։

1871 դեկ. 22
ի պ. հայոց

Մնամ աղօթակից
Պ. Կ. Խրիմեան

Գ. ԲԱՂԱԳՕՏԻ ՄՇԱԿ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Վերջին հեռագիրդ ընդունեցի. կը գրէք թէ Աղուանեանն 'ի Վան, Երեմիասն 'ի Մուշ. Երեմիասն արդէն Ղեւոնդ վարդապետին հետը քննչութեան պաշտօն ընդունած են. իսկ Աղուանեանին համար լիովին վստահութիւն չունիմ ինչպէս դուք, զի կը նախատեսեմ, որ նա եթէ այդ պաշտօնին գլուխը անցնի դուցէ քան զՊողոսն աւելի միապետական դիրք բռնէ. մանաւանդ մեզի նկատմամբ, որ երբէք այդ անձն ոչ համակրութիւն ունի և ոչ ևս գոնէ երախտագիտութեան իրաւ մի։ Այս ևս տարակուսութեան տակ է թէ արդեօք Աղուանեանը այդ պաշտօնը պիտի ընդունի ներկայ եղած յեղափոխութիւնը կշռելով։ Ուստի ես այնպէս աւելի բարւոք կը համարիմ, որ դուք ժամանակ մի այդ պաշտօնը վարէք մինչև Երեմիա եպիսկոպոսն այդ կողմը հասնի. իսկոյն Ձեր պաշտօնը անոր վրայ կրդարձուցեմ. այս կէտը իբրև խորհուրդը Ձեր քովը պէտք է լռին մնայ։ Սա ևս իմացնեմ Ձեզ. ես մատիր եմ Աղուանեանը Պոլիս կանչել Մամբրէի դիմաց հանելու համար. քանզի Մամբրէն Պոլիս գալու վրայ է. գուցէ Մշոյ աշխարհ խառնէ և բոլոր բառնայ Աղուանեանին վրայ. թող հոս դայ ինքն անձամբ անձին պատասխանէ. և երկրորդ Մուշին մէջ մասն մի ժողովուրդը դժգոհ են իրմէն. և ինքն ևս բաւական նեղ-

սրտած է. բաւական եւս վայրենացած. քանի քանի անգամ եղաւ լրագրաց յօդուած տալով յարձակումն կրնէ պատրիարքարանին և մեր վրայ իսկ. պէտք է զինքն անգամ մի Պօլիս բերել, որպէս զի ընդհանուր ժողովը և հայոց պատրիարքարանի վիճակը լաւ կերպով կշռէ և ինքնին յախուռն դատաստան չընէ։ Բայց եթէ կուզէք որ Աղուանեանի արժէքը Վանայ մէջ եսլաւ կերպով չափուի Ձեր խնդրանաց հաւեմատ զինքն պէտք է այժմ այդ պաշտօնին գլուխ դնել. (եթէ յանձն առնու) մինչև համոզուին իւր սիրահարները. սակայն այս փորձն եւս կասկածելի է. եթէ Պողոսին սիրահարները ամուսնական կապով մի անբաժանելի են. անշուշտ Աղուանեանին եւ նոյն կրլինի մի փոքրժամանակէն յետոյ։ Չգիտեմ սահմանադրութիւն ո՞ւր հասաւ. ընդհանուր ժողով կազմեցի՞ք և այս յեղափոխութեան միջոցին կազմել հնարաւո՞ր է։ Պօլսոյ մէջ գտնուած պօղոսեաններ նմանապէս տեղւոյդ, որոնք հեռագրով կը ծանուցանեն, որ Պողոսը ընտրելեաց ցանկին մէջ դրուի և կրպնդեն որ խաղաղութեան միջոցը միայն այս է, ապա թէ ոչ անհնարին կերպով խռովութիւն պիտի յարատեւէ և մեծամեծ վնասներ հասնի երկրին։ Ուրեմն պէտք է զեկուցանէք հեռագրով. եթէ երեսփոխանութիւն կազմելով ընտրութեան ծեռնարկէք, և քանի անուններու ցանկ պահանջէք տեղէս, անշուշտ կրօնական ժողովը Պողոսին անունը չիդներ. բայց երբ խաղաղութեան յոյս բարձուի խռովութիւն զայրանայ կրօնափոխութեան հետեւանքներ յառաջանան և մէկ կողմն եւս ապահով լինիմք, որ Պողոս քուէ չիկրնայ ստանալ թէ և իւր անունը ցանկի մէջ դրուի, յայնժամ խոհեմութիւն համարելով թերեւս Պողոսին անունը ցանկին մէջ դնելու պիտի զիջանիմք։ Ցայտնեցէք ձեր կարծիքը կրնա՞ք երեսփոխանութիւն միհրաշագործել, որուն դէթ մեծագոյն մասն Պողոսեան չըլլան։ Այս մասին համար հասուն խորհրդով գրեցէք։ Վանայ համար սա համոզումն ալ ունիմ, այսինքն քանի խռովութիւն կայ Առաջնորդական ընտրութեան չծեռնարկել, այլ պատրիարքական փոխանորդով կառավարել մինչև խպառ կիրքերուն բոցը շիշանի և խռովութիւն անհետանայ. քաջ կը նկատեմ որ Վանայ համար առայժմ հաստատուն Առաջնորդ մի ընտրել դժուարին է։ Պողոսին վերջին անգամ սաստիկ հեռա-

դիր մի զարկի, որուն օրինակը ներփակեալ կրտեսնաք, բայց ինծ այնպէս կրթուի, որ դարձեալ սատհակի և ոտնակոխէ պատրիարքարանի հրամանը։ Եւ յայնժամ պիտի ստիպուիմ բ. դրան հրաման հանել և այնպէս դուրս հանել երկրէն։ Մեհ որչա՞փ կրցուիմ աւետարանի աշակերտի մի համար այս միջոցները ի գործ դնել, կուզեմ պարադայիւք գրէք թէ Եղիազար վարդապետն ինչո՞ւ համար չեկաւ. ո՛վ սպառնացաւ իրեն. իրեն քաջասրտու. թեան կը վայլէ՞ր մեր հրամանին չանսալ և նոցա երկիւղը բանի տեղ դնել. այդ մարդը վատութիւն լրած է և ոչ խոհեմութիւն. խօսէ՛ իրեն։ Գանք հիմա ձեր անձին նկատմամբ խօսինք. քանի մի անձինք հեռագրով խնդրեցին, որ առանց յապաղելոյ պատրիարքական փոխանորդութեան պաշտօնը Ձեր վրայ դառնայ, մտածեցի պահ մի, որ իմ պլուզ եղնիկիդ վզին վրայ այս ծանր լուծ չի դնեմ, բայց յանկարծ երևակայութեանս դիմաց ելաւ Գողգոթայի համբուն խաչակիր զօրապետն. ուստի ըսի. հոգին էլնի ուխտադիր աշակերտին թող կրէ հեծէ. ինքն աշակերտ է. իւր տիրոջմէն աւելի չէ։ Պահ մի կրէ այդ լուծը, երբ քեզ զօրավիդ է Աստուած, կը դիւրանայ. մի վհատիր և տիր թէ մանուկ եմ ես։ Իսկ եթէ կուզէք գործը Աղուանեանին վրայ դառնայ պէտք է իւր բարեկամաց ձեռքով համոզէք զինքն. մեք ևս պէտք եղածը կը գրեմք իրեն։ Մէկ քանի հրահանգներ կուզեմ տալ ձեզ. մինչև աստուած հանէ զքեզ այդ վերահաս փորձանքէն, որ շուտ պիտի անցնի։

1. Վստահ եղիր յաստուած, կանչէ զաստուած, բռնէ ղեկը սկսիր վարել պաշտօնիդ նաւ. նաւահանգիստ մօտ է 'ի Վարադայ խաչ և Գլակայ վանքը։

2. Որչափ հնար է երկուստեք կողման խռովութեանց առիթները խոհական միջոցներով մեղմացուր, պօղոսեաններ յորդորէ. ապօղոսեաններ սատէ, անխարապէս սիրէ և առանց կուսակցութեան վարվիր։ Իսկ երբ յանդուգն ճակատ կը յորինեն ձեր դէմը կամ պէտք է յիսուսին չափ հեղանալով տանիս ու համբերես ամեն անարգութեանց և կամ եղնիկիդ փոքրիկ եղջիւրներով թիւրերը կործանես։

3. Ցիշելով հանդուցեալ Իգնատիոս սրբազանի վրայ եղած

յարձակումն, ամեն կերպիւ զգուշացիր 'ի նստիլ 'ի տան 'ի դնալ 'ի ճանապարհ և թէ կարևոր կը գտուիք կառավարութենէն մարդ մի առէք ապահովութեան համար։

4. Այրյարուց տէր Պետրոսի համար մասն մի ժողովուրդ յուզմունք հանած են և յիշեալ քահանայն յեկեղեցի տարեր են. յորդորէ հակառակ մասն որ խոհեմութիւն ընելով այս փոքր խնդրոյն համար լռեն, գիտնալով որ իրենց առաջ մեծ խնդիր մի կայ. պէտք է այդ եկեղեցւոյ ժողովուրդը միանան այդ խնդրոյն համար և ոչ թէ երկպառակելով 'ի նպաստ Պողոսի գործեն։ Այս մասին հարկ եղած գրեցի նոյն եկեղեցւոյ քահանայից և թաղականաց. ասկէ առջի փոստայով գրած եմ նոյն ծեզ ալ իմաց կուտամ, որ երթաք եկեղեցւոյ սենեակ կանչէք քահանաները թաղականաց քով մեր և կրօնական ժողովին որոշումն յայտնէք իրենց, այսինքն թէ պէտք է տէր Պետրոս քահանայն դաս կենայ իբրև տպաշխարող, առանց քահանայագործութեան միայն իրեն հրաման է քարոզ և աղօթքներ կարդալու մինչև ցնոր տնօրէնութիւն. այս ևս կը ծանուցանեմ որ պէտք է հաւասար բաժին ստանայ քահանայից գանձանակէն։

5. Դուք միշտ պատրաստ և կազմ եղիք թերևս վարդապետն սուրբ տօնին հասնելու առիթը տէր յաջողէ, տարակուսած եմ եթէ պարագայք չներեն, չգիտեմ զո՞վ առաքելոց առ դառնացող տունն Մշոյ։ Եսայի և Կարապետ վարդապետք խնդիր տուին կրօնական ժողովին որ ս. Կարապետ երթան. ժողովը ուղեց միջնորդութիւն ընել ես գիջումն ըրի զիրենք առաքելոց վանքը ղրկել, բայց ամենայն ըմբոստութեամբ յանձն չառին. կսպասեն որ Մամբրէն գայ միանան և նոր եակատ յորինեն։

Բաւ այսքան։

Համբերութիւն և զօրութիւն մաղթելով

ձեզ Տնամ

Հայրիկ

1872, յունիս 9
'ի պ. հայոց

ԱՂԲՐԻ ՄՕՏ

Անա դիմացիս լեռները հսկայ
Ծածկել են սպիտակ նոր եկած ձիւնով
Եւ արեգակը վեր է բարձրանում
Դէպ կապոյտ գահը հեզիկ սահելով:

—Քրչ-քրչ-քրչ.
Լսւում է ձայնն աղբիւրի
Զուլալ ջուրը ցած է թափւում երգելով։
—Զրնգ-զրնգ-զրնգ.
Հարսն է գալիս կուժն ուսին
Գլխի, կրծքի փողկապները զրնգալով։
—Դահ չու-չու.
Անա զեղջուկն առոյգ.
Մահակն ուսին էշն ու ձիերն է ջրում։
—Հо,հо,հо,
Տաւարածն է եզներին
Աղբրից դէպի արձակ դաշտերը քշում։

Անցաւ մի ժամ. չկան հարսներ
Ոչ տաւարած, ոչ զեղջուկ.
Աղբիւրը դարձեալ քրչքրչում է
Միշտ երգելով կամացուկ։

Վ. Գ.

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

(Ալէքսանդր Մովսիսեան)

Կենսագրական ակնարկ

Այս տարի լրանում է մեր յայտնի վիպագիր պ. Շիրվանզադէի գրական գործունէութեան քսանուհինգամեակը։

Աչքի առաջ ունենալով, որ Շիրվանզադէն ներկայ հայ գրողների մէջ չափազանց աչքի է ընկնում իր տաղանդաւոր և բեղմնաւոր գրչով, մենք կարևոր ենք համարում տալ «Լումայ»-ի երկարամեայ աշխատակցի բեղմնաւոր գործունէութեան նկարագիրը կարելոյն չափ մանրամասն։

Կսկսենք նրա մանկութիւնից։

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ։

Շիրվանզադէն ծնուել է Շամախի քաղաքում։ Մետրիքական չունի, բայց, իր մօր ասելով, ծնուել է 1858 թ. ապրիլի 7-ին։

Նրա անունն է Ալէքսանդր, ազգանունը Մովսիսեան։

Նրա ծնողներն եղել են անգրագէտ։ Հօր անունն էր Մինաս։ Նա առաջ եղել է դերձակ, ապա տորոնի առևտրական։ Մօր անունն էր Ովսաննա, ծնեալ Բաբախանեան։

Հայրը յաղթանդամ և շատ բարձրահասակ մի մարդ էր, խոժոռ դէմքով։ Մայրը միջահասակ, նրբակազմ մի կին և համարւում էր քաղաքում գեղեցկուհի։ Հայրը մի հպարտ և, միևնոյն ժամանակ, խստաբնոյթ մարդ էր։ Անկասկած նա սիրում էր իր որդուն։

Տարուայ մեծ մասը նա քաղաքից բացակայ էր լինում. որդին թողնուած էր իր մօր և տատի խնամքին։ Նրա տատը, այսինքն հօր մայրը, իր որդու պէս մի յաղթանդամ կին էր։ Նա յայտ-

նի էր քաղաքում իր առնական քաջութեամբ։ Բայց արժէ այդ կնոջ մասին ասել մի քանի խօսք։

Ծաղիկը—այսպէս էր նրա անունը—ունէր երեք արու զաւակ, որոնցից երկուսը—մեծ և կրտսերը—կենսախինդ, անհոգ, շռայլ մարդիկ էին, երրորդը, միջինը, այն է Շիրվանզադէի հայրը, վերին աստիճանի աշխատասէր էր։ Նա ունէր և չորս աղջիկ ամուսնացած քաղաքի առաջնակարգ հարուստների հետ Շամախու երջանիկ օրերին։ Յաճախ նա դիշերում էր իր այս կամ այն աղջկայ մօտ։

Մի ամառ դիշեր, Ծաղիկը իր աղջկայ տանը քնած է լինում։ Յարձակւում են այդ տան վրայ 7 թուրք թէ լեզգի աւազակներ կողոպտելու նպատակով։ Անդէն Ծաղիկը չի վախենում և ոչ էլ շփոթւում։ Նա շատ ուժեղ կին էր։ Նա դիմադրում է աւազակներին և յաջողում է վերմակի մէջ փաթաթելով՝ նրանցից երեքին պատշգամբից շպրտել այդին։ Ինքը ստանում է դաշոյնի մի մեծ վերք կողքի վրայ և ուշաթափւում։ Բայց աւազակները փախչում են։ Այդ օրից Ծաղիկը հրաշակւում է ինչպէս մի հերոսուհի և քաղաքում ամենքը վախենում են նրանից։

Հայրը թէև կամակոր, բայց վերին աստիճանի հշմարտասէր մարդ էր և ոչ ոքից չէր վախենում ճշմարտութիւն ասելու։ Այս պատճառով էլ ինչպէս միշտ պատահում է, նա էլ ունէր շատ թշնամիներ, որոնք սակայն յարգում էին նրան և վախենում նրանից։ Ղուբա քաղաքում, որի շրջակայքում ունէր տորոնի ցանքսեր, նա յաճախ կատարում էր թշնամիների մէջ միջնորդ դատաւորի դեր և նրա վճռին հպատակւում էին ամենքը։

Մայրը մեղմաբնոյթ, ընքշասիրտ մի կին էր և նրան է Աղէքսանդրը պարտական իր աղքատիկ ուսումը։

6 տարեկան հասակումս ինքնակամ վազում է իրանց փողցում գտնուող ուսումնարանը, որ պահում էր հայ բողոքականների պարագլուխ Սարգիս վարպետը։

Մէկ թէ երկու տարի այստեղ մնալով, նրան տալիս են հայոց թեմական դպրոց։ Այստեղ էլ մի երկու տարի մնալով,

անցնում է ռուսաց գաւառական դպրոց (уѣздное училище) և այստեղ աւարտում իր ուսումը։ Սրանով էլ վերջանում է Շիրվանզադէի դպրոցական ուսումը։

1872 թ. սոսկալի երկրաշարժի ժամանակ հարուստ Շամախին դառնում է աւերակ։ Բնակիչները, մեծ մասամբ հայերը, սկսում են տեղափոխուել Բագու։ Փիչ անցած տորոնի գինն[1] ընկնում է, հայրը սնանկանում և նրանց ընտանիքը մնում է անօգնական։ Նրա հայրը երդւում է այլևս Շամախի չը վերադառնալ, մինչև որ նորից կը հարստանայ։

Նա նորից դիմում է իր արհեստին—դերձակութեանը։ Իրրև ապացոյց, թէ որքան հաստատ էր իր խօսքին նրա հայրը—ահաւասիկ մի փաստ։ Նա մնաց Ղուբա 15 տարի։ Ալէքսանդրը արդէն չափահաս երիտասարդ էր, նա կարողանում էր իրանց ընտանիքի պարէնը հայթայթել։ Շարունակ գրում էր հօրը, որ գայ իր ընտանիքի հետ ապրելու, բայց նա չէր գալիս։ Մի օր արդէն որդու Թիֆլիզ եղած ժամանակ հեռագիր է ստանում, թէ նա հիւանդ է և գնում է հօրը բերելու։

Տասնուհինգ տարի իր միակ արու զաւակին չը տեսնելուց յետոյ, այդ մարդը իր որդուն դիմաւորեց շատ սառը։ Երբ մտաւ նրա սենեակը, նա անկողնումն էր, շրջապատուած իր բարեկամներով։ Կէս ժամի չափ նա գլուխը չը բարձրացրեց որդուն նայելու և երբ բարձրացրեց, ասաց նրան անտարբեր.

—Օհո, մեծացել ես։

Նա մեռաւ 1886 թուին։

Դրա հակառակ, մայրը վերին աստիճանի փափկասիրտ կին էր։

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

1875 թուականն էր, երբ Ալէքսանդրը գնաց Բագու իր ընտանիքի օրուայ հացը վաստակելու նպատակով։ Բարձր ուսման

1. Տորոնը մի տեսակ արմտիք է, որ մի ժամանակ գործ էին ածում Մոսկուայի, Մանչեստերի, Մարսէյլի գործարաններում իբրև կարմիր ներկ։ Ալիզարինը որ գտնուեց, նրա գինը ընկաւ, ամենքը սնանկացան և նրանց հետ Շ-ի հայրը։

մասին այլևս խօսք չէր կարող լինել։ Նրանք սոված էին։ Նրանց ընտանիքը բաղկացած էր իրանից, մօրից և երկու քոյրերից, որոնցից մէկն արդէն ամուսնացած էր։ Միակ եղբայրը Գաբրիէլ անունով մեռել էր 1872 թ. ծաղկից։

Բագուում նա մտաւ նահանգական դատարան իբրև գրագիր 15 ռ. ամսականով. 1½ տարի ծառայելուց յետոյ թողեց և մտաւ մի նաւթարդիւնաբերական ընկերութիւն հաշուապահի և կառավարչի պաշտօնով։ Այդ ժամանակ նրա մայրը Ովսաննան և կրտսեր քոյր Աննրմանը եկան Բագու։ Մեծ քոյր Խանումը, որ ամուսնացած էր, մնաց Շամախում։ Նրա տպրուստը դաժան էր։ Շատ չափաւոր ռոճկով նա պիտի պահէր մի ամբողջ ընտանիք։

Քանի նա մենակ էր Բագուում, ապրում էին իր մօրաքրոջ՝ տիկին Մարիամ Աբէլեանի մօտ։ Այդ բարի և ազնիւ կինը սիրում էր նրան իբրև հարազատ մայր և Ալէքսանդրը ոչնչով չէր տարբերւում նրա աչքում նրա զաւակներից, որոնցից մէկն այսօր մեր հռչակաւոր դերասանն է՝ Յովհաննէս Աբէլեանը, իսկ միւսը շնորհալի դրամատուրգ Ալէքսանդր Աբէլեանը։

Աբէլեան ընտանիքը ընթերցասէր էր, խաղաղ։ Այստեղ նա սիրեց ընթերցանութիւնը, և կարդաց «Հիւսիսափայլ», «Կռունկ», «Հանդէս նոր հայախօսութեան» և այլն, Աբովեան— այն ժամանակուայ մեր ամբողջ նոր դրականութիւնը։

Հայերէնից նա անցաւ ռուսերէնին։

Բագուն մի փոքրիկ աննշան քաղաք էր այն ժամանակ։ Այնտեղ նոյնիսկ մի հասարակ ընթերցարան չկար։

Նա յորդորեց մի խումբ տեղական երիտասարդների դիմել Հայոց Մարդասիրական ընկերութեանը, խնդրելով, որ մի սենեակ յատկացնի ընթերցարանի համար։

Ընկերութիւնը մեծ սիրով ընդունեց նրա խնդիրը և մինչև անգամ իր վրայ առաւ բոլոր ծախսերը, բաց արաւ ոչ միայն ընթերցարան, այլև դրադարան։

Եւ Ալէքսանդրը հրաւիրուեց իբրև դրադարանի կառավարիչ։

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Ահա այդ գրադարանումն էր, որ Շիրվանզադէն սկսեց պարապել ինքնակրթութեամբ։

Նրա ընթերցանութիւնն անկանոն էր այնչափ, որ չեմ կարծում թէ մի ուրիշն այնքան խառնած լինի իր մտաւոր կերակուրներն իրարու, որքան նա։ Նա կարդում էր առանց որ և է սիստեմի ամեն ինչ, սկսած վէպից մինչև ամենաբարդ փիլիսոփայական գրուածները, որոնց, ինարկէ, մեծ մասամբ չէր էլ հասկանում։

Մի ստ ժամանակ նա յափշտակուեց քաղաքատնտեսական գրականութեամբ։ Կարդաց Մալթուս, Ռիկարդо, Սէն Սիմոն, Պրուդոն, յետոյ Լասսալ, աւելի ուշ Կառլ Մարքս։ Շուտով նրան ծանծրացրեց այդ։ Նրա վարվելուն հոգու համար չոր ու ցամաք քաղաքատնտեսութիւնը անբաւարար էր։

Նա յափշտակուեց դեղեցիկ գրականութեամբ և 1878-ից մինչև 1883-ը կարդաց ամբողջ ռուս գրականութիւնը, Շեքսպիր, Գէօթէ, Շիլլեր, Բայրոն, Վալտեր Սկոտ, Մոլիէռ, յետոյ երկրորդական ստեղծագործողներ, որոնց թւում Շալիհադէն, որին չէր սիրեց իր կանխակալ տանդանսի պատճառով։

Ապագայում, երբ նա ծանօթացաւ ֆրանսիական ռէալական գրականութեան հետ, Բալզակն ու Ֆլօբեռն էին, որ գրաւեցին նրան։

Նոյն միջոցներին սկսեց գրել—նախ ռուսերէն և ապա հայերէն։

1878—79 թուին Շիրվանզադէն թղթակցում էր Тиф. Вѣстникъ լրագրին, մերթ ընդ մերթ յայանի հրապարակախօս Գրազովսկու „Голосъ“-ին և աշխատակցում էր տեղական „Бакинскія Извѣстія“ լրագրին։

Շուտով նա թողեց ռուսերէնը և սկսեց գրել հայերէն։ Մի քանի թղթակցութիւններ ուղարկեց «Մեղուին», ապա անցաւ «Մշակը» և արդէն բաւական կանոնաւոր աշխատակցում էր այդ լրագրին։

Այդ միջոցներին նա հաշուապահ էր Նաւթարդիւնաբերա-

կան գրասենեակներում և, ինչպէս լսել ենք, հաշիւները պահում էր ինչպէս վայել է մի մարդու, որ իր ծակ գրպանի կոպէկների հաշիւն էլ չը գիտէ։

Այնուամենայնիւ նա կարողացաւ իր ծախքով ամուսնացնել իր քրոջը և յետոյ նրա վիճակը համեմատաբար բարւոքուեց։

Շիրվանզադէի գրականական գործունէութիւնը իսկապէս սկսւում է 1880 թուից։ Այդ և յաջորդ թուականին նա գրում է «Մշակում» մի շարք յօդուածներ Բագուի կեանքից, առանձնապէս բանուոր դասի կեանքի մասին։ Նրա յօդուածները գրաւում են ուշադրութիւն։ Եւ „Кавказъ“ լրագիրը արտատպում է նրանցից շատերը։

Գալով վիպագրութեան, նրա առաջին պատմուածքն է «Հրդեհ նաւթագործարանում», տպուած «Մշակում» 1883 թ. գարնանը։ Նոյն տարուայ վերջերին սկսում է նոյն լրագրում լոյս տեսնել «Գործակատարի յիշատակարանից» նրա առաջին վիպական փորձը։ Փորձը դուր է գալիս ընթերցողներին։ Եւ Ռաֆֆիի Խենթի հրատարակիչ պ. Աբել Ապրէսեանը առանձին գրքոյկով լոյս է ընծայում այն «Հրդեհի» հետ միասին։

Նոյն թուականի օգոստոսին Շիրվանզադէն թողնում է հաշուապահի պաշտօնը Բագուում և տեղափոխւում է Թիֆլիս, վճռած լինելով ամբողջովին անձնատուր լինել գրական գործունէութեան։

Արդէն այդ ժամանակ նա զգում էր, որ հայ գեղեցիկ գրականութիւնը մի ողորմելի բան է։ Իր խոստովանութեամբ Շիրվանզադէի վրայ հայ հեղինակներից ոչ մէկը չէ ազդել։ Նա կարդացել է «Վէրք Հայաստանին» պատանի հասակում ոգևորութեամբ, Պռոշեանցի դրուագները հետաքրքրութեամբ, կարդացել է Ռաֆֆին յափշտակուած։ Սակայն առանց ոչ մէկից լիովին գրաւուելու։ Նրան վշտացրել է «Վէրք Հայաստանի»-ի մէջ նրբութեան բացակայութիւնը, Պռոշեանցի տարրականութիւնը, Ռաֆֆիի հոգեբանական սխալները լանուն մի կանխակալ գաղափարի, որ գեղարուեստի համար սպանիչ տարր է։ Համակրանքի մասին կարող է խօսք լինել, բայց ազդեցութեան մասին — ամե-

նևին: Նա հայ հեղինակների մէջ վարպետ չէ ունեցել, նոյն իսկ լեզուի կողմից:

Նկարագրութիւնների և գործող անձանց բնաւորութիւնների հոգեբանական ճշմարտութիւն-ահա ինչ է նա նախ և առաջ փնտրել վէպի մէջ: Հայ վէպը չի տուել նրան իր փնտրածը և չէր կարող տալ այն ժամանակուայ հայ ընթերցողների ճաշակի մանկութեան շնորհով:

Ահա ինչ է գրում մեղ Շիրվանզադէն իւր մասնաւոր մի նամակում դեռ 10 տարի սրանից առաջ.

«Վէպը իմ կարծիքով ինքը կեանքն է: Այն չի սիրում կեղծիք և արհեստականութիւն: Նա, որ չի ուսումնասիրել մարդկային հոգին, չը պիտի յանդգնի գրիչ վերցնել կեանքը նկարագրելու: Սակայն դիւրին բան չէ ուսումնասիրել մարդկային հոգին: Դրա համար բաւական չէ միայն նայել, այլ և հարկաւոր է տեսնել: Իսկ տեսնելու համար աչք է հարկաւոր, արտիստի ամենատես աչքը:»

Նոյն գաղափարը Շիրվանզադէն արտայայտեց դեռ նորերս հանճարեղ արձանագործ Ռոդէնի խօսքերով...

Ճշմարտութիւնը եղել է նրա հոգու անկոպտելի յատկանիշը: Ամենուրեք նա այն է փնտրել և այն պաշտել, միևնոյնն է լինի դա կեանքը, թէ նրա արտադրութիւնը-գեղարուեստը և գրականութիւնը, թէ մարդկանց գործողութիւնները:

Առաջին անգամ այդ ճշմարտութիւնը նա գտնում է ռուս վիպագրութեան մէջ: Նրան յափշտակում է Դոստոեվսկու հոգեբանութիւնը, յաճախ ծանծրոպի, բայց միշտ հետաքրքրական:

Եւ այսպէս, մի ժամանակ նա յափշտակւում է ռուս գրականութեամբ: Անցնելով Եւրոպականին, տեսնում է, որ ռուս գրականութիւնը իրօք ինքնուրոյն չէ, ինչպէս կարծում էր, այլ հետևողականութիւն Եւրոպականին, մասնաւորապէս ֆրանսիականին: Այնուհետև յափշտակւում է Դիկէնսով, Բալզակով, Ֆլոբերով:

Մի բան, որ առանձնապէս նրան գրաւում է Եւրոպական գեղեցիկ գրականութեան մէջ, այդ չափի զգացումն է: Եւ ապագայում ոչ մի Եւրոպական գրականութեան մէջ չէ տեսնում այդ

ղգացումը այնքան պահպանուած, որքան ֆրանսիականի մէջ։ Այս է պատճառը, որ նրա ընթերցանութեան գլխաւոր հրապուրիչ նիւթը դառնում է ֆրանսիական վէպը։ Արդ, եթէ կարող է խօսք լինել ազդեցութեան մասին, այդ միայն ֆրանսիականն է, որ ազդել է նրա վրայ։

1885 թուին նա գրեց «Նամուսը» Ժողովրդի գուեհիկ խաւերի կեանքից։ Միաժամանակ լոյս է տեսնում «Տօլստոյի» „Власть тьмы“ դրամը։ Հայկական խիկար իմաստունները Շիրվանզադէին ասում են, թէ «Նամուսը» գրուած է Տօլստոյի յիշեալ դրամի ազդեցութեամբ։ Այդ ենթադրութեան պատճառն է երկու գրուածների սիւժէի նմանութիւնը։ Սակայն նրա հակառակորդները կարմրում են ամօթից, երբ իմանում են, որ «Նամուսը» լոյս է տեսել „Власть тьмы“-ից մի տարի առաջ։

Նոյն թուին «Գործ» ամսագրին տալիս է հոդեբանական մի էտիւդ «Նորերից մէկը» վերնագրով։

Յաջորդ թուին հրաւիրուելով «Արծագանքի» մշտական աշխատակից, տալիս է այդ հանդէսին մի շարք վէպիկներ և պատմուածքներ։ Ահա նրանց ցանկը. «Օրիորդ Լիզա», «Խնամատար», «Արամբին», աւելի ուշ «Զուր յոյսեր», տասնուհինգ տարի անցած», «Ֆաթմա և Ասադ», «Խելագարը» և «Թանկագին կապանք»։

«Արծագանքին» աշխատակցում է աւելի քան վեց տարի, երբեմն փոխարինելով խմբագրին նրա բացակայութեան ժամանակ։ Վարում է նրա առաջնորդողների բաժինը և իրաք խմբագրում շաբաթաթերթը։

Նոյն միջոցներին Գրիգոր Արծրունին հրաւիրում է նրան մշտական աշխատակից «Մշակի», բայց Շիրվանզադէն անյարմար է համարում թողնել «Արծագանքը», մանաւանդ որ երկու լրագրների ուղղութիւնների մէջ ոչինչ տարբերութիւն չէր տեսնում։ Բացի այդ, նրան լիակատար ազատութիւն էր տուած «Արծագանքում» գրել ինչ-որ նա կամենում էր և խմբագիրը չէր փոխում նրա ոչ մի բառը։ Այն ժամանակ Արծրունին խնդրում է նրան գէթ հեռուից աշխատակցել իրան, տալով «Մշակին» վէպիկներ։ Ժամանակի սղութիւնը նրան

թոյլ չի տալիս Արծրունու առաջարկը կատարելու, և այս միջոցից «Մշակի» յարաբերու թիւնները սառչում են, որ ապա դառնում է թշնամական։

1890—91 թուին թողնելով «Արծագանքը», որի ուղղութիւնն արդէն քանի գնում այնքան Շիրվանզադէի համար անհամակրելի էր դառնում, գգում է իրան լիովին ազատ։ «Մուրճի» այն ժամանակուայ խմբագիր Ա. Արասխանեանցը խնդրում է նրան աշխատակցել և նա տալիս է նրան «Արսէն Դիմաքսեան» վէպը։

1892 թուականին գրում է «Կրակը» ուսանողական կեանքից. ապա նրա մէջ յղանում է «Բաօսը» գրելու միտքը։ Այդ ընդարձակ վէպը, որ Շիրվանզադէի ամենամեծ գործն է, խլում է նրանցից մի ամբողջ տարի։ Լոյս է տեսնում նա առանձին հատորով Բագուում։

1895 թուին նա ճամբորդում է Ռուսիայում և վերադառնալով Պետերբուրգից դեկտեմբերի 1-ին բանտարկուում է իբրև յեղափոխական։ Երեք ամիս մենակ բանտարկութեան մէջ մընալով, արձակուում է։ Բանտում եղած միջոցին գրում է մի ընդարձակ «Ցիշատակարան» բանտարկեալների կեանքից, սակայն բանտից դուրս գալիս ձեռագիրը վերցնում են նրանից և յանձնում ժանդարմերիային, չը նայելով, որ այնտեղ չը կար մի հակացենզուրական տող։

Երկու տարի տևում է նրա «քաղաքական յանցանքի» քննութիւնը, 1898 թուի սկզբին նրան յայտնում են, որ տարագրուում է Կովկասից 2 տարի. նա ընտրում է տարագրութեան համար «Օդեսսա» քաղաքը, ուր և կենում է 1898 թուի մայիսից մինչև 1899 թուի դեկտեմբերը։ Օդեսսայում նա գրում է «Մելանիա» վէպը։ Վերադառնալով Կովկաս, գրում է «Եւգինէ» գրաման, որ ունենում է տեղին յաջողութիւն թէ Թիֆլիսում, թէ Բագուում և թէ այլ հայաբնակ տեղեր։

Այդ միջոցին մենք բացի «Մշակից» չունէինք լրագիր, այն ինչ նա կարիք զգալով երբեմն թեթև բաներ գրելու, մերթ ընդ մերթ աշխատակցում է «Տարազին»։

«Մուրճը», որ այդ ժամանակ պատկանում էր Կոստան-

դէն Կրասիլնիկեանին, դիմում է նրան աշխատակցելու և նա տալիս է նրան «Արտիստը»։

1901 թուին գրում է «Ցաւագարը», որ տպւում է «Հորիզոն» ժողովածուի մէջ։

1902 թուին գրում է «Ունէր իրաւունք» դրաման, որ դրգռում է հայ հասարակութեան պահպանողական մասին և հանդիպում հալածանքի սիւժէի յանդգնութեան պատճառով։ Այնտեղ Շիրվանզադէն հանդիսանում է պաշտպան կնոջ ազատութեան, և այս դիւր չի գալիս մեր ընկերական կեանքի նեխուած մթնոլորդի սիրահարներին. «Լումայի» խմբագիր Գ/ատ ք. Աղանեանցը արհամարհելով խաւարամիտների վայրիվերոյ կարծիքները, տպում է իւր հանդիսում «Ունէ՞ր իրաւունքը»։

Տարի ու կէս անցած 1904-ի վերջին հայ բեմին տալիս է «Պատուի համար»։ Առաջին անդամ այդ պիեսը ներկայացւում է Բազում տհաղին յաջողութեամբ և տեղական մամուլը նրա մասին խօսում է հիացմամբ։ Պիեսը կրկնւում է։ Ապա նա ներկայացւում է Թիֆլիսում և գանում աւելի մեծ յաջողութիւն։ Տպագրուելով «Լումայում», ապա առանձին գրքոյկով «Պատուի համար», դառնում է ամենաժողովրդական բեմական երկը։ Եւ ահա եօթ տարի է նա հայ բեմերատուարի առաջին զարդն է և ոչ մի պիես, ոչ թարգմանական, ոչ ինքնուրոյն, այնքան չի ներկայացւում, որքան «Պատուի համար»-ը։ Բաւական է ասել, որ երկու սեզօնի ընթացքում միայն Աբելեան-Արմենեան խումբը այն ներկայացրեց Կ. Պոլսում և տասնկահայ ուրիշ քաղաքներում 40 անդամ։ Ընդհանուր առմամբ այդ դրամը ներկայացուել է մօտ 250 անդամ ամենուրեք, ուր կայ մի բուռն հայ։ Մի թիւ, որ հայ բեմի համար երևակայական կարելի է համարել։ «Պատուի համարը» թարգմանուած է ֆրանսերէն, ռուսերէն, վրացերէն և տաճկերէն։ Տաճկերէն խաղացուել է շատ անդամ և այժմ էլ խաղացւում է, վրացերէն խաղացուեց Թիֆլիսում և Քութայիսում անցեալ տարի։ Այս տարի և ս նա վրաց բեմերատուարի մէջ է մտել «Եւգինէի» հետ։ Ռուսերէն տակաւին խաղացուած չէ։ Գալով ֆրանսերէնին, յոյս կայ, որ այս տարի խաղացուի Պարիզում։

1903-ից մինչև 1905 թուականը նա աշխատակցում է «Լուսային» և այդ միջոցին բացի չիշեալ պիեսներից տալիս է «Վարդան Հերումեան» ընդարձակ վէպը, որի 3 մասից մէկն է դեռ լոյս տեսել, «Հաւատարիմ ընկերներ» ու «Գաղափարի գերի պատմուածքները»։

1905 թ-ի ամառը նա իր ընտանիքով տեղափոխւում է արտասահման որդիներին բարձրագոյն կրթութիւն տալու նպատակով և հաստատւում Պարիզում։ Այստեղ սկսում է եռանդով ուսումնասիրել գեղարուեստները, ամբողջ օրերով թափառելով թանգարաններում։ Միաժամանակ այցելում է Սորբոնը և երեք տարի շարունակ լսում նշանաւոր գիտնականների դասախօսութիւնները գրականութեան, արուեստների, պատմութեան և փիլիսոփայութեան մասին։ Առանձին հետաքրքրութեամբ հետևում է ժամանակակից նշանաւոր քննադատ Էմիլ Ֆագիեի դասախօսութիւններին։

Պարիզը, համաշխարհային քաղաքակրթութեան այդ գլխաւոր կենտրոնը և միակը իւր տեսակում, ընդլայնում է նրա աշխարհահայեացքը։ Այնտեղ ամեն ինչ հետաքրքրում է նրան սկսած ծիարշաւից մինչև փողոցային կեանքը և գեղարուեստներից մինչև կեանքի բաբիլոնեան ժխորը... Նա ծծում է այդ բազմերանգ մթնոլորտը, որ լաճախ լի է թոյներով, իր ամբողջ թոքերով։ Թոյնը չի ներգործում նրա վրայ, ընդհակառակը նրա էութիւնից դուրս է մղում նախանձի, տեսլութեան, չարակամութեան թոյնը, որ շնչել էր հայրենի երկրում։ Այդ ժամանակից զգում է մի սոսկալի թախիծ, տեսնելով եւրոպական մթնոլորտի և հայ կեանքի մէջ եղած սոսկալի անդունդը։ Այն անանցնելի անդունդը, որի ծայրումն զգում է իրան ամբողջ հինգ տարի և այժմ...

Պարիզ մնալով աւելի քան հինգ տարի, այդ ժամանակուայ ընթացքում նրա գրականական տպաւորութիւնները մերթ ընդ մերթ հաղորդւում են իր հայրենակիցներին «Երկիր», «Գործ», վերջերում «Հորիզոն» լրագրներում։

Այս հինգ տարուայ ընթացքում նա գրում է «Ջհուդի Ականջը» պատմուածքը, որ տպուեց «Արշալոյս» լրագրում և երեք դրամա՝ «Աւերակների վրայ», «Կործանուածը» և «Եր-

մենուհի», որ այս տարի կը խաղացուի Թիֆլիսում: Նաև մի արարուածով մի կատակերգութիւն «Նաուլատանը» վերնագրով:

Պարիզում եղած միջոցին թարգմանւում է Ֆրանսերէնի նրա երկերից մի քանիսը: «Արտիստը» լոյս է տեսնում 1909 թուին Պարիզի հայոց միութեան ծախքով և շարժում ֆրանսիացի ընթերցողների հետաքրքրութիւնը: Լրագրները խօսում են նրա մասին գովասանքով: Մի քանի նշանաւոր հեղինակներ, ինչպէս Պիեռ Լօտի, Էդմոն Ֆալի և այլն շնորհաւորական նամակներ են գրում նրան: Առանձին հիացմամբ խօսում են «Արտիստի» մասին Անատոլ Լեռուա Բոլիէ, Ռօնի Էնէ և այլն:

Այնուհետև նա հայագէտ Ֆրեդերիկ Մակլերի միջոցով գրանում է ֆրանսիացի հրատարակիչ իր գործերի: Կատարեալ բաղդ է գտնել հրատարակիչ Պարիզում մանաւանդ օտար հեղինակների համար: Հայ հեղինակներից այս բաղդին առաջինը արժանանում է Շիրվանզադէն: Ներկայումս մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի նրա երկերի ֆրանսերէն թարգմանութիւնների I հատորը—«Ցաւագարի» թարգմանութիւնը: Հրատարակութիւնը կրում է ընդհանուր անուն „Petite Bibliothèque arménienne“, Յաջորդ հատորների մէջ կը մտնեն «Ֆաթմա և Ասադը», «Տասնուհինգ տարի անցած», «Ջհուդի ականջը», «Պատուի համար», «Թանկագին կապանք» և դուցէ նրա մեծ վէպերից «Քաօսը»:

Նրա երկերից ռուսերէն թարգմանուած են. «Օր. Լիզա», «Նամուսը», «Թանկագին կապանք», «Ֆաթմա և Ասադ», «Տասնուհինգ տարի անցած» և «Արսէն Դիմաքսեան» (վերջինը ոչ լիովին) և «Պատուի համար»:

Երեսուն տարի է Շիրվանզադէն գրական ասպարիզումն է: Չէ զգում իրան ծեր և չէ կորցրել իր եռանդը: Նա իր կոչումը տակաւին կատարած չէ համարում. ունի ձեռքի տակ միքանի խոշոր գործեր, որոնց վրայ տարիներ պիտի աշխատել: Զգում է, որ դեռ չէ տուել այն, ինչ որ կարող է տալ. յամենայն դէպս մենք սեսանք նրա գրասեղանում երկու մեծ վէպե-

բի, մի քանի պատմուածքների և երեք դրամաների ծրագիրը։ Կը յաջողի՞, արդեօք, իրագործել իր փափագը թէ ոչ-չը գիտեմ։ Մահը մերն է, մենք մահին», ասում է Ժողովուրդը։

Մի քանի տեղեկութիւններ էլ նրա մասնաւոր կեանքի մասին։

27 տարեկան հասակում ամուսնացել է։ Ունի 2 որդու և մի աղջիկ զաւակ։ Մեծ որդին Ռուբէնը 24 տարեկան է և առաջիկայ տարի կաւարտի Բելգիայում Լիեժի համալսարանը, երկրորդ որդին 23 տարեկան Արմենը Պարիզի համալսարանի իրաւաբանական ֆակիւլտէի ուսանող էր, երրորդ կուրս անցնելու ժամանակ յանկարծ տկարացաւ և ստիպուեց թողնել ուսումը։ Այժմ հոր ամենագլխաւոր հոգսը նրա առողջութիւնն է։ Աղջիկը 16 տարեկան է, Մարգարիտը աւարտեց այս տարի Պարիզի Ֆենելոն անուանով Լիսէն։ Կինը ծնեալ Նինա Լօռու-Մելիքեան հանդուցեալ գնդապետ Զաքարիա Լօռու-Մելիքեանի դուստրը, նրա վշտերի և ուրախութիւնների ընկերը, աստուածային համբերութեամբ բաժանում է 25 տարի և կրում հայ հեղինակի դառը վիճակը։

Բնաւորութեամբ Շիրվանզադէն զուարթ մարդ է, ուշխարհային կեանքը սիրող և չը դիտեմ ինչ կը լինէր, եթէ կեանքի դառն հանգամանքները կը ճնշէին նրան։

Ահա ինչ է գրում մեզ իւր մասին Շիրվանզադէն իւր մի մասնաւոր նամակում, որ մեր ձեռքն է անցել պատահաբար.

«Ինձ համար անհասկանալի է գրող մարդու խորշելը ընկերական կեանքից։ Ինձ թւում է, որ հասարակական և անհատական վարք ու բարքերի վերարտադրողը պէտք է անընդհատ շփուի հասարակութեան և անհատների հետ։ Առանձնակի, մենակեաց դոյութիւնը չի կարող բաւականաչափ պաշար տալ վիպասանի երևակայութեանը։ Վէպ ասուած բանը կեանքի հայելին է և որպէս զի նա լաւ պատկերացնի այդ կեանքը, վիպասանը պէտք է միշտ մօտ լինի նրան։ Քանի նա հեռու է, այնքան նրա հայելին թոյլ կարտայայտի»։

«Բացի դրանից անչատ կեանք վարող հեղինակը մե-

զանչում է մարդկային կոչման դէմ։ Ի՞նչ իրաւունքով է նա խորշում ընկերութիւնից, քանի որ նա ինքնուրոյնաբար երկնքից ընկած մի էակ չէ, այլ նոյն երկրի ծնունդ, ուր ապրում է և շնչում։ Ինչպէս անտառից հեռու բուսած ծառը ժամանակից առաջ է թառամում, նոյնպէս և մենակեաց մարդու հոգին կարող է թառամել վաղաժամ։ Սիրում եմ կեանքը և ոչ միայն նրա հաճոյքները, այլ և դառնութիւնները, վշտերը և թշուառութիւնները։ Սիրում եմ, որովհետև այնտեղ է սկսում և այնտեղ վերջանում մեր գոյութեան խորհուրդը»։

Հայ

ԵՐԿՈՒ ՍԱՐՍԱՓՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Այս տարուայ «Հորիզոնի» 122 համարում «Մուրացանի ժառանգները» ստորագրութեամբ մի նամակ էր տպուած Բերլինից, որ առաջ ենք բերում նոյնութեամբ.

ՑԱՒԱԼԻ ԵՒ ԾԱՆՐ ՍԽԱԼ

Բերլին, 11 յունիսի

Կէս ժամ առաջ ստացանք հանգուցեալ Մուրացանի երկասիրութիւնների երկրորդ հատորը և սարսափելով կարդացինք այդ հատորի սկզբում տպուած, առանց մեր ժառանգներիս գիտութեան «Ռուզանը և նրա քննադատները» վերնագրով պոլեմիքական գրուածքը, որը անշուշտ հանգուցեալ հեղինակի տկար ժամանակուայ գրուած բան է։

Այսպիսի անտեղի բան տպագրելուն համար Տէր-Գիւտ ք. Աղանեանից և մեր լիազօր խմբ. պ. Տ. Նազարեանից (որը գուցէ անտեղեակ էր տպագրութեան) տեղեկութիւն հարցնելուց առաջ շտապում ենք յայտնելու հրապարակաւ մեր խորին ցաւը տեղի ունեցած այնպիսի մի խոշոր սխալի առթիւ։

Այս փորձը խրատ կը լինի մեզ։ Այսուհետև առանց մեր անմիջական հսկողութեան ոչ մի բան լոյս չի տեսնիլ, ի նկատի առնելով հանգուցեալ հեղինակի վերջին մի քանի տարիների փոփոխակի հոգեկան ցաւալի վիճակը։

Մուրացանի ժառանգներ

Յ. Գ. Այսօր հեռագրով կարգադրեցինք ոչնչացնել այդ սկզբի Ա—ԺԹ երեսները։

Նոյնք

Հէնց նոյն թերթի հետևեալ 123 համարում «Տ. Նազարեան» ստորագրութեամբ տպուած էր նրա լրացուցիչ նամակը «ցաւալի և ծանր սխալի մասին» վերնագրով, որ նոյնպէս նոյնութեամբ առաջ ենք բերում այստեղ.

ՅԱՒԱԼԻ ԵՒ ԾԱՆՐ ՍԽԱԼԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիզ, 7 յունիսի

Սարսափով կարդացի Մուրացանի ժառանգների նամակը («Հորիզոն» № 122)։

Յայտնում եմ, որ ես ոչ մի տեղեկութիւն չեմ ունեցել, չեմ լսել թէ գոյութիւն ունի «Ռուզանը և նրա քննադատները» վերնագրով պոլեմիքական գրուածքը։

Այդ հատորը հանգուցեալ Մուրացանը իր ձեռքով է եղել յանձնած Տէր-Գիւտ ա. ք. Աղանեանին և ես այդ գիրքը տեսել եմ միայն նրա լոյս տեսնելուց յետոյ և ստացածս առաջին օրինակը առանց իսկ կարդալու անյապաղ ուղարկել եմ Մուրացանի ժառանգներին այնպիսի արագութեամբ, ինչպիսի արագութեամբ տպարանը ուղարկում է առաջին օրինակը գրաքննական կոմիտէին։

Ոչ մի առընչութիւն չեմ ունեցել այդ հատորի թէ բովանդակութեան և թէ հրատարակութեան հետ։ Տպարանից մինչև օրս ստացած է մինչև 19 օրինակ, որոնցից մէկը ուղարկուած է Մուրացանի ժառանգներին, միւսը Մուրացանի մօրը, մի քանի հատ տեղական թերթերի խմբագրութիւններին, մի հատ Գուտենբերգ գրավաճառանոցին և մի հատ պ. Ղ. Աղայեանին։

Գիրքը դեռ վաճառ չէ հանուած, որովհետև փոխուում է շապիկը, քննադատականը միջից հանելու պատճառով։

Տ. Նազարեան

Ուրեմն առաջին նամակով Մուրացանի ժառանգները «սարսափելով» մեղադրում են ինձ, որ ես հանգ. Մուրացանի երկերի երկրորդ հատորի մէջ տպագրել եմ «Ռուզանը և նրա քննադատները» վերնագրով գրուածքը, մի «անտեղի բան», որ ժառանգները համարում են «անշուշտ հեղինակի տկար ժամանակուայ գրուած բան»։

Իսկ երկրորդ նամակով պ. Տ. Նազարեանը «սարսափով» կարդալով Մուրացանի ժառանգների նամակը, յայտնում է, որ «ոչ մի տեղեկութիւն չէ ունեցել, չէ լսել թէ գոյութիւն ունի «Ռուզանը և նրա քննադատները» վերնագրով պոլէմիքական գրուածքը և որ «փոխուում է շապիկը, քննադատականը միջից հանելու պատճառով»։

Դժբախտաբար ընտանեկան հանգամանքների պատճառով մինչև այժմ անկարող եղայ ես պատասխանել այդ երկու նամակներին. բայց լաւ է ուշ՝ քան երբէք։

Ամենից առաջ պէտք է ասեմ, որ ես երբէք չէի սպասում այդ նամակների հանդէս գալուն և անգ թէ ինչ պատճառով։

1908 թուի օգոստոսի 30 ին վախճանուեց ողբացեալ վիպագիր Մուրացանը և ես նոյն թուի սեպտեմբերի 7ին, դեռ ևս հանգուցեալի դին հողին չյանձնած շտապցի իմ խմբագրութեամբ լոյս տեսնող «Հայրենիք» շաբաթաթերթի 15 համարում մանրամասն հաշիւ տալ հասարակութեան նորա՝ արդէն մամուլի տակ եղած երկերի II հատորի տպագրութեան բոլոր հանգամանքների մասին «Մուրացանի վերջին կամքը» խորագրով յօդուածում, ուր ի միջի այլոց, ասուած էր, որ ժողովածուի մէջ մտնում է և հեղինակի «պատասխանը իւր քննադատներին»։ Հայրենիքի այդ համարը ինքս մեր տանը անձամբ յանձնեցի հանգուցեալի քենի տիկին Մուսայէլեանցին նորա տիկնոջ և ժառանգներին ուղարկելու համար և այնուհետև ոչ մի կարգադրութիւն տեղի չունեցաւ վերջիններիս կողմից այդ յօդուածի հրատարակութեան վերաբերմամբ, չնայելով որ նրանց քաջ յայտնի էր տպագրուող հատորի բովանդակութիւնը։

Բայց քանի որ մի անգամ արդէն այդ նամակները լոյս տեսան մամուլի մէջ, ես պէտք է մի անգամ էլ հանգամանօրէն առաջ բերեմ Մուրացանի երկերի II հատորի տպագրութեան մանրամասն պատմութիւնը և քննել թէ որ աստիճան նրա ժառանգները իրաւունք ունէին յիշեալ նամակը գրելու։

Մուրացանը, որի առանձին սէրն ու մտերմութիւնը վայելելու պատիւն ունէի ես, մի քանի տարի շարունակ ցանկանում էր տպագրել իւր երկերի հետևեալ հատորները և առաջարկում էր ինձ յանձն առնել տպագրութեան հոգացողութիւնը։ 1907 թուականի հոկտեմբերի 10 ին նա յանձնեց Աղանեան տպարանին իր երկերի III հատորը-Ռուզանը և Անդրէաս երէցը, որ և մտել է տպարանի պաշտօնական մատենի մէջ 389 համարով։ Այդ հատորից շարուած էր արդէն 32 երես, երբ մի օր Մուրացանը մտաւ տպարան և խնդրեց դադարեցնել տպագրութիւնը, որովհետև մտադիր է Ռուզանը փոփոխութեան ենթարկել, հինգերորդ գործողութիւն աւելացնել և նրան կից տալ իր պատասխանը քննադատներին։ Նա յետ ստացաւ ձեռագիրը և տպարանը հրաժարուեց ընդունել նրանից 32 երեսի շարելու վարձը։

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ նա մի անգամ կարդաց ինձ մօտ իր պատասխանի սեագիրն և ասաց, որ շուտով սկսելու է երկու հատորի տպագրութիւնը միանգամից, իսկ մի անգամ էլ կանչելով ինձ իր մօտ՝ կարդաց «Ռուզան»-ի փոփոխած

կտորները և աւելացրած մենախօսութիւնը որպէս 5-դ գործողութիւն։

1908 թուի մայիսին մի քանի անգամ նա կանչեց ինձ իր մօտ և խնդրեց տպագրութեան ծախքերի նախահաշիւ տալ իրան, յայտնելով, որ արդէն վերջնականապէս որոշել է տպագրութեան յանձնել երկերի II և III հատորները և որ ես յանձն առնեմ անմիջապէս սկսել գործը։

Ես մի փոքր ուշացայ նորան պատասխան տանել, ուստի և Մուրացանը յունիսի սկզբին քաղաքային փոստով նամակ է ուղարկում և կանչում ինձ, աւելացնելով մէջը, որ ուզում է անմիջապէս յանձնել ինձ իր երկերի տպագրութեան ամբողջ հոգսը։

Յունիսի 16-ին էր կարծեմ, որ ես գնացի նորա մօտ և ներկայացրի տպագրութեան հաշիւը. նա մատենադարանը քրքրելիս աթոռից վայր էր ընկել, ծունկն ու մէջքը ցաւացրել ու բժշկւում էր։ Նրա մօտ էր Ս. Քամալեանցը և միասին կարդում ու կարգի էին դնում Մուրացանի՝ իր քննադատներին ուղղած պատասխանի ձեռագիրը։—Նա յայտնեց ինձ իր անբաւականութիւնը, որ ուշ էի այցելում իրան, յանձնեց ինձ տպագրել իր հետևեալ երկերը.

1. երկերի II հատորը, որի մէջ մտնում էին ա. պատասխան իր քննադատներին, բ. Ռուզանը փոփոխած և գ. Անդրէաս երէց։

2. երկերի III հատորը—Գէորգ Մարզպետունին։

3. բանաստեղծութիւնների ժողովածուն։

Տուեց նաև իր պատկերը ստորագրած, որ կլիշէ պատրաստել տամ երկերի II հատորի մէջ զետեղելու համար։

Նա ինձ յանձնեց գրքերի սրբագրութիւնը վարձատրութեամբ, որ ես սիրով յանձն առայ կատարել, հրաժարուելով սակայն վարձատրութիւնից։

Հետևեալ օրերին ես կրկին այցելեցի նրան և մի անգամ էլ Ճեմարանի ուսուցիչ պ. Մանուկ Աբեղեանի հետ միասին, և երկուսս էլ գտանք Մուրացանին լիակատար խելքի վրայ, լուրջ խորհող, լուրջ դատող և աւելի էլ լուրջ խօսող։

Նա առաջարկեց ինձ, որ երկու գրքի թղթի և տպագրութեան հաշուում ստանամ մի հազար ռուբլի պ. Եփ. Միրզայեանից, սակայն ես հրաժարուեցի վաղօրօք այդչափ գումար ստանալ, ուստի և Մուրացանը մի տոմս գրեց նրան, որ առ այժմ ինձ յանձնէ չորս հարիւր ռուբլի, իսկ մնացեալը հետզհետէ, ամեն անգամ իր առանձին կարգադրութեամբ։ Պ. Միրզայեանցը անմիջապէս կատարեց Մուրացանի կարգադրութիւնը։

Նոյն յունիսի 24-ին սկսուեց II հատորի տպագրութիւնը։

Մուրացանը գնաց Մանգլիս ամարանոցը կազդուրուելու և

ճանապարհին վկայ եղաւ մի կառքի շուռ գալուն և նրա ուղևորների ջախջախուելուն, և այդ այնպէս վտանգաւոր կերպով ազդեց նրա ջղերի վրայ, որ մի քանի օրից արդէն խելագարութեան նշաններով վերադարձրին նրան Թիֆլիս։

Նրա մահից յետ մի քանի անձեր կազմեցին մի մասնաժողով, և իրանց վրայ առին Մուրացանի երկերի տպագրութեան գործը. այդ մասնաժողովը, որ ոչ պաշտօնական բնոյթ ունէր և ոչ հասարակական, նախ մի անհատի միջոցով և ապա նոյն իսկ թղթով հաշիւ պահանջեցին ինձանից Մուրացանի գրքի տպագրութեան մասին, առաջարկեցին դադարեցնել տպագրութիւնը և տպագրելի նիւթերը յանձնել իրանց։ Բայց ես պատասխանեցի նրանց, թէ քանի որ ոչ ոք չէ կարող երաշխաւորել այդ մասնաժողովի գոյութեան յարատևելուն և քանի որ ես օրէնքով պատասխանատու եմ միմիայն հանգուցեալի ժառանգների առաջ, հրաժարւում եմ որևէ բան յանձնել նրան, կամ դադարեցնել տպագրութիւնը. այլ միայն կարող եմ յանձնել Մուրացանի ժառանգների մերձաւոր բարեկամ և մասնաժողովի անդամ պ. Ս. Զերքեզեանցին ինձ մօտ գտնուած նիւթերը, որին և յանձնեցի թէ բոլոր նիւթերը և թէ տպագրուող գրքի հաշիւը։

Միւս կողմից ես շարունակեցի երկրորդ հատորի տպագրութիւնը, աչքի առաջ ունենալով, որ ինձ վրայ ծանրանում են թէ բարոյական և թէ օրինական պարտաւորութիւններ միանգամից։

Ես չսխալուեցի իմ հաշիւների մէջ, որովհետև շուտով, երբ գրքի դեռ 17 մամուլն էր տպւում, ստանում եմ պ. Տիգրան Նազարեանցից մի նամակ, որի մէջ գրում է թէ ինքը նշանակուած է հանգ. Մուրացանի կնոջ և ժառանգների լիազօր ներկայացուցիչը, և ժառանգները կարգադրել են, որ ոչ մասնաժողովը և ոչ ես չշարունակենք գրքերի տպագրութիւնը և խնդրում էր անմիջապէս դադարեցնել II հատորի տպագրութիւնը։

Ես օրինական գտայ պ. Նազարեանցից ինձ եղած առաջարկը և կարգադրեցի տպագրութիւնը դադարեցնել։

Անցան երկար ամիսներ։

Գրքի $^2/_3$ մասն արդէն տպուած էր և ոչ ոք հոգացող չկար այդ մասին։ Ես բանակցութեան մէջ մտայ պ. Նազարեանցի հետ, յայտնեցի նրան, որ տպուած թերթերը երկար մնալուց կարող են որևէ վտանգի ենթարկուել և համաձայնութիւն կայացրինք, որ տպագրութիւնն աւարտուի։

Մի երկու շաբաթից լոյս տեսաւ երկերի II հատորը։

Համաձայն Մուրացանի սեպհական կարգադրութեան, այդ հատորի մէջ մտել էին 1, պատասխան իր քննադատներին, 2,

Թուղան և 3, Անդրէաս երէց։ Որովհետև, ինչպէս ասացի, առաջին յօդուածը Մուրացանի հետ միասին կարգի բերելիս ես տեսել էի պ. Ս. Քամալեանցին, ուստի և չմոռանամ ասել, որ այդ յօդուածի տպարանական սրբագրութիւնը ես խնդրեցի կատարել իրան Քամալեանցին, որի ստորագրած փորձի թերթերը դեռ պահւում են ինձ ժօտ։

Գիրքը որ լոյս տեսաւ, մի քանի օրինակ ես ուղարկեցի լիազօր պ. Նազարեանցին, որին և ներկայացրի տպագրութեան հաշիւը, որոշ զեղջեր անելով և այն գնից, ինչ որ խօսել էինք Մուրացանի հետ։

Մէկ շաբաթի չափ անցել էր այդ օրից, երբ պ. Նազարեանից ստիպողական պատուէր եմ ստանում գրքից դուրս կտրել առաջին յօդուածը, գրքի շապիկը նորից տպագրել և այնպէս նորից կազմել, որովհետև այնպէս են հրամայել ժառանգները հեռագրով։

Ես ապշել էի։ Բայց ինչ կարող էի անել. հեղինակը չկար, իսկ կարգադրողները նրա զոյքի ժառանգներն էին. անմիջապէս կարգադրեցի գրքերը քանդել, «Պատասխանը» դուրս կտրել և շապիկը նորից տպելով թղթակազմել։

Այժմ ուրեմն ընթերցողի առաջ դրուած է գիրքը այն կերպարանքով, ինչպէս որ ցանկացան հանգուցեալի ժառանգները։

Բայց սրանով էլ չբաւականացան նախանձախնդիր ժառանգները. նոքա «սարսափելուց» անմիջապէս նամակ տուեցին «Հորիզոնում», որով նախքան ինձանից բացատրութիւն պահանջելը ներողութիւն էին խնդրում հասարակութիւնից, ասելով, թէ իրանց հայրը վերջերը տառապում էր հոգեկան հիւանդութեամբ. և պ. Նազարեանցն էլ «սարսափով» էր կարդացել նրանց այդ նամակը։

Ես պատմեցի ամեն բան պարզապէս, ինչպէս որ դէպքերը տեղի էին ունեցել. բայց վերը յիշածներից առաջ են գալիս մի քանի էական հարցեր, որոնց ես կուզենայի պարզել հասարակութեան առաջ.—

1. Իրաւ էր, որ Մուրացանը վերջերը հոգեկան հիւանդ էր և իր «պատասխանը» հոգեկան հիւանդ ժամանակի գրուածք։

2, Ինչ «անբնական կամ անտրամաբան» մտածողութիւն էր պարունակում այդ յօդուածը իւր մէջ։

Եւ 3, որ ամենագլխաւոր եմ համարում ես, իրաւունք ունէին Մուրացանի ժառանգները հանել նրա անմիջական կարգադրութեամբ տպել տուած յօդուածը երկերի հատորից և մի հեղինակի

գործ հասարակութեան ներկայացնել այնպէս, ինչպէս որ ոչ թէ ինքը հեղինակն է ցանկանում, այլ... բոլորովին ուրիշ անձինք, թէկուզ լինէին նրա ժառանգները։

Առաջին հարցի մասին ես ինչպէս բժիշկ չեմ կարող խօսել, բայց իբրև հանգուցեալի խիստ մտերիմներից մէկը պէտք է ասեմ, որ ես նրան խելագար հիւանդ և ոչ իսկ հոգեկան թեթև խանգարման մէջ չեմ տեսել, ճշմարիտ է նա ջղային հիւանդութիւն ունէր, բայց ինչպէս կվկայեն նրա մօտիկ ծանօթները, այդ հիւանդութիւնը կայանում էր գլխացաւի մէջ միայն, որ սակայն մշտական մի երևոյթ չէր, այլ երբեմնական. բայց ես չեմ նկատել նրա դատելու, խօսելու կամ գրելու մէջ ոչ մի արտասովոր բան։ Նա ճշմարիտ խելագար էր Մանգլիսից գալուց յետոյ, ուրեմն երկերի նիւթը տպարանին յանձնելուց յետոյ։

Թող հրապարակ գան և վկայեն պ. պ. Մանուկ Աբեղեանցն ու Սարգիս Բամալեանցը, թէ արդեօք, երբ նրանք ժամերով խօսակցում էին և քննում մեր հասարակական այս և այն խնդիրները, գտնն արդեօք Մուրացանի մէջ խելագարին յատուկ որևէ միտք կամ դատողութիւն։ Մանաւանդ վերջինը, որ և մասնակցում էր նրա նիւթերի կարգաւորութեան գործին։ Այդ ինչպէս պատահեց, որ նրան շրջապատողները խելագարութիւն չէին տեսնում, իսկ հազարաւոր վերստեր տասնեակ տարիներ հեռու ապրող և նրա երեսը չտեսնող «ժառանգները» գտնում էին նրան խելագար։

Կամ այդ որ բժիշկն էր, որ նրան բժշկում էր ինչպէս խելագար, հետաքրքրական է իմանալ։

Երկրորդ խնդիրը ինքը յօդուածն է։ Տեսնենք թէ ինչ խելագար միտք է պարունակում իր մէջ այդ գրուածքը, որ ժառանգներին իբրև խելագարի գործ է թուացել և այդ պատճառով էլ «սարսափ» ով են կարդացել։

Շատ ցանկալի կլինէր, եթէ ես կարողանայի առաջ բերել այստեղ Մուրացանի ամբողջ դուրս կտրած յօդուածը «Ռուզանը և նրա քննադատները» վերնագրով ապացուցանելու համար, թէ ինչ լուրջ, խոհուն և տրամաբան դատողութիւններով է ներշնչուած այդ յօդուածը, բայց մենք այդ կանենք մի ուրիշ անգամ, իսկ այժմ այնքանն էլ բաւական ենք համարում, որ միայն մի քանի կտորներ արտատպենք այնտեղից, որպէսզի ընթերցողը իմանայ, որ Մուրացանը այդ յօդուածը գրելիս կատարեալ խելքի է եղել հեռու խելագարութիւնից։ Ահա նա.

«ՌՈՒԶԱՆԸ» ԵՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

«Համեստութեան ու պատշաճի տեսակէտից դատելով՝ լաւ է որ սեփհական երկի մասին երբէք չըխօսէ հեղինակը, որովհետև որքան էլ անկեղծ լինի նա, դարձեալ կգտնուին մարդիկ, որոնք նրա խօսքին կը հակադրեն յայտնի առածը թէ՝ «Ոչ ոք իւր թանին թթու չի ասում»։

Բայց և համեստութեան այդ պահանջին հնարաւոր է, կարծում եմ, պատկառ մնալ այնպիսի երկրում, ուր նախ՝ կան ճշմարիտ քննադատներ, այսինքն մարդիկ, որոնք պատրաստութիւն և կոչում ունին գրական երկերի անաչառ քննիչն ու դատաւորը լինելու, և երկրորդ՝ ընթերցողների մեծ մասը զարգացած է այնքան, որ կարող է իւր կարդացածի մասին գաղափար կազմել՝ ազատօրէն կարդալով անձամբ հեղինակի գրուածքը և ոչ թէ կուրօրէն ենթարկուել առաջին պատահած տգէտ, անբարեխիղճ գրողի կարծիքներին, եթէ, ի դէպ դրանք արտայայտուեն կրքով, որոշ դիտումներով։

Մեր մէջ, դժբախտաբար։ հազուագիւտ են քննադատներ բառի իսկական նշանակութեամբ. դրանց փոխարէն կան, բազմաթիւ պօլեմիստներ, որոնք այս ու այն գրական երկի մասին յայտնում են իրենց հայեացքն ու կարծիքները որոշ դիտումներով ու նպատակներով՝ աչքի առաջ ունենալով աւելի գրողի անձը, քան գործը։

Այս երևոյթն ունի իւր բնական պատճառը։ Մեր երկրի հայ մամուլը իւր աշխատակիցներին ու ընթերցողներին, կամ ընդհանուր առմամբ, մտածող հայ հասարակութիւնը բաժանել է ազգանների և մկրտելով նրանց ազատամիտ ու պահպանողական, առաջադէմ ու յետադէմ անուններով՝ հասարակաց է դարձրել այն միտքը թէ՝ երկու հակառակ բանակի մարդիկ միեւնոյն ճշմարտութիւնը դաւանել չեն կարող, թէ մէկի գտած լաւը՝ միւսը վատ պիտի հռչակէ, կամ ցոյց տուած բարին պիտի ընդունէ չարի տեղ, այդ իսկ պատճառով ես կարծում եմ անհետացել են ասպարէզից ճշմարիտ քննադատներ և նրանց տեղն անցել զուտ պօլեմիստներ, կամ գրական մարտիկներ, որոնք կոչումն ունենալով այս կամ այն բանակի պատերազմը պատերազմելու, բնականաբար, անկարող պիտի լինեն հակառակորդի պաշտպան կամ փառաւորիչ հանդիսանալ՝ նոյն իսկ եթէ սա արժանի լինէր դրան, կամ դատել ու պարսաւել իրենց կուսակցին, եթէ նրա գործը պարսաւի լինէր արժան։

Քննադատը, սակայն ուրիշ է։ Իմ կարծիքով, նրա համար չկայ կուսակցութիւն, չկան բանակներ, ազատամտի կամ պահպանողականի շահեր. նա ճանաչում է միայն ազատ ստեղծագործու-

Ցիւնը և սրա արժանիքը։ Նրան կարող է հետաքրքրել և խօսեցնել ամեն մի գործ, որ առնչութիւն ունի գեղարուեստի, նրա զարգացման և շահերի հետ։ Եւ երբ հարկ լինի խօսել, կը խօսէ արդարութեամբ, առանց աչառելու, առանց քարեկամ և հակառակորդ ճանաչելու։ Կը գովէ սիրով, ինչ որ արժանի է գովութիւն և կը պարսաւէ աներկիւղ, ինչ որ պէտք է պարսաւել։

Յայտնի Բելինսկին իրաւամբ կրիտիկոսին անուանում է «գեղեցիկ դատաւոր» և կրիտիկայի նպատակը համարում այն՝ որ նրա շնորհիւ ստեղծագործութեան կամ գեղարուեստի հիմնական օրէնքները բացատրուին տեսականապէս, իսկ նրանց ճշմարտութիւնը հաստատուի գործնականօրէն։

Այս անել կարողանալու համար, հարկաւ, կրիտիկոսը ոչ միայն ծանօթ և հմուտ պիտի լինի ստեղծագործութեան հիմնական օրէնքներին, հապա ձիրք էլ պիտի ունենայ այդ օրէնքները ըստ պատշաճին բացատրելու և դրանց հիման վրայ հեղինակի գործը քննելու, ըստ որում այդ օրէնքներից դուրս եղող ըմբռնումով քննութիւն կատարելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կամայականութիւն, որ հարկաւ պօլեմիստին, բայց երբէք կրիտիկոսին վայել ունակութիւն է։»

. . . .

«Այդ դրաման ես գրել եմ տասն և ինը տարի սրանից առաջ։ Նա խաղացուել է Թիֆլիսում, առաջին անգամ 1882-ին, այսինքն հայոց թատրոնի փառաւոր շրջանում և այնպիսի խմբի ձեռքով, որի աստղերն էին Ադամեան, Մնակեան, Հրաչեայ, Գաբագաշ ևն։ Պարզ է որ այդպիսի խմբի ձեռքով խաղացուած պիէսի յաջողութիւնը կը լինէր կատարեալ և ազդեցութիւնը մեծ։ Ինձ այնպիսի ոգևորուած ցոյցեր արին, որ քիչ էր մնում հաւատայի թէ՝ իրաւ, արժանի էի դրանց։ Եւ ճշմարիտն ասած, այդ մոլորութեան մէջ էլ մնացի օրերով։ Նոյն դրութեան մէջ կը լինէր և ամեն մի սկսող, որի գրչի առաջին փորձը նման յաջողութեան էր հանդիպում։ Բայց իմ անձը և գործերը խստիւ քննելու և նրանց իսկական արժէքը ճանաչելու բնաւորութիւնը օտար չէր ինձ։ Այդ պատճառով էլ չնայելով որ իմ գործը հանդիսել էր յաջողութեան և շատերը ժամանակակիցներից խնդրեցին, թախանձեցին, նոյն իսկ տպագրութեան ծախքը առաջարկեցին, որպէսզի ես «Ռուզանը» լոյս հանեմ առանձին գրքուկով, այնու ամենայնիւ ես չհամաձուեցի, որովհետև իմ գործը բաւական մշակուած ու կատարեալ չէի համարում, ուստի թողեցի այն անտիպ։ Բացի այդ որոշ ժամանակից յետոյ էլ արգելեցի պիեսը չբեմադրել ոչ մի տեղ։

Անցան 18 երկար տարիներ, որոնց ընթացքում և ոչ մի օր ձեռս չէի առել «Ռուզանը», նախ՝ այն պատճառով որ հայոց թատրոնը գրեթէ մեռել էր, իսկ նրա թափառական բեմը չէր ողևորում ինձ, երկրորդ՝ ծառայութիւնից դուրս ունեցած սակաւաթիւ ժամերս գործ էի դնում վիպական աշխատութեանց վրայ։

. . . .

«Գալով պ. Լէօի իմ լեզուի մասին արած դիտողութեանց, ես արդէն բաւական եմ համարում նրա այն վկայութիւնը թէ՝ իմ լեզուն «հարուստ է և ողորկ ինչպէս հայերէնի նմուշ». իսկ մնացեալը թէ՝ ես գրաբառամոլ եմ, թէ ես գործ եմ ածում «զի», «կարի», «առ քեզ» և այլն (որոնք, 'ի դէպ ասած, ամբողջ 64 երեսի մէջ գործ են դրուած մի կամ երկու անգամ, այն էլ՝ բառերի համաչափութիւն կազմելու և խօսքը դիւրալուր դարձնելու համար), իսկ թէ ես գտնուում եմ Բէշիքթաշլեանի, Հէքիմեանի և Նարբէյի «խիստ» ազդեցութեան տակ, կարող եմ ասել, որ դրանց թատերական գրուածքներից մի ամբողջ երես կարդացած չեմ լինիլ իմ կեանքում, որովհետև կարդալու բաներ չեն։ Այս բոլորի նկատմամբ ոչինչ չեմ գրում, նախ այն պատճառով յօդուածս արդէն երկարեց և երկրորդ՝ որ «Ռուզանի լեզուն ամենքի առաջն է, կարող են կարդալ և դատել։ Ես միայն կը ցանկանայի, որ մեր գրողներից շատերը նոյնչափ բարեխղճաբար վարուէին հայ լեզուի հետ, որչափ ես եմ վարուում։ Այն ժամանակ, գուցէ պակասէին մեր միջից այնպիսի գրագէտներ, որոնք հայ բառերով գրում են ռուսերէն և որոնք, դժբաղդաբար, մեծ թիւ են կազմում մեր մէջ։»

Մնացած կէտերի վերաբերմամբ աւելորդ եմ համարում խօսել, որովհետև դրանցից իւրաքանչիւրի հերքումը պարունակում է իւր մէջ»։

Խնդրում ենք ընթերցողին մատնանիշ անել, թէ ինչ է գտնում նա այս հատուածների մէջ աննորմալ կամ լոգիկայի հակառակ դատողութիւն։

Ինչ վերաբերում է երրորդ հարցին, իրաւունք ունին արդեօք կողմնակի անձինք առանց հեղինակի կամքի արգելք դնել որևէ անձի գրուածքի վրայ, այդ մասին կարող է երկու առարկութիւն լինել. նախ օրէնքի տեսակէտից և երկրորդ մարդկային առողջ դատողութեան և բարոյական կողմի։ Ռուսաց օրէնքից մեզ յայտնի չէ այնպիսի մի յօդուած, որ իրաւունք տար ում և է մէկին, թէկուզ ամենամօտ բարեկամին, բռնանալ ուրիշի մտքի

վրայ և գրաքննչի դեր կատարել. ընդհակառակ ինքը տէրութիւնը վերացրեց գրականութեան վրայից պաշտօնական գրաքննութիւնը, ինչպէս ուրեմն թոյլ կտայ նա մէկին ճնշում և բռնութիւն գործ դնել միւսի մտքի վրայ։ Գալով բարոյական կողմին՝ հարկաւոր է արդեօք մանրամաս խօսել այստեղ առողջ մտածողութեան և բարոյական հասկացողութեան մասին. ամեն մի համբակ շատ լաւ գիտէ, որ անձի անձեռնմխելիութիւնից գերազանց է մտքի անձեռնմխելիութիւնը և քանի՞ քանի՞ մտքի մշակներ աւելի լաւ են համարել կախաղան բարձրանալ կամ իրանց կեանքը վերջացնել տաժանակիր աշխատանքների մէջ, քան մի բոպէ թոյլ տալ, որ միտքը, գաղափարը կամ խօսքի ազատութիւնը վտանգի ենթարկուի։

Մուրացանի ժառանգները իբրև Եւրոպայում սնուած և մեծացածներ պէտք է շատ լաւ գիտենային այս բիւրեղացած ճշմարտութիւնը և այնպէս վարուէին իրանց տաս տարի չտեսած հօր յիշատակի հետ։

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՇԻՒԸ

Համաձայն իմ խոստման առաջ եմ բերում այստեղ տպագրութեան հաշիւը.

ՄՈՒՏՔ

Ստացել եմ պ. Եփ. Միրզոյեանից. . . .	400 ռ.
„ Բժ. Բ. Նաւասարդեանից Մուրացանի բժշկութեան համար	5 ռ.
	405 ռ.

ԾԱԽՔ

25 մամուլ շարել [1] և 1500 օր. տպելը . .	250 ռ.
Շապիկը տպելը	4—
Պատկերը տպել [2].	5—

1. Մուրացանին տուած հաշուում մամուլի շարել և տպելը որոշուած է 11 ռ. ուրեմն այժմ 25 ռուբլի զեղջ ենք արել։

25 Մամուլի սրբագրութիւնը արժէ առնուազն 50 ռուբլի, որ մենք չենք պահանջում։

2. կլիշէն Մոսկուայում պատրաստելու ծախքը վերցրինք մեզ վրայ։

Թուղթ Դիտ. ընկ.—ից 41 օզմա . .	266—
Պատկերի թուղթ.	4—
Շապկի թուղթ	5—65 կ.
Թղթակազմ	18—75

ԳԻՐՔԸ ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԾԱԽՔԵՐ

Շապկի թուղթ	5 —65—
» Տպելը	4
Սպիտակ թուղթ	1 —35—
Սպիտակ երես տպելը	3 —50—
1500 գրքից մի մամուլ դուրս կտրել և նորից կըպցնելը.	3 —
	570 ռ. 90 կ.
սրանից հանելով մեր ստացած	405 ռ.
մնում է	165 — 90

Մենք ստանալիք ունինք այդ գրքից 165 ռուբլի 90 կոպէկ. այս հաշուից պ. Տ. Նազարեանը վաճառելով 55 օրինակ Գուտտեմբերգ գրատան վրայ՝ 55 ռուբլի վճարեց մեզ, ուրեմն մեզ այժմ հասնելու է 111 ռուբլի 90 կոպէկ։

ԳՐՔԵՐԻ ՀԱՇԻՒԸ

Տպուած է 1500 օրինակ.

սրանից տուել ենք Տ. Նազարեանցին 20 օր.
(անդորր № 44)

տուած է Գուտտեմբերգին . . . . . 55 օր.

գրաքննական կոմիտէին . . . . . 15 օր.
(անդորր. № 52)

90 օր.

մեզ մնում է 1410 օրինակ, որ առաջարկում ենք ժառանգներին ստանալ մեզնից և վճարել տպարանին պարտք մնացած 111 ռուբլի 90 կոպէկը։

Դիտ. Աղանեանց ա. f.

ԱՐՇ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ. «ԽԱՒԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ» (ՊԱՏՄՒԱԾՔՆԵՐ) ԵՐԵՒԱՆ, 1910

Պ. Շահնազարեանը երիտասարդ գրող է և առաջին անգամ հանդէս է գալիս իր պատմուածքների ժողովածուով, որոնք թուով ութ հատ են, բոլորն էլ գիւղական կեանքից վերցրած։

Երիտասարդ հեղինակը իր պատմուածքների մէջ աչքի է ընկնում որպէս լաւ ծանօթ գիւղական միջավայրի կեանքին ու սովորութիւններին. սակայն նա հարազատօրէն չի վերարտադրում այն, ինչի որ մօտենում է. նրա նկարագրութիւնները անփայլ են, չունեն կենդանի գունեղ պատկերաւորութիւն և խոր դիտողականութիւն։ Պ. Շահնազարեանն իր գրուածքներում աւելի շուտ քննադատ է քան նկարագրող, դատաւոր՝ քան փաստերով զինուած փաստաբան։ Նա հերոսի մէկին ուզում է դուրս բերել իբրև «խեղճ» մարդ, իսկ միւսին իբրև «անօրէն վաշխառու». բայց փաստեր չի տալիս դրանց համար, գեղարուեստօրէն նկարագրելով չի ապացուցանում առաջինի խեղճութիւնը և երկրորդի անօրէնութիւնը, այլ միայն բաւականանում է չոր ու ցամաք պատմելով, որ այս ինչը խեղճ մարդ է, այն ինչը անօրէն և այլն։ Առանց փաստերի, առանց ընթերցողներին ծանօթացնելու իր հերոսների բնորոշ յատկութիւնների հետ, պ. Շահնազարեանը հարլիկներ է կպցնում Սերոբի, Աւօի, Մանուկ աղայի և միւսների ճակատին։

Պ. Շահնազարեանը լաւ կանէր, եթէ միայն բաւականանար գեղարուեստօրէն նկարագրելով և փաստեր արձանագրելով, առանց դատավճիռներ ու ցաւակցական ներբողներ կարդալու։ Նրա պատմուածքների մէջ զուգընթացաբար միշտ երևում են պատմիչը և դատաւորը, իսկ դրանց լայն ստուերի տակ միշտ ծածկուած է մնում գունատ նկարագիրը։ Պ. Շահնազարեանը գլխաւորապէս գրում է արարատեան բարբառով, և միայն տեղ-տեղ գրական խառնելով, որը ծանրացնում է աւելի, առանց այն էլ ծանր ոճը։

«Սերոբենց ածերը» պատմուածքը տպաւորիչ է, բայց տեղ տեղ գեղարուեստական չափը ընկնում է։ Լաւ է «Մարանի դեղապետը», թէև դարձեալ գեղարուեստական ամբողջութիւնը չի պահպանուած։ «Մացակի լօշը» սիւժետը լաւ է, բայց լաւ չէ մշակած։ Կենդանի պատկեր է «Կարմիր ճիպոտը»։ Լաւ է նաև «Քրիստոսի սիրուն» աւանդութիւնը։

Ընդհանուր տպաւորութիւնը այն է, որ պ. Շահնազարեանը սիրում է թշուառների կեանքը նկարագրել (և շատ էլ լաւ է անում).

երևում է, որ պարոնը շնորհք ունի. մնում է, որ նա կեանքի փորձերով և խոր դիտողականութեամբ ուսումնասիրէ կեանքը և դրանով զարգացնի իր փոքրիկ տաղանդը։

Խորհուրդ կտայինք պ. Շահնազարեանին ուսումնասիրել Գլեբ Ուսպենսկուն, իբրև նարօդնիկ գրողի։

Ֆ.-Մ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Գ. Մելիք—Կարագեօզեան. Մարդու կազմուածքը, կաղմալուծուող և այլ պատկերներով. Թիֆլիս 1905.

М. Алавердянцъ. Тесть А. С, Грибоѣдова, кн. Ал. Чавчавадзе. С. П. Б. 1910.

Malachia Ormanian. L'edlise Arménienne. Paris 1910.

Ժամանակաւոր կանոններ Հայոց թեմ. Հոգևոր Դպրանոցների մասին։ 1910 Թիֆլիս

Avetis Aharonian, Bilder aus Türkisch—Armenien, Übersetzt von Artak v. Smbatianz. Etschmiadisn 1910

Եղիա տէր Հայրապետեան. Զանգէզուր. լեգէնդական պոէմա, Գորիս, 1910

Տեղեկագիր Թիֆլիսի Հայ-գիւղատնտեսական և տնայնագործական ընկերութեան 1909—10 Թիֆլիս 1910։

Վ. Ա. Բառգիրք լատին և օսալազգի դարձուածների Թիֆլիս 1911 գ. 75 կ.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ ականաւոր հայ գրագէտ Կ. Կոստանեանցի «Հայագիտութիւնը արևմտեան Եւրոպայում» նոր աշխատութիւնը։ Հին սերունդի նշանաւոր գործիչներից մէկի այս գրքի մասին մենք առանձնապէս պիտի գրենք, իսկ այժմ այս գրքի մէջ բերած Տուրնըֆօրի կարծիքը հայերի մասին կարելի էր կապել ներկայ կեանքի հետ։ Տուրնըֆօրը ասում է les Armeniennes les meilleurs dens du monde այսինքն՝ «Հայերն աշխարհիս լաւագոյն մարդիկն են»։

Հայերը ի հարկէ աշխարհիս երեսին ամենալաւ մարդիկը չեն. բայց որ հայ ժողովուրդը բոլոր միւս ազգերից ամենից հալածուած ժողովուրդն է, որը չէ կորցրել տակաւին մարդկային շատ իդէալական յատկութիւնները, այս անկասկածելի է։ Քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ հայերը մի զօրեղ ձգտում են ունեցել դէպի Եւրոպա և եւրոպական քաղաքակրթութիւնը։ Շատ թանգ է արժեցել հայերին այս ձգտումը, բայց նրանք մինչև այսօր յամառ կերպով սպասում են Եւրոպայից գալիք հայկական մեսսիային։ Կիլիկիայի Ռուբինեանց կարճաւոր թագաւորութիւնը ոչ միայն եւրոպական ֆէոդալիզմի կարգն ու կանոնը ընդունեց, այլ նոյն իսկ պատրաստ էր կաթոլիկ կրօնը ընդունելու։ Երբ որ ընդմիշտ մեռաւ հայի յոյսը վերաստեղծելու իր քաղաքական անկախութիւնը, հայը շարունակեց իբրև անհատ պահպանելու իր ազգային գոյութիւնը և չմեռաւ նրա մէջ հասարակօգուտ հիմնարկութիւններ հաստատելու ձգտումները։ Թիւրքիայի ազգային սահմանադրութիւն, Պոլսի ազ-

դային հիւանդանոց, Լազարեան ճեմարան և նոյնիսկ վերջին յեղափոխական շարժումները, որ սակայն անմիտ տակտիկայով էին ղեկավարուում, հայի հոգու իդէալական առանձնայատկութիւնների արդասիքներ են։

Հայ ժողովուրդը իւր բոլոր շրջապատող դրացիներից միշտ աւելի առատաձեռն է եղել հասարակական հիմնարկութիւնների օգտին զոհաբերելու։ Այս օրերս մեռաւ մի հասարակ գրաբաղդի վաճառական՝ Իսահակ Թադէոսեան, որ կենդանութեան ժամանակ շատ քիչ էր յայտնի. բայց բանից դուրս է գալիս, որ նա ոչ միայն մի քանի տասնեակ հազար մանէթ է նուիրել Ղարաբաղի թեմական դպրոցին՝ այլ որ ունի աւելի արժէքաւոր կտակ։ Էլ չենք խօսում յայտնի բարեգործ Մանթաշեանի բազմաթիւ զոհաբերութիւնների մասին։ Բայց ո՞վքեր են հայ ժողովրդի և հայ ազգի վաստակոյն յատկութիւններով օժտուածները, օտարների առաջ հային վարկաբեկ անողները։ Փառամոլութեան և շահասիրութեան համար կուսակրօնի զգեստը հագնող մարդիկ և բիւրոկրատիական հակումներով համակուած հայ ինտելիգենցիան։

Ինտելիգենցիային են պատկանում «Դրօշակ»-ի խմբագրութեան անդամներն ու Ս. Սպանդարեանցը, որոնցից մէկը մեղադրուում է զրպարտութեան, իսկ միւսը մատնութեան մէջ։

Եւրոպայում հրատարակուող «Դրօշակ» լրագրի մէջ, որ Դաշնակցական կուսակցութեան կենտրոնական թերթն է, տպուած է եղել մի խիստ յօդուած, որով ամբաստանում են «Նոր-Դար» լրագրի խմբագիր Ս. Սպանդարեանցին, իբր թէ նա 6 տարուց ի վեր գաղտնի լրտեսի պաշտօն է վարել, յայտնի վարձատրութեամբ, ռուս կառավարութեան որոշ հիմնարկութեան մէջ։ Մենք այդ յօդուածը չտեսանք, բայց կարդացինք հայ և ռուս բոլոր թերթերում թեր և դէմ բազմաթիւ յօդուածներ այդ մասին։ Ինքը Սպանդարեանցը հանդէս եկաւ մամուլի մէջ և բողոքեց, որ այդ ամենը զրպարտութիւն է և գնաց Եւրոպա Դաշնակցութիւնը մեղադրելու զրպարտութեան մէջ ընկերական և պետական դատարանների միջոցով։ Հասարակական կարծիքը և մենք դրա հետ հակուած էինք իրօք զրպարտութիւն համարել այդ ծանր մեղադրանքը, երբ մամուլի մէջ հանդէս եկաւ Մենշիկովը, որ նախկին

ծառայող էր պետական գաղտնի ոստիկանութեան մէջ և կրկնեց «Դրօշակ»-ի սասծները; աւելացնելով, որ ինքը անհերքելի փաստեր ունի այդ մասին։ Այժմ ամենքը սպասում են անհամբեր, թէ ինչ ցոյց կտայ պ. Սպանդարեանցի յարուցած դատը և, իր ասելով, ձեռքին ունեցած մեղադրանքը ոչնչացնող փաստերը և ինչ՝ Մինչիկովի սպառնացող գրութիւնը։ Բայց մինչև խնդիրը կպարզուի, տեսնում ենք, որ մեր ինտէլլիգենցիայի շնորհիւ հանդէս են հանւում հայի վատ հակումները, լինի այն մէկ կողմի զրպարտութիւնը թէ միւս կողմի լրտեսութիւնը։

Ռոստովի մօտ Միհրանի սպանութեան վրայ մանրամասնութիւններ է տալիս Ազատամարտը։ «Սեպտ. 4-ին եկած էր Ռոստով, ամբողջ օրը մնաց ծածուկ և զգուշաւոր, Սեպտ. 6-ին, իրիկուան 9-ի կառախումբով կ'վերադառնար իր բնակատեղին, Ռոստովի մօտ ռուսական գիւղ մը, ուր պիտի սպասէր մինչև Դաշնակցութեան դատավարութեան սկսիլը։ Կառախումբին նոյն վագոնին մէջ կ'նստի Դաշնակցական թէրօրիստը, կիսնագիսթի տարազով։ Դեռ առաջին կայարանը չհասած, տէրօրիստը կը մօտենայ Միհրանին և «Միհրան, պաշտպան է ինքզինքդ, պիտի սպաննեմ քեզ», կ'ըսէ. քանի մը վայրկեան վիճաբանելէ ետք, որու միջոցին Միհրան մէկ ձեռքով զէնք հանել կ'պատրաստուի ու միւսով տէրօրիստին ձեռքը բռնել, այս վերջինը հրազէնը կ'պարպէ Միհրանի կուրծքին վրայ, հարցնելով. «Միհրան, կ'զղջաս ըրածներուդ վրայ»։ Կառախումբը կանգ կ'առնէ, իրարանցում կ'սկսի. տէրօրիստը օգտուելով այս խուճապէն, կ'անհետանայ մութին մէջ։ Միհրան ժամանակին եղած էր Դաշնակցական զինուոր, 1906—907-ին կազմեց դաւադրական խումբ մը, «Զինուորական խորհուրդ» անունով, նպատակ ունենալով սպանել Դաշնակցական բոլոր ղեկավար անհատները Կովկասի մէջ, վերցնել գոյութիւն ունեցող Մարմիններն և անոնց տեղ հաստատել իր թիկտատորութիւնը։ Այս նպատակն իրագործելու համար կատարեց կարգ մը ոճիրներ։ Դաշնակցութեան 1907-ի ընդհ. ժողովը արտաքսեց զինք Դաշնակցութեան շարքերէն։ Ազատամարտ՝ աւելցնէ որ Միհրան միակ վկան է, այսինքն անորակելի մատնիչն է այն քանի մը հարիւր Հայերուն որք իբրև Դաշնակցական ամբաստանուած՝ բանտարկուած են և երկու տարիէ ի վեր կ'տառապին Նովոչէրքասքի բանտի մէջ։ Երեք մահափորձ եղաւ իրեն դէմ։ Անգամ մը Արմաւիրի մէջ, ուր թէև ծանրապէս վիրաւորուեցաւ, բայց հիւանդանոց փոխադրուելով դարմանուեցաւ։ Երկրորդ մահափորձը կատարուեցաւ Տփղիսի մէջ, անցեալ դեկտեմբերին, որի միջոցին դարձեալ երկու վէրք ստացաւ, իսկ երկու տէրօրիսթները շրջապատուելով գազաքներէն կռուեցան և յետոյ անձնասպան եղան։ Երրորդ մահափորձը եղաւ այս վերջինը»։

ԼՈՒՐԵՐ

Պարիզից վերադարձաւ Թիֆլիս մեր վաղեմի աշխատակից պ. Շիրվանզադէն և այսուհետև նորից կաշխատակցէ և, մեր թերթին։ Առաջիկայ համարից «Լումայ»-ում կսկսենք տպել նրա «Աւերակների վրայ» դրաման, որ դեռ հրատարակուած չէ ոչ մի տեղ։

Էջմիածնում կատարուեց եպիսկոպոսական ձեռնադրութիւն. ձեռնադրուեցաւ Գաղատիայի առաջնորդ Բարգէն, Պանտորմայի առաջնորդ Կարապետ, Կարինի առաջնորդ Սմբատ, Եգիպտոսի առաջնորդ Մկրտիչ, Կտուց անապատի վանահայր Ստեփան, Երուսաղէմի պատր. փոխանորդ Դանիէլ վարդապետները, իսկ ռուսահայ վարդապետներից՝ Երևանի փոխանորդ Խորէն և Թիֆլիզի կոնսիստորի անդամ Եփրեմ վարդապետները։

Բարգէն սրբազանը Արմաշու սան և ապա նոյն Դպրեվանքի տեսուչ, աշխատակցում էր «Լումայ»-ին, յայտնի է իւր գրաւոր վաստակներով, որոնցից առանձին գրքով բացի ուրիշներից տպուած է նրա մի ընդարձակ գործը՝ Եղիշէի ուսումնասիրութիւնը։

Թիֆլիսում կայացաւ «Թեմական խորհրդի» ժողովը, ուր ընտրուեցան Ներսիսեան դպրոցի համար լրացուցիչ հոգաբարձական ընտրութիւններ։

Ն. Նախիջևանում կատարուել է Դր. Զալխուշեանի փաստաբանական գործունէութեան քսանհինգամեակը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՔԱԽՏԻ ՆՈՐ ԴԵՂ

Շվեդական բժիշկ, դոքտոր Պֆաունէնշտիլը փորձեր է կատարում իր գտած նոր դեղով կոկորդի և թոքերի հիւանդութեան դէմ։ Առաջին փորձերը խիստ յաջող են անցել և շվեդական բժիշկները յոյս ունեն, որ նրանց պաշտօնակցի յայտնագործութիւնը մարդկութեան ձեռքին մի հզօր միջոց կտայ պատերազմելու թոքախտի՝

երկրիս ժամանակակից բնակիչների այդ ամենաչարթշնամու դէմ։

Դոքտոր Պֆաուենշտիլի դեղը Էրլիխի դեղինման մի քիմիական միաւորութիւն է, որ սակայն գործ է դրուում հիւանդի վրայ ոչ թէ ներարկումով, այլ ներսից ընդունելով և ներշնչումով միաժամանակ։ Պֆաուենշտիլը հիւանդին տալիս է երկու համեմատաբար չեզոք դեղեր, որոնք միաւորուելով նրա արիւնի մէջ՝ առաջ են բերում մի տեսակ քիմիական միաւորութիւն, որ ուժեղ կերպով սպանում է թոքախտի բացիլները։

Դոքտոր Պֆաուենշտիլը հիւանդներին տալիս է մանշային նատրի (іодист. натріи) լուծուածք կամ փոշի, իսկ այնուհետև, փոքր ժամանակ անցնելու յետոյ, ներշնչել է տալիս օզոնացած օդ կամ թթուածին։ Օզոնի ներգործութիւնից մանշային նատրի վրայ հիւանդի յօրինուածքի մէջ գոյանում է ազատ մանիշ, որ ընկնելով թոքերի կամ կոկորդի հիւսուածներից մէջ, կատարելապէս ոչնչացնում է բացիլները։

Շվեդական բժիշկների փորձերն ապացուցել են, որ այս եղանակով առանձնապէս յաջող է բժշկւում կոկորդի թոքախտը, ուր աւելի հեշտ է ներս թափանցում շնչած օզոնը։

Թոքերի թոքախտը, եթէ միայն թոքերի կատարներն է հիւանդացել, բժշկւում է, բայց ինչքան որ հիւանդութիւնը տարածւում է ներքև, այնքան Պֆաուենշտիլի դեղը թուլանում է, որովհետև օզոնը միշտ չի կարողանում թափանցել թոքերի խորքերը։

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԳԻՒՏ

Մի ճարպիկ ամերիկացի, շահագործելով հասարակութեան սէրը դէպի արկածալից վէպերի ընթերցանութիւնը, տղամարդու մի նոր տեսակ շապիկ հնարեց, որ մի օձիքը բաղկացած է եօթ առանձին թղթէ թերթերից։ Այս թերթի ետևի երեսին վէպ է տպած, իսկ առջևի կողմը ծառայում է ինչպէս շապիքի օձիք։ Շապիկները թուահամարած են, այնպէս որ իւրաքանչիւր ընթերցող գիտէ, թէ ինչպէս պէտք է գտնի իրան հարկաւոր վէպի շարունակութիւնը։ Բացի սրանից, հնարողը իր տպած նիւթերը այնպէս է դասաւորել, որ ամեն մարդ, ով երկու շապիկ է գնում, ունենում է արդէն մի ամբողջ վէպ։ Այս գիւտի օգուտը կայանում է նրանում, որ այդպիսի շապիկ ունեցողը կարող է ունենալ մաքուր օձիք եօթն օր շարունակ և ամեն օր մի մի թերթ բաց անելով և՝ իր տրամադրութեան տակ գրաւիչ ընթերցանութիւն մի ամբողջ շաբաթ, որովհետև այս շապկի հնարողը գրաւել է իր օձիքների համար այս կողմից քիչ շատ տաղանդաւոր գրողներին ու գրագէտներին և վճարում է նրանց ամենաբարձր վարձատրութիւն, միայն թէ վէպերը կարդացուին յափշտակիչ ոգևորութեամբ։ Այս շապկի հնարողը հաշուում է ի հարկէ այն, որ շատերը, ընթերցանութեամբ յափշտակուած օրը մի քանի թերթ կպոկեն իրանց օձիքից և շապիկը շուտ շուտ կփոխեն, ցանկանալով շուտ կարդալ հետաքրքրական վէպը։ Այսպիսով, հետաքրքրական վէպերը բազմաթիւ բանուորներին միևնոյն ժամանակ կսովորցնեն մաքրութիւն և սպիտակեղէնի շուտ շուտ փոխելուն։

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կտեսնի

ԵՂԻՇԷԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Աշխարհաբար նոր թարգմանութիւն

ԳԻՒՏ ԱՂԱՆԵԱՆՑ Ա. Գ.

15-Դ ՏԱՐԻ

1910

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1910 թուին Լումաան լոյս է տեսնում իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ, հաբկաւոր դէպքերում, կարուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 *ռ.*, *կէս տ.* 4*ռ.*
Արտասահման „ 8 „ „ 5 „

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՂՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.